





'2004



266  
Ա-79

351-ԱՀ

# Ա Ր Ա Մ Ա Յ Ի Ո

Ա Ր Ե

Ա Բ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Մ Ա Յ Ի Ո

Ա Ր Ա Յ Ա Վ

Ի Պ Ա Ր Ա Ն Թ Ա Ր Ա Յ Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի

Ա Վ Ե Տ Ա Կ Ա Ր Ե Ա Յ Ի Ց

—000—

Ի Հ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի

Կ Ա Մ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի

Ա Վ Ե Տ Ա Կ Ա Ր Ե Ա Յ Ի Ց Ա Վ Ե Տ Ա Կ Ա Ր Ե Ա Յ Ի

Տ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի

Ի Վ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի




## Ի Ց Պ Ա Ր Ա Ն Թ

Ա Ր Ա Յ Ա Վ Ա Ր Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի Ո Ւ Ա Յ Ի

## Ի Կ Ա Լ Ի Կ Ա Ժ Ա

1846

ԿՅ 94- ԱՄ



Դ-69

Ա Զ Դ

Պատմութիւն Արամացիսայ ՚ի սկըզ-  
բանէ անտի տռաջադրեալ ելով գրիլ  
վասն Ազգասէր Օրագրին , վասն ո-  
րոյ՝ լստ Հանգամանաց նորա փոփո-  
խեցաւ և սա , մանեաւանդ յոճ շա-  
րադրութեանն . որ յաշխարհաբառէն  
առ սակաւ սակաւ ՚ի գրաբառն վերա-  
ծաւ : Եւ զի՞ լստ տպագրութեանն  
՚ի յիշեալ Օրագրի , փոխադրեցաւ-  
րանն մի և նոյնալէս և յայս գրքոյկ ,  
վասն որոյ և նոյն ոճ մնաց և ՚ի սմին ,  
Ակն ունելի է ուրեմն զի Պատ-  
ուելի Անթերցողն՝ խմանալով զպատ-  
ճառն , մեզագիր ոչ եղեցի վասն նոր-  
եղանակ ոճոյն . որ թերես և ձեռնոտու-  
եղեցի նորավարժիցն Հասողութեան :

## ԵՐԻ ԲԱՐԵՄԻՏԻ ԸՆԹԱՔՑՈՒՅ

Ե ժամանակու առջեւ զիշտ թշու ծագեցաւ ՚ի դիմ  
երիսոց բանապիտոց, այսու մին պնդեց ուն բանա-  
պիտոց առաջնուն պատուիլ վնաս ուն զան ընթացէր հա-  
տու Տառ, հասապարաւեան. և միւսն ամին ներքանի  
գլուխու շնորհուենէ առաջ ծագելոց : Ռանդի՛ առա-  
ջեր զերչին, թի ամենայն ինչ իսկական իու զբա-  
րձնուածնենէ Տառըոց. այս ենթ վարժեացն ու ՚ի Տառ-  
իսուննեն, ունին իսրէ այսունիտ առանիլ բարա-  
նեան Տառ, նար : զի այնպիսին՝ միայն ըստուիլ զբա-  
րձն ՚ի բարձ աման Տառ, իսրըօ, և զիստունն ՚ի բաց  
ընկիննու : ՚ի պահապարաւենէ Բարձ Տառըուննուն՝ առընմ,  
ծագի զնամն . առադի՛ ցարդողիսի դեղու, և ունին  
Տառեան շերջ մասն ՚ի պարզաւանաց :

Ե՞՞ զի ու շիշտներ առաջին ՚ի խրծեաց իսրաց,  
առաւելեաց ցերիրանաւ իսրանաց մասն վճառահարաւինուն  
ընթեցապաց : Ցայս սովո՛ ելու վիտ միմիս . Տա-  
ռայցանիշ արդ զարաւիլիսաւ գործ Բարձաւիտ առեզ-  
ծաբանաւեան ՚ի անուստիւն բարձ Տառըուննուն ցերու :

ՊԱՐԱՀԻՆԱԿԱՆ ԹԵՂԱՎՈՐ

Խ.:

- |      |   |
|------|---|
| Ա.   | Եւագիուսաւիւն Արամայիսոց և Ճամանակի<br>ի աւագութեան Պարսկա Աշխագիւն : 12 :              |
| Բ.   | Տեսաւիւնուն բարեկամոց և նոր Վարդապէտ<br>առաջնուն : 7 :                                  |
| Գ.   | Փափառավիւն բարունու Արամայիսոց և աշ-<br>խագիւն : 13 :                                   |
| Դ.   | Պարմագիւն Տեր Յասուին : 19 :  |
| Ե.   | Եսու Պարսկա Աշխագիւն : 25 :   |
| Զ.   | Եսու Պարսկա Բաբիւնիւն և Պարսկա Պարսկարեանուն:<br>Աշխագիւն ի բարունու Տեր Յասուին : 31 : |
| Լ.   | Եւ գերաւ և շահագիւն իւնուն և զգիւնուն : 35 :  |
| Ը.   | Եւագիուսաւիւն աշխագիւնոց և Եւագիուսաւի<br>աշխագիւն Առաջարարունին : 44 :                 |
| Ժ.   | Պարմագիւն Արամայիսոց ի բան Պարսկա Աշ-<br>խագիւն : 51 :                                  |
| Ժ.Ը. | Չս և իւրաքա Պարսկա Աշխագիւն : 58 :  |
| Ժ.Ը. | Եսու Արամայիսաւիւն Պարսկա Զարմայրուց և<br>նոր աշխագիւն Արամայիսոց ի բան Նորա : 65 :     |
| Ժ.Ը. | Պարմագիւն Պարսկա Վահագուն պարմայրուց<br>ի բարունուն . և իւրաքա Տեր Յասուին : 71 :       |
| Ժ.Պ. | Եւագիուսաւիւն գրոց և հետք Միսակարաց : 77 :  |

- Ժ.Ռ. · Հայութակ Արքիապատրիարքին Ալեքսանդր Տարբաղաջանին  
 Աղոթութեաց : 83 :
- Ժ.Ե. · Ն.Խարագրագիւղ Մանեական Գիւղ : 88 :
- Ժ.Զ. · Օհաննա Արքայացին և պատմագիւղ անցից,  
 Տառապ առաջը նորու : 92 :
- Ժ.Է. · Պատմագիւղ Կ.Ա. Թաղաց : 96 :
- Ժ.Ը. · Եսու Եփակաց, Բարեկաց, Բառվեաց, Ասա-  
 ընթեաց և այլոց առաջաւոց Հնդիապանեաց : 105 :
- Ժ.Թ. · Եսու Բարքապատմաց, Մարտքառու և Կալ-  
 իսթեաց : 113 :
- Ի. · Գ.բառար Հայութակ Արքայացին, Կիւի Ելա-  
 նէլոց ի Դորագանէ : 125 :
- Ի.Ա. · Զազնիւ պարապատման Նախաճաշաց Բազեաւ,  
 Աբքէնա, Արքայացին ի Ջեժութիւնէ . և առա-  
 ջուրէ Բնուիւլ առանցին : 131 :
- Ի.Բ. · Մատասանն Արքայացին, Շեշտէմ Բնութիւնն.  
 և աղետաւի Հեղուանն անդի : 138 :
- Ի.Գ. · Հիւանդագիւղ Արքայացին . և իրադի Կո-  
 սութւ և ինի անդի : 144 :
- Ի.Դ. · Յայտնաւիւն յապազան պատմաիսնաց, Գընց -  
 և Դարձ Պարսկ Աւանդնի : 150 :
- Ի.Ե. · Եւ Արքայացին, և Խառնիութիւնն : 155 :





# ԵՐԵՄԱՆԻ ՅՈՒ



ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐԴ և ՏԵ

ՈՒ որ երբեք ծով մտէլ չլինի, չէ կարող երբեք  
զգալ զքաղցրութիւնն որ մին ճանապահորդ կ'զգայ  
յիտ նաւահանգիստ հասանելոյն։ Ծովի սևագոյն  
ջուրն որ սկսումայ սպիտականալ, որոք թռչուն  
որ երեմանայ, և կամ մին ձիւդ ջրի երեսին՝ որ-  
քան են մարդոյս սիրան ու բախացանում։ Մոռա-  
ման է իւր կրած ըոլոր անհանգատութիւնն. սրում  
է աշք՝ ականջք և միտք, համարում է մոքումն  
թէ քանի՞ վայրեկնում պիտի հասանեն, թռչի լսել  
թէ ջրի խորութիւնն քանի՞ զրկաշտի է, և ականում  
է որ զուցէ զցամաք երեխին ինքն յառաջ քան զամե-  
նեսին տիսնի։ Թէ կամիցիս ճաշակել դօսդցրու-  
թիւն զգացմանց, մուտ և անս նեղաւթիւն կրեա-  
բնակութեան, շրջելոյ, և թէ ճանապարհորդու-  
թիւնն երկարաձգի, ու աելիաց և ջրոյ։ Քանի որ որոք

թարմ՝ պոռւղ կամ արմակք մի՛ ուտել, և՝ ՚ի պակասութենէ, կարմըերանդ և ժանդահամ ջուր ըմպեր, յեսոյ դու ևս ինձ հետ կ'կանչես.

Ողջոյն լոգ քեզ աւետաբեր թռչունդ ծովայինն  
և ձեզ ճիւղ և տերե ծառոց, ձե՛զ ևս ողջոյն։  
Հազարանի բարութիւնք կան ՚ի վերայ աշխարհի,  
որոց յարգն շատ փոքր է հասկաման մարզս, մինչ  
չն որ չի լնկաման նեղութեան մէջ։

Ամենայն մին բան որ յառաջ իւր աչքումն ա-  
նարգ և արհամարհ էր երեւում, յայտնի քարոզումայ  
իւրն իւր Մարդասէր Ստեղծողի խնամքն և բա-  
րիքն։ Մարդ՝ որ միշտ յաջողութենում է լինում,  
և ինչ իրի որ ցանկաման այ խսկոյն գտաման այ, այն  
մարզն ( մի զարմանար ) երջանկութիւն կորցանում-  
այ։ Քանի որ նեղութեան և զանութեան համե-  
առած չլինի, ոչինչ քաղցրութիւն իւրն ախոր-  
ծելն չի լինելէց։ Փոքր փոքր իւր ախորժակ այս-  
ինքն մասողութիւնն ասնուլ կտոյ, կ'սկսի հա-  
մեմուք անու շացանել իւր Ճաշտելիքն, այլ զեռ-  
ես քաղցրութեան համեն չի գզալ։ Քանզի գեռ-  
նեղութեան Ճաշտեկն չի առէլ։ մին փոքր զառն զեղ  
քսեան իւր լեզուին, յետոյ ջուրն իւրն օշարակ  
այսինքն շարբան կթուայ։ Այսորիկ մասն՝ միը  
Մարդասէր Ստեղծողն մին դեղ է պատշառակէլ, որ է  
նեղութիւն։ դառն, շատ զառն զեղ։ Քանզի ամե-  
նայն զեղ հիւանդին զառն է և անախորժ, այլ  
վերջումն առողջացուցիչ։ Երանի այնմ, որ

խրառ արհամարհելց չի . այլ՝ թէ և սկիզբն դառն  
թուայ իւրն , համարի որպէս դեղ առող ջացու ցիչ :  
Երանել այնմ , որ զկնի առող ջանալոյն զգու շանայ  
կրկին չհիւ անդանալ : Երանել այնմ , որ կ'զգու շա-  
նայ իւր ախորժակն կրկին չտերիի , այլ կրա-  
ւականանայ ամենայնիւ , հասասակով ՚ի մասի թէ  
բարերար Ատեղծողն իւր համար յոյզդքանեոյ աւելի  
բարի չէ դառէլ : Սակայն երկու անսակ զգու-  
շամանայ անւանէ և . Հարկաւոր բանում ևս , յետոյ  
իւրնից յետ իւր բոլոր զգու շութիւնն պէտք չի  
դուման իւր յետամենայից համար . և միւ ան՝ նեղու-  
թենից միայն իւրադէլ զգու շամանայ ըստ Հարկին՝  
այլ միւնցին ժամանակումն պէտք այ զուման ըստ  
իւր իտրակունեան իւրայնոց ամենէշան ըստ պիտե-  
լոյ : Սա և կառարեալ մարդն :

Այսու . ի՞նչ բանի մերայ սկսեցի , և ի՞նչ բանի  
մերայ եմ խօսման . ծովին որ աեղ , քարոզութիւնն  
որ . “Ներողասերա ընթերցող ներողամբութ լեր առիս-  
իմ պէս կարծեմ այլոց ևս հանդիպէլ լինես որք  
խօսակցութենում մի և նոյն պէս լինեն մար-  
ման . այսինքն սկսելով մին բան և վերջ տալով այլ  
իմն բան . և առանց միտ զնելոյ յարմարութեան  
որ պիտի ընդունել զուարձալի չի լինում . քան-  
զի թէ խօսողն միտ չզնի իւր խօսակցութեանն ,  
ունկնդնողն զօրայ կարելի որ միտք զնի : Վասն  
որոյ ննդրեցի ներեցես սիրով , և ունկնդիր լիցիս

պատմութեանս , որ քանի տարով յառաջ պատմահած չշմարիտ պատմութիւն է :

**Զ**ինի կեսօրին հասայ իւ : Իջի ի նաւեն , և յերեկոյացեալ հասայ իւ ցամաք :

Բազմութիւն ժողովեցան ի նաւակն իմ ըարձեալ ունելով զուազոյն կրելիս , որ յետոյ իմացայ՝ կոչէ կու-ի . 1. թայլ տուր ինձ ընթերցող , նկարագրել ասու իմ զգացմունքն սկզբի : Առանց հասկանալոյ զմի բառ զոր զոչէին ուսողք բերեն՝ շուարած մեացէլի , քանզի անց չասյին ինձ անցանելոյ : Մին գոչէր Սունէբ , միւսն ձեռն զնէր ի ճակառի , և ճանաչելով որ ես նորեկ տարական էի , ջանային մի քան զմի ընդունել զիս ի կրելիս իւրեանց , յուսառի որսալոյ զմեծազոյն վարձ կամ պարզե : Ի վերջոյ քաջ կշռեալ զիս , բռնի մուծին ի մի ի կրելիաց . և իմանալով որ ես Հայ էի . յուն յուն , յին յի . յուն յուն , յին յի եղանակաւ առեալ զիս տարան : Առար . հեր տանեն զիս . խե՛ղչ Արամայիս : Մեր երկրումն այսպիսի բան ահօնալ էի . վասն

1. Փու-ի ու է պատգաւրավ նշանակէ բաւ-լուի այսինուն մին չպարզ Տառն լաւ տառիւց , որեւէ հա- զոր տառիւց : Անուշի ձեռ այդուն գառնորոյ արժու- զունեան սրբաւունքոց ուշ լինելու , իշխեին այն ծա- յալուի Տառտիի մին դու-ի պահել . և մեր Կաթոնին և Յիդ միջոց այս Յուն պահեցին ի ժամանակուն , յուրաքանչյան զինուն իշխեուն :

որոյ ձեռու եղի սրախո՝ տեսի տիտղօման էր, աչքէրս  
և առարկայք սեսման էին, և ոչ շունչս էր կապ  
կերէլ. ուրեմն այս ինչ էր: Բարձեալ տանիլ,  
և այն ևս հղանակելով: Միոյն մին բան էր պակաս:

Ո՞յն փոքր ևս և կանզնեցան. և որ պակառն էր  
տեսի յանդիմանս կանդնած: — Տէրտէ՛ր: — Ուրեմն  
կարծածս ըռլորն ու. դիղ էր: Ուսողքն կոչէին զիս  
նշանաց: Ելանել, այլ ես կարծումի կենդանի պի-  
տի չլինեմ: Վասն որոյ շարժէի իսկ ոչ: Սակայն  
շարժեաց զիս ձեռն ուրումն և “բարե երեկոյ ոք  
դեակ:” այնքան քաղցր հնչեցաւ յունկն իմ սրպէս  
թէ նոր հոգի տուեց: Հայի ճայնն որպէս թէ իսկոյն  
զիս կենդանացոյց: Կանզնեցի և տեսի զծերունա-  
զարդ քահանայն մեր քաղցրադէմ, սուաջի զրան  
Սրբոյ Եկեղեցւոյ մերում: որ հարցանելով զող ջու-  
նէս և զանուանէս՝ հբաւիրեաց ի մեր: այլ վաստա-  
կած և շուտրած՝ ներումն հայցելով խնդրեցի հաս-  
կացանել բէքէ+նաշ զանդին ուր կամէի զնալ: միւնոյն  
ժամանակումն խստանալով զինի սակաւուց յայցե-  
լութիւնն զալ Սրբակընին: Եշի կրկին յերկիւզալի  
իւալին և հասայ ի տուն Պարսն Աւագնի:

“Բարով, Հազար բարի, իմ սիրեցեալ Աբամայիս:  
Նախ տուա տեսնեմ որոիսի Հանապարհորդութիւն  
արարիր, ոչինչ նեղութիւն կրեցի՛ Հանապարհին:”—  
“Փառք Աստուծոյ, լաւ հանգիստ եկաք: Այլ եթէ  
յետանայինք ևս Հանապարհին, քանի աւուր նե-  
ղութիւնն ինձ թուալէց չէր: Քանզի փորձառու-

թիւնն ունեմ բաւականին : "—"Այժմ առա տես-  
 նեմ մեր լնամանիքն գոր են : "—"Ողջ լու առողջ -  
 և տեսած իցդ յետ այլ երկու հզիք յաւելացեալ են  
 մեր առան : "—"Տղայ, թէ աղջիկ : "—"Երկու քն և սազայ  
 մեր Ալահէի որդիքն : "—"Ըստ ասա (այսինքն երիցս  
 շատ) ու ըստամ : Փոքր ժամանակից յետ միոք ունեմ  
 գնալ իւրեանց անսանել . կարծիմ երբէք իւրեանք  
 ակնկալում չելինե . զգուշ զու ոչինչ չզրիս իւ-  
 րեանց այս մասնին : Այժմ առա տիւնեմ կերակուր  
 կերած աս վերեկել նուից : թէ անօթի : "—"Ոչինչ  
 զեռ կերէլ չեմ այսօր : "—"Եկ ուրեմն, " զայս առելով  
 առանց ժամանակ տանուլ տալոյ իսկոյն տարաւ զիս  
 կերակրի սեղանն և հրամայեաց սպասաւորաց ինչ  
 որ պատրաստի կայր ըերել : Կ'հչ արժանաւոր սո-  
 վորութիւն է այս մեր Ազգի , որ թէ մերձաւոր և թէ  
 օտար Հանապարհորդի պատահն լին , իսկայն ու առելոյ  
 հոգան են առում : Քաջ ցուցանելով Հին նահա-  
 պետական ժամանակի հիւրասիրութեան սովորու-  
 թիւնն : Աեղանի վերայ ևս շատ փոքր խօսէց , ըստ  
 մեր սովորութեան . յետոյ առաց , "թէ փոքր ինչ  
 յառաջ հասած լինէիր , մեր կերակրի ժամանակին  
 կլինէիր . քանիզի մեք նոր պուծանք : Կնչ և իցէ ,  
 այժմ փոքր ինչ հանգուուիր կառավատի ( բանտի )  
 վերայ , կարծիմ յերեկոյս այցելուք ունենանք :  
 Մին բան ուրախ եմ նկատել որ Հայոց ծէսդ զեռ  
 չիս թողէլ . ինչ զեռ ևս այդ զգիստովին են մերա-  
 զինքն ի— : "—"Հրամերեա : "—"Ուրեմն զեռ լուսաւ . ո-

բեալ չին : Տես ես և ո՞նցին զգեստովին իմ - քանդի իմ՝  
կարծիքն է որ այս կարծ կապէն ոչ թէ միայն մեզ  
ջոկում է այլազգից և ցուցանում լինել մին Ազգ :  
այլու առաւել համեստ զգեստ է : Բայց շատոնց  
կզանես ներհակ իմ կարծեացն : ”Զայս ասելով  
թողէց ինձ միայնակ առ ՚ի հանգիստ առնուլ և  
ինքն գնաց իւր սենեակն ( օթոխն ) :



### Գ. Լ. ՈՒ Խ Բ .

Հայուսունութիւն

” Կոր ոճէրի էսայ կարդն .  
• Շային մայիս , զի՞ր մին շարքն .  
Այսպէս առա , : Հայցէ Հարկն ,  
• Քանդի զըարսու առ զրում : ” 1 :

Ինչպէս որ Պարսի Վահագն ակնկալեալ էր , փոքր  
միջոցից յետ երկու երեսնի անձինք ունեցաք մեզ

1: Ա Ե Ր Ա : Թին դասն սպանուածն մին ԵՐԵՆԵԼ Ա Ե Ր Ա  
ինձ բանաստեղծութիւնից է , որ իբր 30 իմ 40 դաշն  
շառավ , իսր ծամանավուն սպանութիւնու վերա է գըեալ :  
Այս երանի՝ այն ծամանավուն , որ մեծ ու որոշի գըա-  
բանին էին հետևած : այնուն ոչ՝ Հայ սպանուածն ևս  
օրուն ծամանի պետքածն գըաբան ին ռազմամ գրել :  
ուրա մին՝ դումանու գրելու : միս վասն շան՝ գրեալէ  
մերս բան : Շային մայիս :

այցելու ։ Պարոն Արային առաւել տեսօք էր քան  
զՊարոն Գեղամ ։ շատ ու բախութիւն ցուցին իմայս  
տեսութեան , և քաղաքավարութեամբ հրսութեցին  
զիս ՚ի ճաշ առ վաղին ։

"Ըստ ու բախ եմ աեսութեանդ , " ասաց Պարոն  
Արային ՚ի աեսանել զիս յէզս աւուր յիւրումտան .  
"թոյլ տուր ինձ ինարօպիւս առեմ ծանօթաշա-  
նէմ քեզ իմ ֆամիլին ընդունեաց ։ " Զայս ասելով տա-  
րաւ զիս ՚ի ներքս . և ՚ի ծանօթացուցանելն՝ Պարոն  
Բարկէն , որում այս առաջին անգամն էր տեսու-  
թեանս , զինի խոնարհ յարգանաց մերձեցաւ , ձեռ-  
տուեց . " Հաւ չիւ զու ՞ ըուէս ես . համեցէք նըս-  
տիր ։ "

Չեմ կարող տան նկարագրութիւնն առլ . քան-  
զի իմ միտքն այդ չէ . այլ թէ կամենայի ես՝ պարզ  
ասեմ կարող չի . քանդի պարնաց քաղաքավարու-  
թիւնն միանգամայն միտքս զրաւեալ էր . Այսքան  
ասեմ որ տունն մեծ էր և լաւ զարգարած անեղիս-  
նօք , որոց մասն ոչ թէ միայն հարկաւ որ չին , այլ  
շարժման ես արգել ին դաւման :

"Դեռ այդ զերութեան նշաններեց Փրի առա-  
ջն ելլ . " ասաց Պարոն Բարկէն . և աեսնելով որ  
միտքն չհասկացայ , " ինչոյ այս զօտին կամ կա-  
պէն որ զեռ վերնիցդ չես գձել . Մեք քրիստոնեայ  
եմք . պիսի քրիստոնեի դրէսով շհետակ լնեմք ։ "  
Պատասխանեցի արդէն իմ բոլոր զգեստս Երօիսցոյ  
էր . բայց ՚ի կապէս որ մին պարկեց շտ հագուստ այ և

միւնոյն ժամանակում չոկումայ մեզ այլ աղջից · և գոտին ևս՝ թողեալ սիրունութիւնն , շատ առաջարար և պիտանի է , քանզի մարդոյս մէջքն տաք այ պահում և բան ու գործում թեթեւութիւն տալման : Արագէս Սուրբ պատմութենում կտեսնեմք որ՝ ով ու զումայ ելէլ մին բանի ձեռ տալ կամ ճանապարհորդութիւն առել , նախ մէջքն այ պրկում ելէլ :

“Չէ , չէ · ուղիղ ոիզըն ուստիս չտուիր : Կաց , քանի օրիցյետ քեզ կլուսաւորենք , յետոյ աճ կուս ՚ հարչէն կնվինս կեննս հասակուսու , որ մեք ուղիղ եմք · կարծեմ Խնկիիզեար ոչինչ չեն հասկաման :”

“Չէ :” — “Մին փոքր սովորելէդ կտեսնես միավորինչպէս կլուսաւորիի : Բատերդ կսկսես լաւ ու մէջ առել ՚ հարչէն և քաղցր բառեր բանացանել , և կիմանաս ինչ տեղում որն զործ ածել + որպէս մին օրինակ տամ . մնի որ զիր լինես զրում , զու կը զրես ՚ ի սմա ծըռըէն և այլն . մեք զրում անք հաճիմ ծըռըէն ՚ ի սմա . անս ինչ քաղցրութիւն այ տալման այզ հաճիմ բառն . զուցէ զու չհասկանաս՝ քանզի ճաշակին զեռ չես առել : Կամ՝ կտես առնչի հարչին պահանջէ . որքան կոշտ բառ այ պահանջէ բառն , մեք կասենք հարչին հաճիմ , որ շատ զալար այ և ոչինչ թուացաննելէց չի կարդացողին . այլ կարծեմ ներկայ ունայն գլխացաւութիւն ամ տառում , փոքր ժամանակից յետ այ հազ չուսամ դու քեզէն կհասկանաս :” Ասո Պարսն Արայն ընդմիջեց

մեր զուարժալի խօսակցութիւնն ասելով “ կերակութիւն մէզին ուղանին այ . Ե՞նչ կկամենաս , մին թառ շէրբի թէ ըրանդ : ” Պատաստիանեցի ևս թէ՛ ոչ ինչ . որ անդեք տուեց Պարսն Բարեկէնին կրկին ինձ ծաղր առել և ասել թէ շատ յետ էի մնացէլ լուսառարաննենիշ : ” Քանզի մին թառ ըմպելիք նախ քան մէզ նասել լսու ապիտայտ ախշճաչ կոսայ : ”

Թռէ և ես պէտք չունի ախորժակ զտանելոյ , քանզի սրդէն լսու քաղցեալ էի . սակայն կամելով օգուտ քաղել յամենայն բարի իրաստուց , ես ես մի թառ զինի ըմպեցի և նատանք ին սեղան :

Լի կեսօրեան խօսակցութեամբ , միտքս հանգարտման չէր որ թողիէր հանգիստ քուն է լիի : Քաղաքավար խօսակցութիւնն , շարժմունքն հօւենանին , և նորութեան հրապոյրն անդադար ել և էջին առում իմ մոքումն : Ենչ երկարաբանեմ , մին զիշերէն միշում լուսառարաննեցաւ . և այսքան տարեն իմ մեծաւորաց հետեւողութիւնն կորուստ պնաց . յէզու տաւառ իմ ուշ և միտքն միայն այս եղեւ որ զերութեան նշանն մերնիցու բառնամ :

Միտք մարդոյ ին ննամն շարին հաստատեալ են , տաէ Սուրբ Գիրք . որ իրօք իմ մերայ Ճշմարտեցաւ : Քսան տարի զու միի քարաղիր , հասկացրուր և խելքումն ընիր . մին փոքր բան , մին նորութիւն , և կամ միի օրինակ շատ բաւական անքարողութեան օգուտն կորցանել : Քանզի մարդոյս միտքն ապականեալ է . և մեր խարոզ թշնամի շար

սատանէն մեր հետնէն : Ով որ այս զիսենայ , միշտ  
իւր զգու շութենումն կլինի . և զգու շանալով կջա-  
նայ իւր կրից հետ կռու ել և ըստ կարեւորին յաղթել :

Ո՞քան ու բախացաւ բարեկամն՝ իմ յառաջա-  
դրութեան վերայ . քանզի ամէն անձն կու բախա-  
նայ իւրն հետեւող գուանել , իւր օրինակն կ'ուզի  
բուի լինի կամ թէ չտը :

Արտի մտոք հետեւ մազէրս փոքրել տալ ըստ  
Քէշէնի նոր ծիսէ , և հանդերձս և ո Երօնիացւոյ առ-  
նից զիելով , ինքն անձամբ անձին կանզնեց ինձ  
զգեցու ցանել :

Համբերութիւնս զոզցես Հատաւ . այս շոր հազա-  
նելում , քանզի կու լակապս կապելն մերձ մին քա-  
ռորդ ժամու անեց . մինչ գես 'ի մանկութենէ սա-  
զորելի ես էտքան մի ջոցում միանդամայն դզեստա-  
ւորիլ , լուացվելովն հանդերձ : Ո՞վ լուսաւորու-  
թիւն , լուսաւորութիւն . թէ այս է քոյ սկզբի  
զուռն , դու ինչ պիտի լինես :

" Տես , պան մայ ու մըրդ իրառք , ճրքան սիթու-  
նացէլ առ . այժմ միայն մին խրատ տամ քեզ . " ասաց  
իմ բաշեկամս . " թէ լաւ մտումք պահես  
Փըստ ռէս սոսչին անձն կդառնաս : Խօսելու դ  
ժամանակումն լիզուդ մին փոքր թեքելով և շըր-  
թունքդ պահանդիւ կու ը ըերելով , ջանացիր քան  
ինզիքանուն և ո քաղցր արտաքերես քոյ բառերն :  
Զոր օրինակ . փոխանակ ասելոյ , ' համ դու իսու դու ' առան  
' համ օդիս դու ' : — Այսօր պիտի զնամ կուռն

Դասն վկայութիւն տալոյ իմ բարեկամ Օ.ի համար . և անըդ պարիս կհամարեմ ինձ՝ եթէ դռւ ևս ինձ կըմզընի ընէւրութիւն առես : ”

Բնականապէս պատճառն ուղեցի իմանալ . զոր պատմեաց լինիլ այս : Խնքն իւր բարեկամ Օ.ի տանն այ լինում , որ մին սպասաւոր զիր է բերում . որում Պարսն Օ.ն սլամ չոր բորւ տալով արժակում այ . որ զեռ չէր զնացէլ ’ կրկին յետ եկաւ . որոյ վասն Պարսն Օ.ն բարեկանալով եհար թահէց զնա . և իրաւունք ուներ ’ քանզի մեր եհմիքսէ շնն խօսուցաւնն խափանումէր : Այսը աղազաւ ’ մարդ մարդի վերայ ’ դարձան Պարսն Օ.ի տունն և կոչեցին ’ի գատաստան :

Լաւ միտ զիր ընթերցող . թէ քաղուած նշանի մէջ անկեալ երեք և երեք բառէրն ’ Հայեար Բնչ նշանակութիւն ունեն , և Խնկլիզեար թարզմանելով տես ինչ կնշանակեն : Հայեար ’ առաջինն կնշանակէ թէ : զնաց և խսկոյն յետ եկաւ ’ . և երկրորդն թէ : մարդ զկնի մարդոյ : Այն ինչ Խնզիլզեարում ’ առաջինն թէ , ’ զեռ տեղն էր սպասաւորն ’ ( ուրեմն չէր կարող կրկին յետ զոլ . ) և երկրորդն թէ , ’ մարդ շալակեալ ’ի մարդոյ : Խնչ և իցէ զնացի և ես . և տեսի որ իմ բարեկամն ’ վատահ լինելով իւր կարողութեանն , առանց մի շոցի թարզմանի յառաջացաւ իւր վկայութիւնն տալ : Մի և նոյն բանն որ վերն պատմաց ինձ , մի և նոյն ոլէս ի՞ գլուխեար թարզ-

մանելով ոկտա ասել : Երբ հասաւ սկզբի երեք  
բառն՝ գատաւորն ականջքն սրեց թւ վաս ի՞նչ . և  
Նոյն կը կին լսելով , տեսի նշանակեց ՚ի վերայ թղթի .  
երկրորդ բանն որ հասաւ , ամենայն բազմութիւնն  
շիարողացան իւրեանց ծիծադն զապել , “ Ման  
ըպան ման Տա՛րդ Տորդի Վերա . այս վկայի խել  
քըն զլիսին չի . զձւըս : ”

Գունասեալ և շուարեալ գուրս եկաւ բարեկամո  
գլխակոր , և առանց նայելոյ յերեսս իմ աներեւու-  
թացաւ : Ես քան թէ իւրն շուարած , չիմացայ  
ի՞նչ անցք անցին որ իմ խեղճ բարեկամս այսպէս  
խայտառակեցաւ : Արդեօք , Ինզիզ գատաւորն և ո  
գեր լուսաւորեալ չէր : Ոտայ իմ վախացանօղ  
փալքին և զնացի ՚ի առւն :



### Գ. Լ. Ա Խ Խ Ա Գ .

Ինչուան առանձնանութիւն :

“ Զգոյշ լեր յամբարտաւ անութենէ . զի դովին  
մեղօք և հրեշտակք անզամ կործանեցան յերկիից : ”

Ը Ե Շ Ա Պ Է Յ

Պարոն Վահագն ինձ ոկիզըն չհանաչեց . այլ  
զինի հանաչերյն երեսի գոյնն միանդամայն փոխարկ-  
ուէց . և ախուր եղանակաւ ասաց . “ ի՞նչ Արա-  
յայիս , է՛սպէս շուտ : Այսպէս շոյտ՝ սիրելի , չար-

օրինակ և շար խորհուրդն արմատախիլ ոչ շատու  
արարին քոյ սբախց՝ Շնողացդ բարի օրինակն : Ո՞վ  
աարաբադզութեան , Ազգիս աարաբադզութեան :  
Այս , սիրելի , թէ և քիզ համար ցաւիմ ես , այլ  
ցաւս ուեհի վասն Ազգիս է : Ինչն իցէ յուսամ բե-  
զուդ ծռէլ չլինես : ”

Որպէս կասեն մեր երկրութիւն . է . վերելն ըստ մին  
ամօթ , վեր զոլն միւս , այսինքն ուելի ամօթ . ” այս  
պէս ես ներկայ իմ բանն եր ելէլ : Ծառ եր ինձ թու-  
ման , ամաշմանի վեր գի . այսինքն լու իմամանի որ  
վեր ամ ելէլ , այսինքն սղալութիւն ամ զործէլ , այլ  
ամաշմանի վեր գու այսինքն սղալութիւնն ընկունել  
և ուղղել : Այս ախտն՝ ընթերցած , սկզբնական  
ախտէրի մինն այ . որ յետ անկման Առաջին Ամարդոյն  
տիրէց մարդոյս սրտին . որով նոյն ինքն Աղամ ջա-  
նացաւ իւր սղալութիւնն չընկունել : Վասն որոյ  
չկարծեմ որոք մարդ լինի , որ ի սմանէ մասն չու-  
նենայ . այլ զովելց արժանի է նա՝ որ ջանայ յազ-  
թիւ այս թերութեան : — Ես իմ մեղքն խառովա-  
նիմ , որ յամառեալ մնացի իմ սղալութենումն . և  
ջանացայ պաշտպանել իմ կարծիքն :

“ Ահ . սեսմանամ մին այլ լաստուրութիւն ես աս  
զաէլ . ” կրկնէց Պարսն Վահազն : — “ Կարծեմ  
հարկաւ որ այ , ” ասացի ես , “ որ սմէն մարդ իւր  
կարծիքն պաշտպանի . քսմելի առանց ազատութեան  
կամոց մարդս ազառ չի լինելց . այլ կլինի գերե  
այլոց կարծեաց :

" Եշթ մանայ , Արտամայիս , այս վոքք Ժամանակումն մեծ լուսաւորութիւն առ զուկ , և թէ ես քեզ սիրում չենի , իրաւն ասեմ , որ աւելի զիսացաւ ու թիւն չի առելէց քեզ հետ : Այլ իմ պատասխանութիւնն այ , սիրելի , որ հարկաւորն քեզ ասեմ . վասն որոյ նախ ասեմ՝ որ քոյ ասութիւնն ուղիղ չի , և քոյ աված պատճառն ես ու ուղիղ չի : Մարդոյս՝ արգարե , ազատ կարգ է պարզեւալ մեր Ասեղծողն իսկդըանէ , բայց միևնույն ժամանակումն Խանացողութիւնն ես այ առւել , որ իմանայ որն է լու և որն վատ : Մարդ չկոյ որ օրոք սղալութիւն չգործի , քանզի չար սատանէն միշտ մարդոյս հետնեն այ . բայց զինի զործելն իսկոյն կիմանայ իւր արարած սղալութիւնն : Եթէ զինի իմանալոյն , իսկոյն ընկունի և ջանանայ ուղղել իւր արարածն , ուրիմն նա աղադ մարդ այ . այլ թէ Էստուր ներհակն՝ զինի իմանալոյն զեռ ևս ջանանայ պաշտպանել իւր սղալութիւնն , էն մարդն աղադ մարդ չի , այլ զերի այ . այս , զերի այ եղբայր . զերի իւր կամացն , զերի իւր կրիցն . որով չար սատանայն ջանաման այ մեղ կուցանել : "

" Բայց . " ասացի ես , յետ ձիգ մասածելոյս թէ ինչ պատասխանեմ . " բայց " հարկաւոր չի մարդի որ աւելի լեզու իրար լինի , յառկապէս մեք՝ որ ինզինի նշանի ներքոյ ամք բնակման , հարկաւոր չի մեզ որ ինզինելոյն ինձ . " բայտ ական այ .

Յետ ձիգ մասածելոյն ինձ . " բայտ ական այ .

Աիրելի , ” ասաց Պարոն Վահագն , “ բաւ-ական այ-  
քեզ պէս շատ ամտեսէլ , որ փոխանակ իսկոյն շնոր-  
հակալ լինելոյ այն անձնեց որ սղալութիւնն ու զզում  
այ , կջանան քեզ պէս երեխուար մին բանից միւս  
բան թռել . յանձն կառուն ծաղրալի դառնաւլ .  
այնքան լինի որ չխոնարհեն . առանց մտածելոյ թէ  
որքան ու զենանք մեղ բարձրացանել՝ կխոնարհենք .  
և անդրազարձն թէ մեք մեղ խոնարհեցուցանենք՝  
իսկապէս կ'բարձրանամք ըստ վկայութեան Սուրբ  
Գրոց : Մեք խօսմանինք կամաց ազատութեան վե-  
րայ , զու թռար լեզու սովորելոյ վերայ . թէ ես  
ոկում լեզուի վերայ , զու կթռես մին այլ բանի  
վերայ . որով ինձ անօգուտ աշխատանք կ'լինի .  
Վասն որոյ լեզու սովորելէ կամ խօսելէ վերայ՝ այլ  
ժամանակ որ հանգարտ լինես , քեզ հետ կխօսեմ .  
Այժմ պատրաստուեր յերեկոյիս զնամք մին քանի  
տեղ քեզ ցուցանեմ ( նշանշ դամ : )

Այս բոլոր խօսակցութիւնն այնքան հանդարտ ե-  
մեզմեղանակատ էր առում Պարոն Վահագն , որ ա-  
ւելի ինձ ամաչացանումէր . քանզի ես ինձ միան-  
դամայն տանել էի տուել : Վասն որոյ շատ ու բա-  
խացայ որ մին պատճառ զտայ վեր կարոյ :


Դ հանապարհ մեր ձին խրանէց , և Պարոն Վա-  
հագնի ամենայն ջանք եւ կառավարութիւնն ունայ-  
նանալով , կտոքն ( ԷՇԳԳԻՆ ) յորում նստեալ էաք  
շը ջեցաւ . և անկաք կ'զետին բարեբաղդապէս մին  
երեկի ինպլիկի հանդիպեցաք , որ թէ եւ անձ անօթ .

մեծաւ քաղաքավարութեամբ հրատիրէց մեզ յիւր  
տառնն մինչ մեր համար միւս մին կառք պատրաս-  
տէր ։ Քանզի մերն խորտակեալ իսպէհեւէր :

Ահա ժամանակ՝ Պատրոն Ամհագնին ցուցանելոյ  
դանազանութիւնն որ ի մէջ իմ եւ իւր ։ ահա ժամա-  
նակ՝ որ հաստատի ցերեկեան կարծիքս, և նշանց  
տայի Պարնին թէ հրքան ամգիրագանցէւ երկու օքնն  
ւ սահմանական թէ մէջն : Սակայն՝ ամաշեմ առել, լո-  
լոր ջանքս ունայն եղեւ, և բոլոր հնարքս ի զուր ։  
Թէ շապիկս կուշն բարձրացրի, թէ լիզուս թէքեցի,  
և թէ շրթունքս կուշ բերի, սակայն այս Ինգլիզ  
պարոնն՝ որ անծանօթ էր երկքիս ևս, այն կապա-  
ւ որ Պարոն Ամհագնին՝ որ Ինգլիզնեար ևս չէր կա-  
րողաման վարժ խօսել, առաւել մատզիր էր ելման,  
և առաւել պատիւ էր տալման, քան ինձ :

Վիլտորբարդդ պատահմունք՝ որ մեզ այս տառնն  
ըերէց ։ ճշ դառն ժամանակ՝ որ շուշուտ չէր անց  
կալման, որ մեր կառքն պատրաստուէր ։ Այսպիսի  
խայտառակութիւնն Յերէկի իմբարեկոմա խայտա-  
ռակուէց՝ բաւական չէր, պիտի՞ր այսօր նոյն ձաւ-  
խորդութիւնն իմ զլուխն ևս զայր ։ Ամօթ ։ խայ-  
տառակութիւնն ։ Եթէ առաւօսս միայն մին ռատահայ  
էր մաէլ սկրտս, այժմ զունգագունգ տեղիք զտան :

Որքան պատժմանի, այնքան այսահարման էի, և  
որքան այսահարման էի՝ այնքան զահավիթու մի ինձ  
անզիզի մէջն ։ Ուզէս մին զետրնակ մարդ, այլ ոչ  
ինչ հասկաման չի ։ և պարտեմ պատմել թէ որպէս,



կամ նրբ հասաք ՚ի տուն : Ընդ հասանելու՝ առանձ նացայ իմ սենեակն ըլտին . նզովիցի այն զգեստն զոր առաւ օսս այնքան յանդու զն պաշտպանումի . և պատրաստեցայ մունիւ յանկողին , թէն հաստատ էի աչքս խփուելէց չէր :

Ողորմի իմ Հօրն , սղորմի իմ Մօրն , հազար սղորմի իւրեանց հոգւոյն . որ սովորեցուցեալ էին ինձ . աղօթք առել նախ քան քուն ելնելու : Այս , պատռելին ընթերցող , թէ և խղճէրն զրել կարգալ չէին պիտել , և ոչ կարող ին աշխ բենիշ ջոկել , սակայն որպէս հասարակ սովորութիւն է մեր երկրներում . չէին թողնելց ինձ . և ոչ մին զիշեր , առանց աղօթք առելոյ ննչել . թէ պատահէր քնատեղեց ևս մեր կ'կացնին և աղօթք առել կ'ափն : Այս պէս . յամեն առաւ օս պիտեր եկիդեցին զնայի . թէ կարեռ չելնէր պիտեր տանն աղօթք առի :

Այսպէս ուրեմն սկսայ աղօթք առել , և երբ հասայ յայն ըան թէ . և մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն . այլ փրկեան ՚ի չարէ . ցերեկեան ինձ պատահած փորձութիւնն միաս եկաւ , և սիրտս լցուէց : Եւ որքան առելի լցմանէր , այնքան աւելի ևս անդորրամանի . քանզի սիրտս լցուելով . չար սատանէքն նեղամանին , և տեղ չզտանելով . զուս ին փախման . և իւրեանց զնալուն . ևս սատանայական տան ջանքից ազատուեցայ , և հանգիստ քուն ելայ : Ահա , այսքան զօրութիւն ունի աղօթքն , և այսքան մին կաթիւ արտասուքն :

## Գ. Լ. Ա. Խ. Խ. Դ.

ԽԱՆՈՐՀԱՆԱԾԻԱՆ :

Քուն հի անու շակ քուն - մի ի մեծագոյն պարզեց Մարդասէր Ատեղծողին : Ք.անիք . քանիք կանոր քոյ յարգին չեն իմաման . և այն որ շնորհեալ է մեղման հանգստութեան , վտանու ման ընդունայն տեղ ի պէտս անհանգստութեան : Այլ շոյտ հասաման այժամանակն , որ նոյն անձն՝ ընդունայն տեղ կորուսոծ քունն ուղումայ , սակայն գտաման չի . քանդի անհանգստութիւնն վատնեամբ քնոյն , շուտով կանչում այ թերում ոյ հիւանդութեան . յայնժամ՝ նի , որքանայ վիափագման քնոյ այն հիւանդն . նոր իմաման այ քոյ յարգին . երանիթ թէ այլ չկորցանի :

Կանուխ ընդ սռաւ օտն վեր կացայ յէզօ առաւ սռաւ . անդորր , զուարթ և կայտաւ : Ք.անիք սռաւանէ քն սրտիցս վախէլ էին . և աս մոքուր սրտիւ անոյշ քուն և սռողջարար հանգստութիւնն էի գտել : Խոկոյն ելի գնաւ յեկեղեցին . ուր ընդ մուսներո խոկոյն հանուչեցի ազգու ծայն քահանային , որ յառաջին երեկոյի որպէս պատմելամ , ինձ այն քան ներգործել էր : Այլ , նի զարմանալեացու . զուց անհաւատալիթ թուիցի . բայց ես իմ ականջուին պարզ լոեցի մի ըստ միոջէ . Մարտ ի պատահ է :

ւ ու իմաշտ - Արբակրօն քահանայն՝ որ սաղմոս էր քաղաւմ, յառակ՝ բառ առ բառ՝ կեսաղբութեամբ՝ ազգու հղանակաւ և բարձր ձայնիւ կարդաց վերոյ տունն - որ կրիին և խիկայն ներգործէց իմ սրտումն :

Ի՞նչ . Ես իմ պատիւն չիմանամ, այլ իմ ձեւամբն կորցանեմ: Պարոն Վահագն ինձ սիրում այ պատվում այ, ես՝ փոխանակ սիրոյն սկը յետ զարձուցանելոյ, ապատամբլեմ ընդդէմ նորաւ և իմ պատիւն կորցանեմ: Զէ, չե - քաւ լիցի ինձ հաւասարիլ անանոց անըանից :

Չես կարծում, բարեմիտ ընթերցող, որ շատոնց գուցէ ամենեցուն, այսպիսի բան պատահման այ որ երբեմն մին բան, մին բառ, կամ մին նշան՝ յարմար իւր կենաց անցից, լուրմ այ կամ կարդման այ: Յորմէ օգուտ քաղել մասն անձին, որքան շահ կլինի . զու ինքնոր իմացիր: Իմ մասին պարզն ասեմ, թէե արդէն յանցեալ երեկոյի ամբարտաւանութիւնն որտիցս կորել էր, սակայն և այնպէս այս մին տուն սաղմոսն ինձ աւելի խոնարհացրէց: Այնքան՝ որ զինի տուն զիալոյս խիկայն մերձեցայ Պարոն Վահագնին և ձեռն համբուրեցի: Ոչինչ ծանր չթուաց ինձ և ոչ ամաչեցի, ընդունիլ և խոսառվանիլ իմ սղալութիւնն, մասն չորագլութեամբ հակառակելոյս ընդ իւրն յերեկեան աւուր:

" Զօրանաս, Արամայիս, զօրանաս . շատ ու սախ ամ իրաւե անսանիլ քեզնում այդ սուաքինութիւնն: Խոնարհութիւնն կըարձրացանի մարզոյ:

ըստ այնմ թէ՝ որ Խանարհեցուցանէ զանձն՝ բարձրացի՛; Եւ ես յուսամ՝ և ի որտէ ցանկամ տեսանել գքեղ յառար միում՝ բարձրացեալ ըստ արժանեաց քոց։ Արդ՝ առաջնորդնեմ, ուստի՞ զաս։” — “ Յեկեղեցւոյն։” — “ Տէր Յուսկին Հանդիպեցար ։” Ուզեցի առեմ թէ ինտրօգիւս առող ծանօթաշանոց չեւր ։ այլ կուլ տիկ և ասացի “ Զէ ։”

“ Ափսան։” առաց Պարսն Վահագն, “ ուրախ կլինի թէ Հանդիպէլ լինեիր ։ և շատ ուրախ կ'լինեմ որքան ժամանակ որ աստ լինես, ճեռնհաս ժամանակու մզ զնաս իւրի Հանդիպէս։ Քանդի ինքն շատ արժանաւոր անձն այ և ճշմարիտ Համիւ քաջ։ Իւր մին քանի սնցքն պատմեմ որով կանոնն ասու թեանս Ճշմարտութիւնն։ Միշտ իւր պաշտօնին Հաստատ այ ։ այլ այդ իւր պարտականութիւնն է վասն որոյ այս մասին Հարկ չեմ Համարում խօսել։ Սակայն զինի իւր առաւ օտեան և երեկոյեան պաշտամանցն, մնացեալ բոլոր ժամանակն յատկացեալ կարգագրէլ այ ։ թէ յնը ժամ պիտի կարգալոյ պարապի, և որ ժամու զրի ։ զինի այնու թէ Հարկ պատահի կզնայ զուրս, թէ ոչ տանն մին արհեստի հետնայ միշտ զբաղած կդատնես իւրն։ Ըարաթն զոնէ մին անդամ ևս պիտի զնայ զպրառունն, մանկանց յառաջադիմութեանն վերահասու լինելոյ ։ Ենիւ ուրախաման այ երբ այն աշխոյժ զառնու կների ( որպէս ինքն այ կոչում մննկանցն ) մի զմիով եւ և է չն ճէ ու եւ այ տեսման։”

"Արդէն՝ զու ինքնդ լսէլ աս իւր կարդալն, ինչ  
և պատճառն այդպէս անսղալ և կետադրութեամբ  
կարդալոյն, եթէ ոչ որ օրն երկու ժամ՝ անխափան  
պիտի կարդայ ։ Թէ աւելի ժամանակ եւ դուռնի, այն  
ևս ընթեցողաւթեամբ այ անցուցանում ։ Քանի  
շատ թշնամի է պարապութեան ։ Եւ թողեալ այս,  
մին մարդ որքան որ կարդայ այնքան առաւել բան  
այ սովորման, և այնքան առաւել կատարելութիւն  
այ սուսաման ։

"Ճարաթն ի զլուխ վեց օր այսպէս այս քաջ  
հոգիւս պարապման այ մին նոր բան սովորելոյ, իսկ  
Կիրակի օրերն միշտ սուրբ է պահում ըստ պատութե-  
րանի Տեառն ։ և ըստ Աւելարանական օրինաց՝ դեկի  
ժամերգութեան, վութայ դռանել զոշեարս հեռա-  
ցեալս ։ մոիթարել զարտմեալս ։ դեղ տոել եթէ  
հոգեալ և թէ մարմեով ախտացելոց ։ և եթէ մին  
ի նեղութեան մէջ լինի, ըստ կարեորին ինքն ին-  
քեան օգնում այ ։ և կամ կարողացէ օգնութիւն  
այ ինք առման նոցա համար ։ Եւ այս սրբազն  
պաշտօնն կատարում այ մնաչառապէս, եթէ առ-  
մեծս և թէ փոքրունս ։ եթէ առ հարուստ և թէ  
աղքատ ։ ոչոց վասն մշտապէս պատուեալ և սիրելի  
է ամենեցուն ։

"Կարծիմ քեղ անհաւատալն այ թուժան այս  
պատմութիւնս, " ասաց ։ երբ տեսաւ որ պաշարած  
թացել էի ։ — "Զէ." ասացի ես, " անհաւատալի չի  
թուժան ։ քանդի ինչ բան կայ որ մարդ ու զենայ

առել և չկարողանայ . մինչդեռ այս պատմածդ շատ մին թեթև բան այ և կազեոր ամենեցուն : Իմ պաշարած մնալոյ պատճառն էր , որ ընդէր ամենեքան սորա նման չեն :

" Այս . սիրելի , ես ևս հոգւովս ուրախ կլինի որ ամենեքան այս Տէր Յուսիկի օրինակին հետեին : Մեզ տուած չե այդ մասին խօսել . թէ այդպիսիք ուզենան իւրեանց ժամանակն ունայն անցուցանել , այդ տուած այ իւրեանց Արբազան Մեծաւորին քննել :

" Ի՞նչ լու կլիներ , թէ Արբազան Մեծաւորին մին քանի կանոններ հաստատեին . որով ամենեքան ըստ արժանեաց վարձատրիին : Ինչ լու կլիներ , թէ մին կանոնն ես այս լիներ , որ ստիպէր ամենեցուն իւրեանց երկրիցն որ գուռ ան զնաման , հետեւին մին ու սում և կամ մին արհեստ սովորեն . որ զինի յետ զառնալոյն կարողանան իւրեանց երկրումն նոյն ու սում և կամ արհեստն ծագիեցնել , կարողանան իւրեանց Ազգի մանկանցն նոյն ու սումն և կամ արհեստն սովորեցնել : Տես Էստից որ քան օգուտ կծագի : Ի՞նչ . կարծես չեն կարող իւրեանց թեմի միջացումն մին արհեստ սովորեն . որ իւրեանց հետ յետ տանեն : Չեն կարող զոնէ իւրեանց ահսած և լածն զրելով մին զիրք շինեն . կամ մեր հայրենասէր Նախնեաց պէս ընտիր զրքէր օրինակել , որով և իւրեանց յիշատակն անմահացուցանեն : Ծատ լաւ կարողան սիրելի . իբաւն ամ ասում , ես մին կարգա-

ուր առմ տեսէլ, որ՝ երկու տարւոյ միջոցում մին լիզու սովորէց, զբէլ կարդալով հանգերձ ։ այնքան՝ որ սկսաւ թարգմանութիւնն առել նոյն լիզուից ։ ի հարկէ իւր ազգային լիզուի ուժովին էր որ կարդացաւ ։ Ահա, ահօ ։ թէ այսպէս սովորեն, և՝ զինի իւրեանց երկիրն յետ դառնալոյն, իւրեանց Ազգի մանկանց սովորեցաննեն, որքան լուսու որութիւն կծաղի ։

“Որովհէսաւ այս միջոցումն զաւ պիտի զնաս զըսդոց, վասն ինզլիզն ար սովորելոյ, և ևս միաք ունեմ զնամ ՚ի — մեր ընտանեաց տեսնելոյ ։ վասն որոյ մին քանի արժանի աեսանելոյ տեղաբէնք կտանեմ քեզ նշանց կտամ ։ թէ կինդանի մնացի այլ տեղաբէնք ևս զինի յետ զոլէս նշանց կտամ ։ Ասկայն այսքան ասեմ, որ որքան փոքր որ տեսնես այս փոքր միջոցում, զեռևս համարէր գու շատ աս տեսէլ քան զբազումն, որք՝ թէ ցանկանան, կարող անձշմարտապէս լուսաւ որդիւ տեսնելով և բան սովորելով ։

“Չեմ մոռաման Պարսն Օ ։ ի ասութիւնն ։ որոյ հետ մին օր զնացէլի մին արհեստի զործատուն ։ Դեռ չէինք հասէլ ուղեց Պարսնն յետ դառնալ ։ Բաւ ական այ բնէ որ տեսանք ։ ևս միայն անմի համար ուղեցի տեսնել որ թէ խօսք պատահի ասեմ եռ ևս այս տեղն տեսէլամ ։ ։ Ինչեիցէ նախ կզնամք Արքակրօն Տէր Յուսկին տեսութիւնն ։ յետոյ միւս տեղաբէնք ։”

Գ Լ Ա Խ Խ Ե .

Բարձելունակութիւն :

“Ո՞ր գալար սիրտ հանգութմեսցէ անմեղ  
սիրունութեան , զարդարելոյն ՚ի զցեստ առա-  
քինութեան . զի ծնունդ է այն Երկնային , որ  
առ ՚ի ամոքել զիշշա և աղնուացուցանել  
զբնութիւն , առւաւ մահկանացուաց երկրի :”

ԶԵՆՔ է այն՝ որ երբեմն մարզոյ սիրտ այ անկա-  
նում , և առանց ոչու պատճառակ , ու բախացանում  
է կամ տիրացանում : Անծանօթ երազոյ պէս , որ  
երբեմն ՚ի զիշերի տեսման ամք . որոյ պատճառն՝ որ-  
քան որ մասձեմք , չեմք կառող իմանալ . քանզի  
երբեմն այնպիսի իմն երազ ամք անուման , որ մեր  
մոռքն երբէք անց չի կացել : Որպէս կ'պատահի որ  
ու բախ սրախը քուն կ'լինեմք , և տիսուր երազ կ'ան-  
սոնեմք . և երբեմն տիսուր քուն կ'լինեմք , և ու-  
բախ վեր կ'կամմք :

ԱՅս օրինակ երբեմն ՚ի ցերեկի այ պատահման ,  
որ մարզոյ սիրտն ախուր այ ելման , սակայն՝ ներս-  
նային անհատիսնալի իմն պատճառաւ յանկարծ  
ինքն ըստ ինքեան և առանց որոք պատճառի ու-  
բախութիւն խնդութիւն այ զգաման . կամ ու-  
բախ այ ելման , և ախրման այ :

Ոյնպէս և արդ ինձ պատահեց , որ ու բախ սրբ-

տիւ նատած Պարոն Վահագնի զու արձալի պատմութիւնն էի լուռմ. յանեկործ սիրոս բռնվէց, և զալոր իմ տիրութիւնն մեզմով մոխանակէց ուրախութեանս։ Ըստ ջանացայ իմանաւ զպատճառն. այլ ինձանեւ մեծամեծ փիլիսոփայք անզամ այսպիսի երազոյ պատճառն ուղիղ չեն կարացեաւ իմանալ. ուստի ևս որպէս էի կարսդ ևմ կարծիքն այ, որ այս ցերեկեանն եւ զիշերայնոյն պէս, ոչ այլ ինչ է բայց երազ։ Սակայն՝ զու ընթերցող, անս. զուց զու կարողանաս որոք մին պատճառ զտանել այս բանում։ — Պարոն Վահագն նատած մին զուարձալի պատմութիւնն էր առում. չո՞ր լուս. ևս ուրախ օրուիւ նատած լուռմ էի. չո՞ր լուս. իւր պատմութեան վերջումն յիշեց, թէ ի միջոցի քանի առուց պիտեր ինքն զնայր իւ. և ևս ի զպատճառն. չո՞ր լուս։ — Այս պատմութեանումն ինչ կայ, որ ինձ սիրացանի. մի թէ երեկեան ասածո Պարոն Վահագն՝ այսօր այնքան սիրելի էր եղեալ ինձ, որ իւր բաժանուելն ինձ այսքան տիրալի էր թուման։ — Չէ. բայց պարնի դուն՝ ոչ ոչ չէմ չէ։

Այս, կային. և ևս մեծ ներողութիւնն ախտի ինհարեմ յիմ Պատառելի ընթերցողաց, վասն անցեալ Գլունէրում քանի անձանօթ պարնաց՝ առանց ծանօթացանելոյ, հանգիսացանցանելոյս։ Իրաւ, որ ովզ բեց պիտեր ծանօթացանի, սակայն այժմ ևս յիշեի չի։

Տէր Յուսկան պատմութիւնն՝ արդէն Պարսկա Վահագն արար՝ այժմ այս պարնի պատմութիւնն պարտ է ինձ սկսել, յետոյ այլոցն մի ըստ միոնէ:

Արդ՝ սրակու մոքքը ՚ շառէ տեղեկացէլ կլինես, ընթերցնդ, Պարսկա Վահագն մին հեզահոգի և տղաւուկը պարսկ էր Թէստէ աստիճանի: Իւր նշանածն ևս իւր պէս համեստ, քաղցրաբարոյ և զթած մայր էր: Չորս զաւակունս ունեին, երկուքն տղայ, և երկուքն աղջիկ: Կրօներազոյնն՝ աղջիկ էր, միջակքն աղայք, և Սաթինիկի նազելին Սաթինիկ, էր մեծն ու անդրանիկն: — ԸՆՇՅ:

Ծնդէր հապացեր, ընթերցնդ: խնդրեմ թողուս պատմութիւնս առեմ: — Պարսկա Վահագն վաճառականութեան էր պարապեալ: օրն ողջոյն իւր բանի ու զործի հետեւն անխոնջ կիսատակէր, և յերեկոյին զինի իւր զործատունն փակելոյ, զրեթէ ըուրը ժամանակն իւր մանկանց հետ կանցու ցաներ: Կ'հետեւ էր կ'առաներ Բ'նչ ան կարդման: Բ'նչ ան սովորման, սիրու կ'առէր կ'քաջալերէր, պարզե կ'խոսաներ: Երբ ընման մին սիրուն իքմին իմ Թէ կնծայէր, զոր օրինակ պատկերազարդ զիրք, կամ առանման: իւրեանց հետ կ'նսանէր դասերն կ'անրատացանէր, իւրեանց կարդացածի պատմութիւնն կ'առէր նոցա համար, միշտ ջանալու առաքինութիւնքն զավիլ և մոլութիւնքն վնասիլ, որով և նոցին մատադ սրաներու մն ովնիկել, առավ և նոցին մատադ սրաներու մն ովնիկել առաքինութեան սէրն: Առաւել քանի զանենայն փայթ ուներ Սրբազն Պատմութեամբ, և

Ասուտածնիրութեան և առանդիւ վասնել զնոսա ,  
որով փախաղէր արժանի զնոսա կացուցանել Ասու-  
տածային օբհնութեանն :

“Աիրելի,” ասաց ինձ մին օր , “այս է Ժամանակ  
ի մասաղ միսս նոցաւ արշալուսելոյ զբոյ Ասո-  
տածածգիտութեան : Ամենայն ծնողի ընական ներզոր-  
ծութիւնն այ , իւր մանկանց բուռոյն և օդախն հե-  
ռենել . բայց՝ այս ընական ներզործութիւնն մասամբ  
իւրիք ամենայն կենականիք և ունեն . ձուկն ի ծալի ,  
թուչունն օպային , և անսառունն ի ցամաքի ունեն  
զնոյն ներզործութիւն , իւրեանց ծնեզաց հետեւոյ -  
բայց մարդ՝ օր է պատկերն Ասուտածոյ , շնորհազար-  
գեալ է բանականութեամբ առ ի Հանացել ոչ մի-  
այն շեշիւուռ բարիս և զօզուտա , այլ որ ի վեր  
է քան զերկրաւորս , այն է շեշինուին . և որպէս  
զիսես՝ օր չար սատանայն տռաւել անմեղ և մի-  
ամիտ մանկանց հենայ է առ ի շուտով խարել և  
կրուտանել , վասն որոյ՝ պարտականութիւնն ծնո-  
ղին է , օր իւր զաւակաց՝ անմեղ և միամիտ Ժամա-  
նակումն , լաւ հետեւ , և Ասուտածային Հանա-  
պարհն ցուցանել նոցա . ծանուցանելով իւրեանց  
Ասեղծողն և Փրկիչն և Խոստացեալ Արքայա-  
թիւնն : Եւ Հաստատ լիր , օր այսպիսի Ասուտած-  
գիտութիւնն կ'տայ մանկանց իմաստութիւն . ոչ թէ  
միայն իմաստութիւն՝ այլ և օբհնութիւնն Ասո-  
տածային կ'ի ջանի այն մանկանց և այն տան վերայ :”  
Մին սովորութիւն ևս ունել Պարսի Աւհամզն ,

այն է կանուխ քուն լինել, որով և առաւ օտն և կանուխ կյառանէր և այս կանուխ վեր կալն իւրն միշտ աշխայց, զուարթ և առողջ էր պահում: Այս քանա իւր անսայինն էր, արտաքինն ևս նոյնագէս՝ էր շատ վայելուց և այսինքն ընդ ամենեւեան սիրով ընթանայր և խաղաղութեամբ: և յիւրմէ կարեոր օրնութիւնն չէր խնայիլ ի կարօտաւորաց:

Պատուելի Տիկինն Վահագնի՝ զկնի պարնի բան ու զործ զնալոյն, իւր անսային զործոյն կ'հետեւէր, և եւթէ ի կարից պարապէր՝ և ոչինչ այլ բան չունենէր, պարապ ժամանեակն ընթերցողութեամբ կանցուցանէր: Իւր ուշ և միտքն զընթէ բոլորովին էր իւր զաւակաց մերայ, զորս իրաւապէս կ'համարէր իւր ճշմարիտ զարդն: Նման այն Հռավապէս տիկնոջն որ երր իւր զբացին ցանկացու նորին զարդեղէնն անսունել, զիւր զաւակունան եցոյց, ասելով՝ ահա իմ զարդքն: Այնպէս այս Հայ տիկնոջ աչքն հչ զարդ էր զուման և հչ այլ ինչ՝ բաց յիւր զաւակաց, որոց մի ոքն՝ Պարսն Վահագնի յաններկայութեանն, ինքն կ'ջանանայր զարդարել իւր կարաղութեան համեմատ: Մին բան ևս ունէր, որ իւր տունն միշտ յոտակ և մաքուր պահել կ'տայր, առանց որոք աւելորդ զարդարանաց:

Եշը Պարսն Վահագն տուն զայր, և պատահմարար ախուր, կամ մասձ ոզութեան մէջ, և կամ որոք պատճառիւր իւր քաղցր ընաւորաւթիւնն կորուսեալ լինէր, կ'ջանայր արժանաւոր տիկնոս այս փարասել

զվեշան՝ ոչ միայն իւր զու արձալի խօսակցութեամբն այլ և կենդանի հաւատութիւննելով նորաւ այն սուրբ և երկնաւոր Յոյժն, որ ոչ երբէք ամաչեցուցանել զունողու իւր. և այսպէս ամենայն ջանիւք զուն կզործէր մտածողութիւնն ըառնալ ի մոտաց Պարնին:

Երկու տղոյքն յամեն աւուր ու բախ ու բախ կերթային զպրատուն. քանզի իւրեանց դասն սերտածլինելով, միշտ զովասանութիւնն կ'սատնային յիւրեանց վարժապետէնն Փոքրիկ առ ջիկն նոր այրութենն էր սկսել ասմն կարդալ, իսկ Սաթինիկի ի տան պարապէր վարժել զովորածն. և օգնական լինել իւրմօրն:

Ծառ զեղեցիկ էր Սաթինիկ, — Ը հշմ: — Կրկին հազարցիր՝ ընթերցաղ. աղաշեմ զքեզ թռող պատմութիւնս առեմ: — ըստց իւր զեղեցկութիւնն ոչինչ էր համեմատութեամբ կատարելու թեանն: Երբ խօսման լիներ հետզ, կ'ցանկայիր որ անընդհատ խօսեր. — Ը հշմ: Թռող Պարոն պատմութիւնս աւ արտեմ: — այնքան քաղցը կերպ ուներ, և այնպիսի նազելի— Ը հշմ, Ը հշմ: Ուրեմն՝ Պարնիք էլ չեմ ստելէց. քանզի երեխ զուքում էք ասել թէ բան հասկացաք, և կամիք ասել թէ հասկացեալ էք վերոյիշեալ տիպութեանս պատճառն: Երբէր որ չէք իմացեալ: Ես միայն Սաթինիկան առաքինութիւնին կամեցայ զովել, չկարծես թէ— Ը հշմ:



## ԳԼՈՒԽ Զ.

Առաջանիքութիւն :

Մին մարդ երբ մեծարանում գլուխ յինի , կամ զու արհարանում ծուշերն ուղղական , և կամ միտքն այլ լինելով այլ իմն բան խօսման լինի . Բնաւ շոյա կ'կորութիւ բառ իմն հազարոյ ձայն որպէս ԸՆՃԾ իւր ականջն անկանի , որքան որ ջանանայ որոք մին կերպ կցկցելով շինել , չէ կարող . այլ ինքն ինքնին զինքն կ'մասնէ . քանզի մին շարժուածք իսկ երբեմն բաւական է միանգամայն ամբոխնել , վեր ի վայր առնել և կարձել զպատմութիւնն :

Այսպէս ևս յանցեալ զլեայ ինձ պատահեցաւ , և չկարողացայ Ատթինկան — ԸՆՃԾ :

Խնդրեմ ներեւ . աստ հազարոյ բան չկայ . միայն լիզու ս փոքր ինչ թեքու էց : Կամ ի տակն , թէ չկարողացայ Պարոն Աւհազնի տան պատմութիւնն միրջ տալ : Ինչ և իցէ Հարկութոր է այժմ միւս Պարնաց մասն ևս փոքր ի շատէ ծանօթութիւնն տամ , մանաւանդ իմ սիրեցեալ բարեկամ Բարեկնի

Այդ՝ Բարեկնա այս էր մի մեռյն զաւակ Պարոն և Տիկին Զարմայրայ . որք զոլու երբետ աստիճանի , իւրեանց ու շն միանգամայն այս էր . որ զոնէ իւրեանց զաւակն իւրեանց աստիճանիցն ըսրձանայ : Այսու զիսմամբ մեշա կ'յորդորէին , կ'ստիպէին Բարեկնին որ Ինդիկն ար Ֆուազազն ար խօսի .

քանզի կարծում էին խղչերն՝ որ ինդիկի և ֆռանսի լիգուն որ ստիրի, Երօփացւոց բոլոր զիտութիւն, ու առաջն և իմաստութիւնն իսկայն կ'մտի իւրանց որդւոյ խելքն: Էշ մին չէին մասած ու մ' որ "Ակիզըն իմաստութեան է էշիւ Տեառն." քանզի "Տէր զերկիւ զածո իւր վառաւոր առնե: "

Բարեկնն մի միայն որդի լինելով, որպէս առաջար, և իւր ծնողաց միտքն այն լինելով որ Փըստ ու էաւազին անձն զատնայ, վասն որոյ չափայ գուրա սէրն մին կողմից, յորգորանքն միւս կողմից, լիալիր արձակութիւն էին առել իւրն լուսաւորութիւն էր զակէլ, չզիտմ-երկու անզամ հանգիպիլումն՝ որ քան որ իմացեալ էի, արդէն ծանուցի ։ մեացեալն այսուհետ զէնի իմանալոյս կ'ծ անուցանեմ:

Այժմ Պարոն Արայի և Պարոն Գևորգի մասին ասեմ, որ որդիք էին ծերունազարդ առն երեւելոյ առաջին աստիճանի, Պարոյր անուն: Որոյ էր և զուսոր մի-ԸՆՉ-Չ-Չ-Ե-Լ, չէ ։ Հազարդ թաղ՝ ընթերցնդ, միայն մի անզամ հանգիպիլում՝ ոչ ծիզ ծանօթութիւն եմ զակէլ, և ոչ կարող եմ տալ: Որ քան որ լակէլ եմ այս է, թէ ծերունին և թէ իւր ոփեինն շատ սիրեցեալ և պատուեալ էին ՚ի համայնից աղդայինց:

"Օ՛եր ՚ի տանէ քումմէ մի սրակասեսցի.՝" շտումմծ օրհնութիւն այ վասն Ազգի, որպէս քաջ զիտէք վասն որոյ և ևս ցանկամ որ այսպիսի յաւզեկէլի ծե-

ըունիք մի պակասանցին ի մէնջ , զի իւրեանց բարի օրինակաւ , բարի խրատուք , և բարի օրհնութեամբ զօրասցին , աճեսցին , և նոցին նման առաքինութեամբ ծերասցին մեր սիրեցեալ պատանիքն :

Այսքանու առ այժմ բաւ ական կ'լինի վասն ձերոց ծանօթութեան : առ ի հմանալ թէ որպիսի ոք եին հանդիսացրածս անձինքն . որոց այսուհետ պատահելով՝ յուսամ առաւել ծանօթութիւն կ'ստանէք : Արդ՝ համեմատ չորորդ զինում պատմածիս , գնացաք Տէր Յուսկին տեսութիւն , և զտաք զնա զբաղեալ ի ապարանի :

Չկնի սովորական ողջունատրութեանց և յարգութեանց , եհարց զուարձալի քահանայն . “Այս պարնիկն կարծեմ նոր է եկեալ , և բերեալ ես տըպարանս տեսնի :”—Որում պատասխանի աբար Պարսն Ահազն թէ՝ եկեալ էաք յայցելութիւն Վիշին , և բարերադտապէս դառք զինքն անդ . որուլ՝ որպէս կասեն , երկու ձնձզուկք միասեղ որս չ'որ արարինք : “Բայց՝ իրաւն զարմաման ամ , հրամանքդ վաստակման չ'ոս այսպիսի միշտ աշխատութեամբ :”

“Աստանկ , սիրելի , ինչ վաստակ . ինձ համար այս զուարձութիւնն է : Ո՞ի թէ զու ինձ չես ձանալում , որ այլպիսի հարց ես գձում : Պարապութիւնն է ինձ աշխատութիւն . այլ այսպիսի գործ իմ միուքս միշտ զբաղելով , ինձ զուարձացանում է . և որքան վաստակման եմ , այնքան առաւել ցանկաման ամ աշխատիլ . քանզի ինձ սովորութիւն է

եղեալ : Թնողեալ այս , իմ պարտականութիւնն է վաստակիլ վասն Ազգիս :

“Բայց հրամանոց վաստակին արդեօք հասկաման են :

“Աիրելի , ես շնորհակալ եմ : Այս կողմարենքի ժաղավուրքն միշտ աղքասէրք են եղեալ , և միշտ ևս կլինեն : Սասուած իւրեանց հաստատուն պահացէ : Այս գործն փոքր բան է . քան զայս մեծամեծ բանէր են արարէլ . այսինքն զանազան Ազգային շինուածք են հաստատէլ , որպէս զյաւերժական իմն մահարձան անմահ յիշտատակի իւրեանց :

Յետոյ սկսաւ այս արժանաւոր անձն , իւր յառաջադրութեանց վերայ խօսել . թէ Բ'նէլ այ ուղղում տպել տալ , և կամ որպէս ծաղկեցուցանել զգրագիտութիւնն . և այսպիսի բաներով ձեզ միջոց անցուցանելոյն յետ , զարձաք ի տուն :

Ի հանապարհի լաւ նկատեցի որ Պարսն Ամհազնի միտքն ըռլորովին զրաւեալ էր տպագրատան վերայ : “Երանին թէ , Արամայիս ,” ասաց ինձ . “Երանին թէ այս ըռլոր առաջադրութիւնքն ի զլուխ զնան :

Որում ’ և ես յիմում սրտի , կրկնեցի ամեն :



## Գ. Լ. Ա. Խ. Խ. Ե.

ՃՇՀԱՐԴԱՆԱԼԻՆ :

“Հապմ, միւս անզամ՝ բարեկամք իմ, միւս անզամ օ՞ն ՚ի խրաման :”

Այսպիսի մոտած ողութեամբ՝ դենի ՚ի տուն հասանելոյ, հրաւիրեաց զիս Պարոն Վահագն նստիլ իւր մօտ : “Արամայիս, սիրեցեալդ իմ, սիրեցեալդ իմ Արամայիս,” ասաց . “ահա այրն՝ որում խորհրդատրեցի քեզ միշտ հանդիպես, և օրինակ առուս : Քանզի՝ մարդ ում հետ որ ընկերակցութիւն պահի, նորին օրինակին կհետեւ ՚ի . վասն որոյ ցանկամանամ որ դու այսպիսի ազգասէր և բարի անձանց մէջ մըս ասս, ընկերակցութիւն պահես, և իւրեանց խրատանուն և բարի օրինակին հետեւլով՝ ջանառ զու ևս օրինակ բարի գառնաւ ՚ի վերայ աշխարհի :

“Չեմ ասում թէ անձնային օգտիդ չհետեւս . չէ, այդ չէ իմ միաքն : Այլ կամսմ ասել, թէ . քեզանէ կարեռը ազգասիրութիւնն չխնայիս : Զանազան տեսակ ազգային բաների կհանդիպես քոյ ժամանակումն . որոց՝ քեզ անվեսա, կարող կլինես օգնել և յառաջացուցանել խորհրդով, բանիւ կամ զործով . ահա՝ յայդպիսի բաներում պիտի ազգային արիւնդ շաբժես :

“Նաև պիտի անկեղծ սրտիւ Ազգիդ սիրես , և  
միշտ պաշտպան կատ Ազգիդ վառաց : Վա եղբարց  
մէ ջ թէ մին գտանդի : որ սղալ կարծիք ունենայ .  
Հանաս քաղցրութեամբ ուղղել . Համարելով նորին  
սղալութիւնն առաջ եկեալ յանհամակացողութե-  
նէ : Այլ էթէ յայլազգեաց արհամարհանք լսես  
ընդգէմ Ազգիդ , զգոյշ չտանես . հա , չտանես .  
ընդգէմ քեզ արհամարհանաց այնքան փոյթ չու-  
նենաս , որքան քոյ Ազգի : Ախ . թէ ամենեքեան  
հետեւնին այսմ օրինակի : Բնչ շոյտ մօր միամիտ  
պատահց հանն զիրծ կ'մնայր ին մնասու ։”

Գիտնառիւծի Կաթլէւնի վերոյ բազումք հիմ-  
ման են , որ ՚ի սակաւ միջոցի զանազան զոյն է ժո-  
խում . բայց մարդոյս ոքանչելի գեմքն տռաւել  
պիտի հիացանէ , որ ՚ի միում վայրինին տևամանես  
սպարզ ճերմակ , մինէլ տեսիր դալիացաւ զեղնա-  
շոռթուէց , փոքր միւս ևս և կ'տեսնես կ'կարմէի .  
և այս ըոլոր փախոխութիւնքն ՚ի քթթիւլ ական  
անցանում է , և նոյն պայծառութիւնն այ գոլման  
կը կին :

Սմին նման և Պարսն Վահագնի զուարթ գեմքն՝  
վերոյ զրեալ Հակիրճ պատմութենումն , երեք կերպ  
զոյն վոխեւց . սկիզբն սպիտակ պայծառ , բայց վեր-  
ջի պարբերութենումն՝ չկիում յինչ պատճառէ  
շորժեալ , փսխեցաւ դալիահար ; և վերջումն կար-  
մէց որպէս արիւն : Սակայն անցու սմենայն յական  
թօթափեւ . և բնական զուարթութիւնն թագու.ս-

Դեա յարժանաւոր աթոռն իւր՝ աշխինքն կը գէմս պարնին։ Որ զինի սահաւ հանգարտման, կը իլին սկզբաւ խօսեւ։

“Քանի օրով յառաջ՝ զու ցանկացար իմ հետ առարկութիւնն առևս, Աքամայիս, ՚ի վերայ լիզուազիտութեան։ յորոյ վերայ խոսացայ հանդարտ ժամանակում խօսեւ։ Ներկայ միաքս լցւալ է այդպիսի բանիւք, եթէ և զու յօժար կլինես ՚ի լսել՝ պատրամաւ եմ ես ՚ի ձառեւ։” Եւ ահանձնլով որ գէմքս բաւականին յօժարութիւնն էին ցուցանում ունկնդրութեան, սկսաւ ասեւ։

“Եղեն զու բաւականին կարգացեւ կլինես զանազան զբութենում, որ հարկ և պարտ է մեզ՝ մեր լիզուն լսու կերպ սովորեմք առ ՚ի մեր Ազգութիւնն պահպանել ։ վասն որոյ աւելցրոք Համարիմ դիմացաւութիւնն պատճառեւ քեզ կը կնքնութեամբ։” Ասո միայն կիսում, թէ արդեօք հարկաւոր է մեզ այլոց ազգաց լիզուս սովորել, և կամ որքան։

“Նախ քան զամենայն սղիսի ընդունես որ մեր Ազգն առաւ եւ քան զայլ ամենայն ազգս ունի ընդունակութիւնն զամն զայլ և այլ լիզուս սովորելոյ։ Ես չիսուիմ ՚ի վերայ միոյ անհատի, քանիզի քաջ զիտեմ որ յամենայն ազգաց միջի կը դասնուին մի մին մարզիկ, որ կարօղ են բազում լիզուս խօսիլ։ իմ ասութիւնն ՚ի վերայ ըոլոր Ազգի միոյ է, և ես աներկիւզ հրատիրեմ՝ կամ քոյ բարեկամ բարեկէնի պէս ասացից՝ ՚ո՞ի Փոյ իսուեն, ո՞ք և իցէ ասու-

թե անս ներհակն ցուցանել։ Կայ որոք մարդ որ կարդանայ գոնէ մին Հայ ցուցանել՝ որ երկու լեզու պիտակ լինի. —իմացիր, ես Հայ եմ առում որ Հայերէնն լաւ տեղեակ լինի. —այն ինչ երեք, հինգ և եօթն լեզու խօսեին գոզցես համարակ է ի մեր միջի։ Չե, չե. ընդ ամենայն աշխարհ և ոչ մի Ազգ կ'գտանուի, որ յայսմ հաւասարեցի՝ կամ զոնէ կիսով չափ համեմատեցի ընդ մեզ։

“Այս կարողութիւն մտաց՝ որ յատուկ սեպ հական է Ազգիս, կամ՝ պիտի համարենք որ առանձին իմ շնորհ է Սաեղծողին, որ մեր Ազգն միայն կարողանայ ի բազում լեզուս խօսել, և կամ պիտի համարեմք որ մեր լեզուն լինելով նախկին լեզու մարդկութեանս՝ որով և արմատ ամենայն լեզուաց, այնու աղաղաւ. հեշտեաւ կարողանան եմք սովորել զայլ լեզուս՝ որպէս՝ զբաժանեալ Տիւզ մերոյ լեզուի։

“Արդ՝ տեսցուք եթէ արգե՞օք հարկաւոր է մեզ զայլ և այլ լեզուս սովորել։ — Արքան լեզուս կարէ ոք խօսել, առէ Մեծն Կարուս, այնքան անգամ և ինքն մարդ է ։ — Ըստ խելօք ասութիւն իբրաւ է. քանի լեզու որ մին մարդ կարողանայ խօսել. համարելի է որպէս այնքան մարդիկք է նա։ Ամենայն հարկաւոր է քննել, թէ որքա՞ն պիտի սովորեմք։

“Առ այս կպատասխանեմ, թէ այնքան պիտի սովորեմք՝ որ լեզուքն մեղ համար որպէս մին զործիք շինեմք, մասն մեր բան ու զործն յառաջ՝ կամ որոք

յառաջադրութիւն ՚ի զլուի՞ տանելոյ : Զոր օրինակ մի հիւսն խոսուո՞ , որ տեսակ տեսակ զործիք այ բանացանում վասն իւր յառաջադրած զործն շենելոյ . նոյնպէս և մեք պիտի զանազան լեզուս որպէս զգործիս բանացաննեմք վասն մեր ազգային յառաջազիմութեան , կամ առանձին բան ու զործի համար :

“Արտաքոյ յայսմանէ՝ ես աւելորդ համարիմ , և ոչ միայն աւելորդ այլ և Հայոսիոր իսկ : Վեստիութունիւնն այլ ճառում կարգացէլ կլինես , վասն որոյ աւելորդութիւնն քեզ ցաւցանեմ : — Ի՞նչ ակընկալութիւնն , կամ ի՞նչ զիտումն պիտի ունենամք մեք , վասն այլազդի լեզու նախաղասելոյ կամ աւելի սովորելոյ քան զմերն : Ես ոչինչ չեմ տեսման : Եթէ ասեմք՝ որ առանց Երօփացւոց լեզուի , մեր Ազգն չէ կարող յառաջանալ , ես կասեմ չէ , այդպէս չէ . Երօփացւոց լեզուն ոչ՝ այլ նոցին ուստամ , զիտութիւնն և արհեստն է , որ մեզ կ'յառաջացանի : Քանզի Խնդրիզն իւր լեզուաւն , Ֆռանսիզն իւր , և Գերմանացինն ևո իւր լեզուաւն են յառաջաման . միայն թէ՝ մինն միւսի լեզուն իւր համար մին զործիք է շենենալ վասն նորին զիտութիւնն և արհեստն շահեցուցանելոյ իւր Ազգին : Վասն որոյ և մեք մեր լեզուաւն կարող եմք միւս ազգաց պէս յառաջանալ . այլոց ազգաց լեզուն մեզ համար մին զործիք շենելու : — Կամ վասն առանձին օգտի՝ ի՞նչ ակնկալութիւնն պիտի ունենամք . արգենք զինու որական թէ բագաբական : Բայց՝ առաջին պաշտօնի միջում և ո

այնքան գեղեցիկ կարող կլինի Հայն իւր լեզուաւ-  
թաւը բանացանել, որպէս միւս այլ աղջք + որոյ  
ի վկայութիւն կարծեմ հարկաւոր չէ լինել օրինակ  
տալ + և ՚ի քաղաքականութեան միջի՝ կայ ներկայ  
Երեկի անձն, որ երեք թագաւորաց փոխխռու-  
թիւնք է տեսեալ, և յամենիցն ես ոպատուեալ և  
մասուաւորեալ + և՝ թէ և շատ սակաւ ծանօթու-  
Ե ա բ ա ն ա ն ա ն ի ա ն :

Պարոն Զառ Զ տեղիք զատանելով, սկսաւ յետ այնորիկ առ սակաւ սակաւ ըրեւ ական հատանել զերօնաւ իմով, զոր յոյժ վարպետութեամբ ՚ի զործ զնէր. քանզի զամենայն զմեքենայական զործիս իւր կանգնէր որպէս թէ ընդգէմ Լատին գաւանութեան, և կամէք խափս աալով ըրեւ իւրօք զիմովս : Սակայն շնորհիւ ծնողաց և ուսուցչաց իմոց՝ որ ՚ի մանկութեան, և բարի խըասիւք Պարոն Վահագնի և այլոց նոյնանման բարեսիրո բարեկամաց, փրկեցայ ՚ի լարեալ որոգայթից Պարոն Զառ Զայ, և զրեցի զամ' անցսն Պարոն Պարոյրայ. խնզրելով և ընդ նմին հանել զիս և տալ յայլ իմն զպրատուն, ուր ապահով մնայցեմ ՚ի փորձութենէ :

Սակայն՝ որպէս կասեն, անձրենի տակից փախնելով անկայ շռնօրթակի Խողովանի տակ. քանզի Պարոն Անսելմոս նոր վարժապետո, ունէր զիսորամանկութիւն Զառ Զայ լիուլիր, յաւելիսալ ՚ի նոյն և զանազորունութիւնն: Այսպէս ուրիմն սկսաւ նախ զովիլ զիսհական զգուշաւորութիւնն իմ, խնզակից լինելով ինձ ՚ի վերայ փրկութեամսն ՚ի մեծէ որոգայթէ, և ապա սկսաւ կանգնել զմեքենայս իւր նմին նման ընդգէմ առաջին վարժապետիս. յորոյ վերայ յաղթանակ կանգնելոյ պէտք ոչ էր մեծի նեղութեան, կամակից ունելով զյօժարամառութիւնն իմ: Ծեա-

այսորիկ սկսաւ զվարդապետական քարոզութիւն ,  
մեծ հոգ ցուցանելով . մասն փրկութեան հոգւոց ,  
որում մ ժայխակցութիւն իմ ստանալով՝ սկսաւ ապա  
առանձնակի գիրկութիւննեւ հոգւոյ խորհել :

Այլ զբնչ օգուտ ինձ հրկարել ի վերայ այս-  
պիսի անքրիստոնէամային բանից . այսքան միայն  
ասեմ որ . յաւուր միում Հայկայ արիւնն շարժե-  
լով յերակունա իմ , “Պարոն Անսելմո , ” առացի .  
“քոյ քարոզութեան հետեւանքն ըոլորովին ներհակն  
են մեր Երկինաւոր Վարդապետի պատուիրանին . քան-  
զի թէ իս հետեւեմ քոյ վարդապետութեան , պիտի  
հեռանամ յիմ Աղքային հաւատոյն , և զուցէ  
Աղքէս իսկ . և մի արացէ Տէր , զուցէ թէ ատե-  
լութեամբ և ո բերիցիմ առ Եղբարս իմ . այն ինչ  
մեր հրկեսաւոր Վարդապետն եթող մեզ ի վերայ աշ-  
խարհի ի նշան իւր զԱլէր : Սիրով այսուիկ իս հա-  
ւատամ , որ Աղքային կրօն իմ ըաւական է առաջ-  
նորդել զիս յերանութիւնն ցանկացի . և եթէ այդ-  
քան փոյթ ունիս ի վերայ փրկութեան հոգւոց ,  
ահա բաց է քեզ ընդարձակ դաշտի մէջ Հեթանոսաց-  
որք ոչինչ իմիք այնքան կարօսին որքան անդեհեր  
և արի օրտից առ ի միջամբ իւ լիներոյ : Քանզի ես  
Քրիստոնեայ եմ և զաւակ . Քրիստոնէի . հաւատամ  
յայն զոր Հարք իմ հաւատացին և Սուրբ Եկեղեցի  
իմ քարոզէ : Այլ թէ զետ իչ հաւանիս իմ առու-  
թեան և հարկաւոր համարիս տարածել զանօհրու-  
թեան զվարդապետութիւն քոյ և ի մէջ այլոց

Քրիստոնեաց , ունք՝ ամբ յինէն ու ըեմն , և սերմունհան ի մէջ քոյոյ Ազգի . որոյ հոգն պիտի տռաւել Համարիցիս քանի զայլոյն :

Լուսթիւն իմ զայրացական տիրապետեաց զինի խօսիցու , և ամենայն ջանք Պարոն Անսելմոսի անմարթ եղեն առ ի թագուցանել զատելութիւնն . որ յզացաւ ի սրտի իւրաւմ : Զինի սակաւիկ մի Հոգի ամնեոյ , “Եթէ զու փոքր ինչ մոապրութեամբ խոկայցես ի վերայ բանիս , Արամայիս ” ասաց դեղնաշոռթ զիմօք . “երկրայիմ” ոչ որ խոկոյն փոխեցես զկարծիս քոյ . որպէս բազումք առաւել խելոք և Հասկացողք — ”

“Ոչ ընկունիմ , Պարոն Անսելմոս ,” պատասխանեցի . “քաւ լիցի ինձ ընկունել թէ նոքա ,” զորս նշանակել կամու , Հասկացողութեամբ են արարեալ կամ առնեն . քանզի վործառութիւն այս քանի առուրս ետուն ինձ Հաստատել քաջ ի մաի , թէ շարանարութիւն և անազորունութիւն յարտաքուստ — ”

— “Բաւ է , բաւ է , չկամիմ աւելի լսել ,” զոչոց Պարոն Անսելմոս զմնեայ կերպարանօք և ահարկուշարժուածովք . որ աղղեց ի յիս վհառա տալ Աստուծոյ որ յայլ երկրի չէի :

Խակոյն ընդ միայնանալու զրեցի առ Պարոն Պարոյր Հանել զիս և յայսմ գպրատանէ . որինակ զայս . “Ճառ ու դիդ ասաց՝ որ ասացն , թէ ասմուռի սուշ ձային ի հեռուստ շատ համեղ կ'թռւայ . և յիրաւ ի որ

այդպէս . քանզի թէ Պարոն ջառ ջ բաւ ականանայր  
կիսով , Պարոն Անսելմոս ոչ շատանայ եթէ ոչ բո-  
վանգակապէս շրջելով զմիտո իմ . վասն որոյ որքան  
կանու իր Հնար իցէ հեռացն զիս ի փորձութենէս ,  
և ես շատհամարեցայց զար միտնզամ ուսայս ցարդ :

Ելի ուրեմն և յայս պարատանէս՝ առանց իրիք  
ապաշտւանաց , մի մեռյն զեղջո էր վասն քանի ըն-  
կերտիցաց զորս անզէն թողի . ընդ որս բարեկամու-  
թեանն սէր սկսէ ալ էր յդամալ ի սրտի իմում : Ինչ  
և իցէ՝ ետու սոցա զիմ հրաժարականն ող չայն ,  
հանգերձ բազում բարեմադթութեամբ , և ելի  
ի պարատանէն : Անհարկ համարիմ նշանակել այս-  
քէն , թէ առաջին Պարմապեսն էր Պրոտէստանտ  
Միշների , և երկրորդն Զիզու իթ :

Զառաջինն սրում պատահեցայ՝ ընդ մոռնելո  
ի տուն Պարոն Պարոյըայ , էր Արաեմիս զբաղեալ  
ի կարի : Արդեօք որոք նոր զեղեցկութիւն էր սուա-  
ցեալ սա ի մեջոցի սակաւ օրեայ բացակայութեանս ,  
թէ որոք սիրուն անսած չլինելով յայնմ մեջոցի՝  
առաջնին գեմք ինձ այդքան քաղցը թուեցու . և կամ  
արդեօք սկսեալ էր նազելին Սաթինիկ ի մոռացնն  
անկանիլ , թողում քոյ կշռապատութեան Ընթեր-  
ցնդ . այսքան միայն առեմ որ զարդիս յոյժ զեղեցիկ  
երեւցաւ Արաեմիս յաչս իմ : ԱՇՏԻՆ լու ացեալ էր .  
ձայնն ևս բացեալ և ուրախ զիմօք զարդարեալ :  
Պատուելի մայր նորին զբաղեալ էր յառանին զործա-  
իւր , և յոյժ ուրախացաւ ընդ վերտգառնալ իմում :

"Ես չասացի՞ սկզբից՝ որ ունայն էր քոյ ժամանակ տանուլ տալն - և ոչ Պարսն Պարոյշայ խելքումն էր գորման այդ բանն - բայց լաւ էր որ քոյ կամացն էր թռղած մեալ կամ դուռ գալն , թէ ոչ ո զիտէ ինչ փորձութեան մէջ կանկանիր ։"

"Փորձութեան մէջ արդէն անկայ , Պատուելի՛ Տիկին ,"<sup>2</sup> ասացի ես . "այլ փառք Աստուծոյ փրկեցայ յայնմանէ անտի ձեր հրամանոց բարի աղօթիւքն ։" Յայս բան սակաւիկ մի շառագնեցան գէմք գեղեցկին Արուեմուեայ , սակայն Տիկինն իսկոյն սկսաւ . "Իրաւն տսեմ , քեզ համար ես աղօթք արարեալ եմ . և ուրախ եմ որ լսելի են եղեալ ։"

Զինի սակաւոց հանդիպեցայ մեացելոցն սմենեցուն առ հառարակ , և ին սեղանի սկսաւ Պարսն Պարոյր հարցանել դանցու անցից իմոց : "Իու չմիծտմառն էս ,"<sup>3</sup> ասաց . "թէ քոյ խելքովին ես դուրս պրծեալ ի նացին լարեալ թակարդիցն . այլ քոյ Ծնողաց և Խնամածուաց հեաւեռդութիւնն էր , որ փրկեաց դքեզ : Թէս սոքա քեզ ուսուցեալ չէն քոյ Ասեղծողի շնորհն , և քոյ Ազգի սէրն ի մանկութենէ քոյ սրտումն տապաւորած չլինէին , քոյ խելքն չէր կարգանալ զքեզ իրկել ի մեծ փորձութենէն յորոյ մէջ զու անկար : Ծնողաց առաջին պարտականութիւնն առ զաւակունս իւրեանց այդ է . Աերելի , զոր քոյն քեզ են արարեալ - որոց միշտ պիտի սղօրմի տայցես : — Բայց զարմանալի է իրաւի , որ զինի այսքան լուսաւորութեան և Նշմարտութեան տա-

բածելոյ կ միջի ստենայն Ռըհուռնելից , զեռ և սոքա ջանաման ան մեր անոնք Հօրի մէջ սպրդիւ մասնել և երկարառ ակութիւն արկանել , և ոչ երկնշին ի խարկութենէն որ հասանելոցն է՝ վասն սերմանելոյն զսերմն անոնիսութեան ի միջի Համագգեաց և Համեղարց :

“ Ուզգիսի անձինք էին — ” կառը Հարցանել Տիկինն այլ Պարոն Պարայր կարճեաց զիւռու նորա . ասելով . “ Կու լաւ դիան որ սորա սիրան լցեալ է խոժոռութեամբ , վասն որոյ ինչ շահ աւելի զրդուելոյ . մինչ դեռ քաջ զիւռն այզպիսի բան ըուլորսին ներհուկ է կամացու . պիտի ջանամք մին օր յառաջ մոռանեալ առլ : բ միանգամ անցաւն ։ ”

“ Տեսեր հօրս ընութիւնն , ” առաց Գեղամ զ զի յառնելոյ մեր ի սեղանոյն . “ միշտ այզպէս ոչ թողու իւր տանն որոք բանի վերայ վաս խռոնել . թէ լուռութիւն լինի շատ կիսափազի և կուրախանայ լուի և խռոնել և ա . և մեղ և ա միշտ այզպէս կ'խրառի առնել . քանզի միշտ լու խռոքերից օգուտ կծագի :



### Պ. Լ. Ա. Խ. Խ. Ժ. Ե.

թ.—————:

Ո՞ւ որքան Հարկուռ որ է ծնողադ , կամ ընուանեաց , կամ բարեկամաց և կամ խնամակուռաց . որ իւրեանց խնամասարութեան ներքոյ անկած ման-

կանց միտքն ի մասազութեան անդ մարզել առաջ  
քինական կանոնով ք և Քանոնի մաքուր է միտք  
յայնում ժամանակի որպէս զատիւակ անդրոշմ որսու-  
տառ , յարոյ վերայ՝ նախ քան զարսք մոլութեան  
պատկեր դրոշմելն , պէտք են փոյթ տանել դրոշմել և  
տպաւորել զատաքինական . զինի մի անգամ տպաւ-  
որելըյն , այլ աւելի նութեան չէ լինել անխռնջ  
պահպանութեան : Ուշ ոչ կարասցէ ի յուշ ածել  
զանցո հնգամեայ հաստիկի իւրոյ , այն ինչ կարծեմ  
բացու մք զատէիցին՝ որ ի խորին ծերութեան ես ,  
կարեն ի յուշ ածել զանոս պատահեալ ի շորս ամի  
հասակին : Զի որպէս ասի :

Պւառմն մանկութեան քանդ է ի քարի .

Պւառմն ծերութեան զիր է ի պաղի :

մանկական մի ք մաքուր լինելով և պառաստ  
վան ապաւորութեան , որ միանգամ նաև դրոշմացի՝  
անշնչելի մնայ անդ որպէս քանզիալ ի քարի : Եւ  
զի ՞ ՞ իտք մարդոյ հաստատակալ են ի խնամն շարի  
ի մանկութենել իւրմե՞ : մասն որոյ շատ հարկաւոր  
է որ ի մանկութեան անդ չանալ շրջել զայն յա-  
ռաքինութեանն հանապարհ , տպաւորելով ի նման  
զպատկեր իւր Առեղծողին , զուր Մարդկան , և  
զիսաւո իւրոյ Ազգի :

Ապա թէ ոչ ժամանեկ ժամանակն ապաշառութեաց ,  
և խղճուկ մանուկին՝ որ խայտայր միամին և անկաս-  
կած , և նազելով ձեմք ի միերայ երկրի որպէս զան-  
մեց զառն , առանց Խիթուույ եթէ ոխուրիմ թշնամին

մարդկութեանս սողոսկի յաներեւ ոյթս որսալ զանձնանմեցի , — ախ , նոյն խղչուկ մանուկն՝ զինի խափանի ՚ չարէն և անկման , զոչեացէ հառաջելով .  
” Զմեղս մանկութեան և զանգիառութեան իմոյ մի յիշեր Տէր .<sup>2</sup> սակայն և ոչ հառաջանք կարեն աւելիք զպատկեր աղիտից ՚ ի մանկական միտու անգ զրոշմելոց ։ Եթէ ՚ ի մասարութեան անդ ունէր մանուկն զիսելս կատարեալ հասակի , ոչ կարօտանայր արդեօք այլում օգնականութեան . այլ զի անցանեն ամք բազումք մինչ ՚ ի հասանելս կատարելութեան , և ՚ ի միջոցի անգ հասակին պատճենին զէպք բազումք և փարծութիւնք բազումք , յորոց մանկական միտք ոչ կարեն զգուշանալ , որոյ վասն՝ անհրաժարելի պարտականութիւնն խնամածուաց է հոգ տանել աւանդի իւրեանց .

Հանգոյն անցառոր ուղղորի զան ամենեքին յայս աշխարհ կատարել զբաժին միջակի վասն ինքեանց անօրինելոյ . անցանեն ընդ բազում երկիրս յածելով և ընդ բազում ևս միայն շրջապային մտօք . և առանցնորդութեամբ Կախախնամութեան հլանեն ընդ լիրինս և իշանեն ՚ ի խորս , անուանեն և Տաշակին զքաղցրութիւն և զգառնութիւն աշխարհ : ՚ ի միջրայ լիրին Մեծութեան զգուշացուցանէ Մենտոր մի երբէք մնծամոնել , այլ մեալ ՚ ի հաւարութեան . և մի իւրիք հաւարալ մնյողողողութեան , այլ ՚ մոտ ունենել զունայնութիւն : Կոյնապէս և ՚ ի խորս Զաջողութեան խրառէ մի իւրիք լնելու ,

այլ զգեմ ունել վեհանձնութեամբ . և յամենայն ժամ յամենայնի ունել զՅոյս մեծ :

Այսպիսի փորձառութեամբ անցանէ ծաղիկն գալար հասակի բազմաց . և երբ ժամանեն ի չափ վայելչութեան , անկարողութիւնն ելանէ նացին ընդ առաջ և ազգէ եթէ անցեալ է ժամն :

Ո՞վ մանկութեան երջանիկ օրեր . ախտո , ինչպէս շոյտ անցանէք . ով ոյժ , ով կարողութիւն , իւր , ուր փախչեք : Ո՞վ թէ որպէս անցանէ ժամանակն այն՝ երբ ոչինչ աշխատութիւնն կարէ վաստակեցուցանել զմանկութեանն միը կարողութիւն : Մանկահան խելօք կարծէ մարդ թէ կարողութիւն իւր ունել ունի մինչ ի սպառ . վասն որոյ չմանայ զյարդ իրին երբ ի ձեռնին ունի , և առա ախտույ . երբ շատ յետի է ախտուալն : Ինչն իցէ՝ յուսացեալ ի Տէր որ պարզեին է ամենայն բարութեանց որպէս և կարողութեան , ակն ունիմ զի շնորհօք նորին կարողացայց ևս ժամանել ի նպատակ իմ ցանկալի :

Այսու յուսով յուռաջ մատուցեալ սկսայց ՚ի սկզբանէ անտի պատմել զնոյն ինքն զԱրանայիսայ , զորոյ զվարուցն ոչինչ երկրայիմ և բարեմիտ ընթերցողք իմ փափազեացին իմանալ զզհարդն : Որոյ վասն՝ առեալ զթել պատմութեան ի սկզբանէ անտի , մատիցուք կարգաւ ՚ի ճառն . ինդրելով զընթերցողին բարեմիտ ունկնդրութիւն ի վարձիմոյս աշխատանաց :

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Ա հ ա մ ս ծ ու թ ա կ ա լ :

Թափւ ծննդեան Ըբամայիսուր ոչ է յայսնի, և ոչ  
անուն երկրին ուր ծնաւն - սակայն կարեմք խու-  
զարկութեամբ Հնազայն մասնից զառնել զՀայրե-  
նիս նորուն որ է Հայուստան : Երկիր սիրելի և ան-  
չալի , երկիր որ բղխ զկաթն եւ զմեր , որոյ և Հոգն  
է որՀնեալ : Քանզի ասու եթէ Համարձակեցայց  
ասել , արարաւ մարզն առաջին ի Հոդոյ երկրին -  
աստ Հանգեաւ երկրորդ Հայրն մարզկութեանս + և  
աստ նահի քան զամննեսին լնկալեալ եղեւ Քրիս-  
տոնէականն Տշմարտութեան : Աստի տիռեցան մար-  
դիկ ընդ ամենայն երևու աշխարհի : Ավուեցան և մո-  
ռացանի ամենայն ցեղք զնախկին Հայրենիս իւրեանց,  
բաց ի ցեղէ Քաջին Հայկայ + որ ըստ միհանձն ազ-  
նու ամսութեան իւրոյ ննկեաց խորազոյնս զծառ-  
ազգութեանն իւր ի բարելից երկրիս : Զօրացաւ-  
ծառս և մեծացու և ընդ Համանեաւ նորա երբեմն  
բազում ազգք Հանգեան : Յանցանել ժամանակաց  
և ի բազմանաւ մերոց մեղաց , անկառ երկիրն ընդ  
ձեռամբ այլոց ազդոց երբեմն անողորմից՝ ըստ  
չափու բազմութեան մեղաց մերոց . և երբեմն ողոր-  
մածաց՝ ըստ զթութեան Երկինաւորին . որք լրեցին  
և մեր ի վայր արարին , պիդեցին և Հերկեցին . սակայն  
շնորհիւ Կաթոսինամողին մեաց ծառն անդկանդ

ի առջւո՞ն : Եւ թէե հնացաւ և նու աղեցաւ , սա-  
կայն՝ արմատն օրհնեալ ելով , ոչ ոք խլել կարողա-  
ցաւ : Յարեան հողմք և մըրիկք և շարժեցին զծ առն-  
թափեցան պառողքն և տարեալ եղեն ի բուռն հոդ-  
մոյն ի չորեսին կողմունս աշխարհն : Կը որ անկաւ  
առ ճանապարհաւ՝ և եղեւ կոխան , և թռչունք երկնից  
կերան զնաւ . և այլն անկաւ յապառամի՝ և ընդ  
բուռնենին չորացաւ , առ ի չգոյէ հիւթոյ . և այլն  
անկաւ ի մէջ փշոց՝ և ընդ նմին բռնեալ փշոցն  
հեղձուցին զնաւ . և այլն անկաւ յերկիր բարի և պա-  
րարտ՝ և բռնեալ արար պառող հարիւրապատիկ :

Դ մէջ այսքանեաց թշուռառութեանց և ազգի  
ազգի պատմաց ու պատուհասից , յարեաւ և Ըահ  
Արքաս . որ զմայլեալ տեսլեամբ երկնարերձ ծա-  
ռոյն , ցանկացաւ ունել զպառուաստ իմն յայն-  
մանէ և յիւրում երկրի ի նորն թուզա : Ուր զար-  
գացաւ և զօրացաւ մինչ ի բարձունս ամբարձու .  
մինչ նախանձարեկ լինելով պարտիզպանին սկսու-  
անինամ թողուլ զինամեալն . յարեան և Հողմք  
մըրկածուփք , և զի խորդ էր և երկիրն , շատ չոյտ  
սկսան թափել պառողքն և ցիր ու ցան լինել ընդ  
ամենայն կողմունս Արեելից : Անկան ուր և անկան ,  
և շատ շուտով իսկ զօրացան . այլ՝ աւազ , հան-  
գոյն ինքնարոյս անկոց , որ որպէս շոյտաձին նոյնապէս  
և շոյտ թառամին . այսպէս և այժմ ի բազում  
տեղիս չեք այլ իմն յիշատակարան բաց ի հետոց  
զծ ելոց ի առի : 1 : Բայց և այնպէս կարեմք մեք

հաւաստել զԱբամայիսայ . եթէ էր ՚ի պաղոց անտի՝  
որք բռւռն հոդմոյն զօրութեամբ սփռեցան ընդ  
Արևելս : Այսքան ծանօթութիւն տուեալ , մատի-  
ցուք արդ ՚ի պատմութիւն :

Ծնեաւ Արամայիս ուր և ծնաւ , առ կուսակա-  
լութեամբ Խոլամայ Մեծի՝ յաւուր ուրբաթու :  
յորում առուր հարսանիք էր դրացւոյ ուրում  
Ակոսի . ուր և մայր նորա կոչեցեալ ելով . անդ  
երկունք ծննդեանն կալան : — Արդ՝ թողում քեզ  
Ընթերցնդ , հաշուել և գտանել դթիւ . ծննդեան  
սորա . որ յոյժ հեշտ եղիցի և դիւրին , եթէ զկերպն  
զիտիցես : — ՚Ի տղայութեան անդ անկաւ ընդ պատ-  
ժառարատութեամբ ակարութեան , որ չեթող զնա  
աճել ՚ի հասակ ազնն իւրոյ : Մինչեւ ՚ի չորրորդ ամ  
հասակին , յոյժ սակաւ դէպք եղեն արժանի յիշա-  
տակի : ՚ի հինգերորդումն ընկալա զերկուս խրատ ,  
որք ան ջենջ տպաւորեցան ՚ի յիշատակի ու շոյ նո-  
րուն : Մին էր ՚ի գորամազութ Մօրէն , որ վասն  
անշնորհ բարբառոյ՝ աղ ու բիրար ցանեալ ՚ի ըերան ,  
եհար ու ժզին . և այս մի միայն խրատ անզեն և անդ  
՚ի սկզբան՝ որպէս թէ զգենու մեաց յական ջին : Այսու-

---

1: ՌՆԵՐՆԱ ԳԵՐԵՆ ՊԱՅԼ ՃԻԼՈԴԻ ԿՈՐԱՆԻ , ԱՐԱՆ ՀԻՇԵՏ +  
ԱՐԺԱՆԱ ԵԱԼ ՀԱՆԴԻԱԲԱՆ : ԴԱՆԴԻ ԿՈՐՃԵԼԻ Է ԱԵ  
ՆԱՆԻՐԱԿԱՆԻ և կորդառուր : Թէ՛ զՅԱՆԿՊԱՐՀ-ՇՇ-  
ՇԵԱՆ ՇԱՆՉԱ ԽԱՐԵԱՆՅ , ՀԱԳ ԴԱՐԵԱԼ ահաւաշեալ իշեւ  
ՀՅՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՐՄԱՅԻՆ ԽԱՐԵԱՆՅ :

երևի թէ որքան օգուտ ծնանէ մանկան մի միայն խրատ՝ որ առանց ժամանակ կորուստ տալոյ, մատակարարի ըստ աեղուոյ և հարկաւորութեան - որով և փրկի մանուկին ՚ի բազմաց վշտաց հեռ զհետէ և առակաւ սակաւ կրելոց վասն նոյն յանցանաց : Միւս խրատն ընկալաւ ՚ի բարեյիշատակ Հօրէն, վասն խաղալոյ ՚ի փողոցի ընդ վատ ընկերաց :

Ողորմի՛ երկոցունց ես - քանզի ոչ միայն այսպիսի խրատիւք, այլ և ուսմամբ զիտութեան հոգ տարան ՚ի մանկութեան անդ տպաւորել ՚ի միտս նորազառաքինութեանն զիտութիւն : Այլ՝ ափսօն, որ շատ շոյտ զրկեցաւ Արամայիս յայսպիսի բարութեանց, և ՚ի մատաղութեան անդ վարեցաւ ծփիլ ՚ի վերայ ալեաց խոռվայոյզ ծովու աշխարհիս : Ելնա ՚ի նաւ զնալ ՚ի - :

Ո՛ւ միամտութիւն, միամտութիւն - կարծէր Արամայիս յաւուր բաժանման, թէ յառաւօտու հասանելոց էր ՚ի Հնդստան և յերեկոյին դառնալոց առ ՚ի նն ջել ՚ի տան : Քանզի երբէք անցեալ չելով ընդ ծով և ոչ տեսեալ զայլ իմն երկիր, կարծէր եթէ չգուցէ այլ քաղաք բաց յայնմանէ անտի ուր ծնաւն : Այսքան խուփ է միտք մարդոյ նախ քան զաշխարհատեսութիւն : Ինչերցէ սկսեալ էր ուրախ ուրախ անցուցանել զօրն, զմայլեալ ախործելի տեսարանօք ափանց ծովուն. ուր ծառք բարձրաբերձք երեւէին որպէս թէ վազս առեալ մի զմուզ ընթանային ՚ի յերկրի :

Զին սակաւուց զգաց զգլիսյն զիժ զալ, և ամենայն զգացողութիւնք՝ որ միանգում պատահեալ են ծավային ճանապարհորդի, պատահեցաւ և ամա։ Ասկայն քան զամենայն մեծ միշտն եղեւ, երբ երեկոյն ժամանեալ՝ չետես Արամայիս ոչ զտուն, ոչ զընտանի և ոչ զբարեկամն իւր։ Թողումք Պատուելի Ընթերցողաց նկարագրել զվեշտ նորուն և “Մինաք բարեաւ, Աիրելիք իմ, մնաք բարեաւ, յամայր երջանեկութեամբ” սկսաւ Արամայիս հառաչ չելով կարդալ իսորտի իւրում, մինչ անուշակն քուն եհօս նմա յօզնութիւն և պարզենաց ճանզատութիւն։ Արդ՝ մաղթելով նմա բարի ճանապարհ մնացուք պատմութեան անցից նորա ՚ի ճանապարհորդութեանն։



## Դ. Լ. Ռ. Խ. Խ Ժ. Ե.

Ծաղկաւ։

Անքաղաքավարութիւն մեծ լինէր թերեա՝ եթէ առանց փոքր ՚ի շատէ ծանօթութեան զջուղայ։ յառաջ անցանեաք ՚ի պատմութիւնն այլոց քաղաքաց։ Ասկայն այս ինչ յայտնի լիցի, զի մեք ոչ երաշխաւոր լինիմք տալ զսոյզ և ճիշտ պատմութիւն։ քանզի՞ որպէս յանցեալ զլիոյ ասացաք, չունելով զյիշատակարան իմն ՚ի ձեռ ն, աւելի

քան զկար մեր համարեմք զնոյն . և թողումք հարա-  
ար զբացածիւն կատարելոյ զայն՝ զոր մեքս ան-  
կարանամք : Ոչ անհնարին իմն է ձեռնարկն , նա-  
մանաւանդ ամենադիւրին յոյժ վասն ջուղայից-  
ւոց . որք՝ ոչ միայն զպատմութիւն երկրի և զիւ-  
դորէից իւրեանց , այլ և զանցս մերայնոց սփռելոց  
անոնի ընդ ամենայն կողմունս կարեն հեշտա-  
հաւաքել . յօրագրութեանց , ի յիշառակարանաց  
և ի համապատասխանութեանց անցնոց : Յուսալի  
է՝ զի սակաւատող զբութիւնն առիթ յարդորանաց  
լիցի Հայրենասիրաց , կատարումն վասփագանաց  
բազմաց տալ . որ և օգուտ մեծ մասակարարիցէ  
Ազգային պատմութեան :

Միւս տեղեկութիւնն ևս արժան համարիմք տալ  
Ընթերցողաց մերոց . զի հատուկաիր նշանաքն Ազ-  
գային տեղեկութեան՝ զոր յառաջ եղեալ իմք  
ի զրել , յականջալուր զբուցաց նն ամենայն . և  
պատմիչքն ունելով զավորութիւն չափելոյ զժա-  
մանակ պահմութեան իւրեանց՝ ժամանակոք իշ-  
խանաւ որութեան Ակսի կամ Բաքոսի , զժուա-  
րութիւն զժուարին կամ անհնարին լինի զանել  
զՃիշտ ժամանակ : Օրինակի աղազաւ , տես թէ կա-  
րող իցես զտանել զժամանակ այսորիկ՝ որ Տշմար-  
սապէս պատահեալէ : Կամելով ուրումն իմանալ  
զթիւ մեկնելոյ իւրոյ ի տանէ իւրմէ՝ խնդրեաց յու-  
մեմնէ զտանել զայն : Ֆաթալի Շահն նոր թաղթ-  
էր նստէլ , և օրն լինելով շարաթ հայրս զնացեալ

էր ՚ի բաղանիս հաճամ . իմ մայրն զնալոյս պատրաստութիւնն էր տեսման , և ես լալման էի և տուժեմ զնալ . Հայրս ՚ի տուն եկն ասաց պիտի զնամ : Քանի տարի եղեւ :

Այդ ըստ Ազարիայի 230 ամօք յառաջ շինի Նորն ջուղայ . և զի Շահ Արքաս , բատ որում Մեծն կոչեցաւ . Էր և իրաւագես քաջախորհութգ և աշխարհաշէն , մեծամեծ արտօնութեամբ քաջալերութիւն բազում տայ Հայոց բնակչաց քաղաքին՝ բարգաւաճել զիւրն տէրութիւն ՚ի ձեռն վաճառականութեան : Ապրժապետքն արհեստին ոչ վերջունեցան յերեան ածելոյ զկարողութիւն հանձարոյ իւրեանց . ձգելով զաշխարհս հեռաւորս ՚իմի հազորդակցութիւն կապակցութեան , ՚ի ձեռն տուր և առաւթեան : Աստի անցանելով և միջամաւ իւրնելով ընդ ամենայն մասունս Հնդկաց , Չինաց , Բարմայից , Ցամաքակղզւոյն Մալազայ , Սիամայ , Ջավայ , և ոյլոց կղզեաց . և անտի ընդ Ծոցն Պարսից անցանելով ընդ Գօմըերուն կամ Բանդար Արքաս , Բասրաս , Բաղդաստ մինչև ՚ի Մեծն Պօլիս :

՚Ի քաղաքիս Մեծի էր՝ որ ջըխուդ Մինաս ջուղայեցի կուտեաց զհարսութիւն իւր արքայակայիել : Քանզի անցեալ վաճառք անդր պատահէ ջխակ Եբայէշառ ուրումն . որ բարեկամութիւն ցուցանելով երթայ ՚ի տուն Մինասայ . և անդ տեսանելով զագի ազուեու , մեծ զումար գբամոց մատուցանելով զնէ զնոյն . ցուցանելով թէ ՚ի մեծի

յարգի էր այն ՚ի միջե Օսմանցւոց : Յերկրորդում  
Նուազի ճանապարհորդութեան , տայ Ամինաս զամե-  
նայն զոր ունի և զնէ զազիս աղուեառոց . սակայն  
փութով իմանայ եթէ պատրեալ էր ՚ի չարամիտ ջըխ-  
աէն : Առւթանն՝ ըստ սովորութեան այնց դարձուց  
ծառաւալ կերպարանօք , զտանէ զՄինաս յառուր  
թաթաթախու՝ զառն տիսուր նատեալ առ զբան կա-  
րստանարահին : Հարցանէ զազգէն՝ և իմանալով եթէ  
Հայ մահառական էր , հնարէ տեղեկանաւ զպատ-  
ճառ արտմութեանն . քանզի Դուռո՞ն Օսմանեան  
միշտ ճանաչեալ է զյարգ և զպիտանութիւն մա-  
հառականաց՝ մանաւ անդ Ազգիս : Պատմէ Մինաս  
զ չարահնարութիւն ջխտին , և անծանօթ Առւ-  
թանն արզահատեալ զնա՝ ոչ միայն բանիւ այլ և  
քանի մի ոսկեաւ , ոչ զնա և ուրախ Զատիկի արա-  
կիվաղիւ . այլ զզոյշ մի երժանազին մահառիցն  
ըզմահառդ : ” Քանի աւուրց զկնի՝ հրաման ելանէ  
՚ի իրանէ երեխլ ամենայն ջեռնէրի յանզիման Առւ-  
թանին , իւրաքանչիւրց կրելով ՚ի զլուխ զազի աղ-  
ուեառու : Եւ Մինաս՝ քաջ ՚ի մտի պահելով զխոր-  
հուրդ անծանօթ Բարերարին իւրոյ , կարսզանայ  
զկնի գարձին կառուցաննել զերիս հրաշակերտ պա-  
րասու ՚ի շար կցեալս , որք ցայտօք անմուռնէ քա-  
րոզ են մնացեաւ ջաւդայեցւոցն մեծ աղործու-  
թեան : Եւ ՚ի յիշատակ անցից այսորիկ ստանայ  
Մինաս զմականունդ ջխուդ :

Միւս երեխին և Ազա Աւետիք՝ որ կառուցա-

նէ զեկեղեցին Սուրբ Աստուծածնայ ՚ Մէջքանն , և պատուիրէ չթողուլ զխօնայ Պօղոս մասնել անդր . քանզի նա ուռաւել հարուստ է քան զիս , ասէ , և կարող է կառուցանել զմին վասն ինքեան : Խօնայ Պօղոս առ քինու նախատանացն՝ կառուցանէ ՚ ի նմին թաղի և յանգիման նոյն եկեղեցւոյ՝ զհրաշակերան զայն տուն Աստուծոյ յանուն Արքոյն Սաեւիաննոսի , որ մականուտմը Տանաչի Ըռւաքարան՝ այսինքն Սոուերարկող . զի Ըռւաք Սոուեր լոի : Ա. Յ. զի յանսիրութենէ ոչինչ բարի հետեւլ ունի , այսպէս և առաջին պատարագն ՚ Ըռւաքարանի մասուցաւ վասն անդրանիկ որդւոյ վասարաղղին Պօղոսի :

Յայսոցիկ կարճ ՚ ի կարճոյ պատմութեանց կարէ նկարազբել ընթերցաղն ՚ ի մաի , թէ յնը աստիճան հարսաութեան և մեծութեան հասեալ էին ջուղացիք . որոց մին կառուցանէր զպալստ մեծամեծս և հրաշակերոս յիւրոյին զոյից , և միւսն զեկեղեցի հրաշափառ . Սոուերարկող . որոց անսիին ենթ՝ զկնի հարիւրուոր ամաց , ՚ ի զարմանս զբաւէ և զեւրոպացին ձանապարհորդ . մանաւանդու շինութիւնն՝ որ այնքան Տարտարաբուհոս երեխ , որպես թէ Տարտարապեան նոր երեալ իցէ ՚ ի միջոյ անափ :

Միւս ևս օրինակաւ ինքիցուք զինաւ ո ջուղայ . որ յոյժ կարճասեւ եղի . առ նախանձու կարճամիտ յաջորդաց երկայնամսին Ծահ Արքասայ : — Ծափակ՝ մի յիւրեւելի Աղայից , թերեւս և մեծամասեալ

առ. անշատի հարստութեանն , սակէ թէ յամունա-  
նացուցանել զսրդի իւր , հրաւիրեալ իցէ գԾահն  
ի կոչունո . առ որ և արկեալ կամուրջ արծաթի ,  
կամ յաւ և ս ասել խցեալ իցէ զանց զետոյն Զան-  
զարուդայ պարկովք դրամոյ , մասն անցից Ծա-  
հնի յիւր կողմէ Փառթամութիւն այսպիսի նախան-  
ձուկո արկանէ արքային , որ երե ի լինել Արքաս  
Երկրորդ . որ յօրէ յայնմանէ՝ այսինքն ի միջոյ եռ-  
թըն և ասաներորդ դարու , Խորհի Հանգոյն Փա-  
րաւմնի տառապեցւցանել զազգ մեր մինչ ի սպառ .  
մասն որոյ տուաքէ խնդրել զնորահարսն Ծափրապայ  
ի կանանցն արքենի : Այս խայտառակութիւնն ի խոր  
խոցէ զսիրայ և ածէ աւեր տանն Ծափրապայ .  
սրպէս և իւր մեծամասնութիւնն էած կործանու մն  
տանն ջուզ :

Քանիզի՞ որպէս տաացաք , Արքաս Երկրորդ խոր-  
հելով շարիս մասն Ազգիս , Հարուցանէ Հալածանս  
ի վերայ նոցա . պատճառ պատճառ ելով զդինեզոր-  
ծութիւն լինել ընդզեմ Դուրանի Օրինաց : Առ-  
կայն Փոխարքայ՝ այսինքն Վէպիւնորին , Խորհուրդ  
առյ թողուլ զնոսա ի նմին . սալալ նմա Հասկա-  
նալ թէ զինին ինքնին կործանու մն ածցէ ի մելայ  
ազգին . մասն որոյ հարկ է առէ , թողուլ զնոսա  
արծակ համարծակ զեղիսել ի նոյն :

Յետ այսորիկ Մահմուդ Ծահ Աղուանի իրին ուժի  
Տեսան (1720) — 30 յարուցանէ զառափիկ հալածանս  
ի վերայ Զաւզայիցւոց . և տառապեցանէ յոյժ

յոյժ։ Եւ զոր սա անկառար թողու։ Կաղը ի լրումն հասուցանէ։ Մեղ անախորժ երեխ ձանձրալի պատմութիւն տառապելու թեանց և եթ, որով ընուն ումանք զգիրս։ յորմէ ոչինչ օգուտ քաղի այլ յաւետ աղիխորով առնելով զոհրտ, կամ քինախնդիր թշնամութեամբ և կամ գհատութեամբ լիու զընթերցողն։ Չունիմք արզարե զրազում ի պատմել, սակայն զոր միանդամ լուեալն եմք՝ քաղեսցուք անտի զմին, առ ի տաւ սակաւուք ծանօթութիւն տառապեցուցիչ հարբատահարութեանցն։

Պալատն մեծակառոյց՝ ուր զարդիս Պայծառառափայլ Հայազգի Ապահու սմբ բնակի, էր տուն երեւելի Հայ վաճառականի ուրումն Աղա Զինի անուամբ, ոչ առաջինն այլ զիր չին։ որ յաւուրս իւրում բարի բաստութեան, զարդարեաւ էր զայն ամենաօբառու որ հրաշակերտութեամբ։ Թաղեալ զայզի որ ի մէջ տանին, ունի էր և զամարանոց ի վերայ չորից մեծամեծ սեանց։ յորս ազուցեալ էին մեծամեծ Հայելիք։ Աղա Զինի յայն աստիճան թըշուառութեան հասանէ ի հարբատահարութենէ, մինչ պարաւորի զինի վաճառման ամենայն ստացուածոցն, հանել և զհայելիսն անգամ և վաճառել, առ ի հասուցանել յարքունիս։ որք առանց իրիք իրաւանց կամ պատճառականց՝ այլ լոկ աղքատացուցանելի աղապատ զհայս, առաքեին զանողորմ հարբատահարիչը կեղեքելի զերեկի երեկիս Աղայ Զինեայ։ որ՝ ոչ յազեցուցանել բա-

ւելով և ոչ հանդուրժել կարողանալով, ատիպի  
խմբնոյ գրաւելով զտուն իւր՝ զաղթել չ' Մադրաս  
Հնդկաստանի : 1

Աշակիսի հարսաւհարսութեանց տոկալ յոյժ գըժ-  
ուարին էր արգարեն ու իցե Ազգի . որոյ վասն սկսան  
ջուղայեցիք թողութ լքանել զտուն և զընտանիս,  
և գունդազունոդ սփոթի ի խնդիր անդորրութեան  
յայլ և այլ աշխարհս :

1 Միաս օքինակառ հարսաւհարսութեան՝ որ չառար-  
դե պարտահնչան, առաջինացն շատալի պարմանթեան,  
Աիմոն՝ որդի Հայուղեալի . Բաւանթեալի քառակա, եւ  
ի ծառայասինեան Աբդուլլայ Խանի առաջապետին Աս-  
պահանուայ: Հրամանաւ առաջապետին բանդարգել եղին  
սպասառուց . Բեալբալի Խանի Աբրամարի Հաջի Հայուց  
Խանի. Վերջինս Երևան ի Ա. ան Ամենաքրիչի, և ա-  
ռանց իրին իրաւանց իսպել պահաւ զԱկիմոն, զան  
մշիկուց Աբդուլլայ: անէ յանմեղ Աիմոնին. վասն լի-  
նելու առա ի ծառայասինեան նարս: Կարեւալ առքեն  
իմաստի գիներբառաց՝ պաստառուց նարս զինի գանակա-  
սանելոյն առանձնեն զանմեղն . յամի 1824 Նոյեմբերի 9:

Պատասիբեալ և եւ Հաջի Հայուցանել զայնոց  
քառակա, առիսան պահ Նիկողոսինաց և եւ առինչան:  
Եւ Հաջի Հայուց ընդ առաջախոգունդ սպասառուց,  
յետ իռապետեալ և զբաղանա ի Թերապանց, Երևան,  
ի բերի իւր . անցանելով ընդ առաջան և աերել զա-  
տամբ առաջապետին :

Այսքանս ընտ. լիցի վասն իմանալոյ զպատճառ  
նու ազմանն ջուղայեցւոց , որք մազապուր փրկե-  
ցան քանիցս անզամ ի հանրական կոտորածէ : Սո-  
կայն Խորաքնին զննողութեամբ երեխ յայսնի ,  
զի թիւ մեղաց մերոց միայն Է՝ որ ածեալ է զայս  
կործանումն . քանիզի նախանձ և հակառակութիւնն  
զժօխային ծնունդք սառանայի , զինեալ են զեղ-  
բարո ընդդէմ իրերաց ի մասնութիւն և ի կորուսո-  
որում ոչ այլ ինչ զտանեմք զպատճառ բաց յա-  
նուսումնութենէ . ուսումն՝ ասեմ , Աստուածսի-  
րութեան և հղբայրակրութեան :

Զարդիս ի քառասուն ու չորս հազար տանց  
ջուղայեցւոց՝ վարելոց ի մեծէն Շահ Արքասայ և  
յայլոց , ոչ աւելի քան զհազար և հինգ հարիւր  
տաւնու մեացեալ են ընդ ամենայն . եթէ ի քաղաքին  
և թէ ի զիւղօրէս , սրբէս և ի ԹռէՀրան : Իրաւէ  
ցաւելի՛ յիշատակ + որում շատ յուրմար զայ ասու-  
թիւն Մհծին Արտաշիսի ի ժամ մահուանն . Աւազ  
վառացաւ անցաւսրի : — Այլ յուսամք՝ որպէս և  
բոլորավ սրտիւ ըդձամք , զի սւսումն չշմարիս  
զիսութեան՝ որ զարդիս սկսեալ և ափուել դլոյս  
իմաստութեան , տացէ վերանորոգութիւն անցեալ  
վառացն Կոր ջուղայ :

## Գ. Լ. Ա Խ Խ Ջ. Բ.

Բառաշախանք:

Զի՞նի ջուղայ հարիաւոր է մեզ անցանել ՚ի Շիւրագ - և անտի յայլ երկիրս՝ ուր ափոնցան ջուղայ - հցիք : Արդ՝ Շիւրագ անուանի էր յայժ մանաւ մնաց վասն մաքը ութեան օգոյն , և արքայանիոտ իսկ եղեւ երբեմն ՚ի պայծ սուս թիւն քաղաքիս՝ հինգ հարիւր գերզաստանք Աղդիս , պարզեցան միոյ յարքայորդւոց . առ թագաւորութեամբ չկարացաք զիւտեւ որոյ . այլ՝ աւազ , զի զարգիս պակաս քան զշինգ զերզաստանս մնացեալ են անողէն . որք և ունին զազզային Եկեղեցի : Ոչինչ պատճառ կարեմք զատանել նուազման մերայնոց անդւոյս , բաց յայնմանէ զար պատմեցաք վասն ջուղայ :

Բառայ՝ երբեմն վաճառանոց անդի ՚ի մեջ Արեւելին կողմանցու և և Պարսկաստաննեայց և թուրքաստաննեայց , կաւուցեալ յաջակողմն բարերես զետոյն Շատթը Արարայ՝ Գետ Արարիս , որ կազմաւ է ՚ի միաւորութիւն Եղեմական զետոյն Եւփրատայ և Տիգրիսի , ընծայէ զցուալին աւստարան աւերման ջուղայ ՚ի գերեզմանատան իւրում :

Դեսն է ընդարձակ և նստարիելի մեծամեծ նաւուց : ՚ի Բառայ մինչ ՚ի Շոնայ՝ ուր նստաղիդք զետոյն ընակին , է իրեւ զվարժուն մզնա . և անտի նոյնքան մինչ ՚ի ծով : Իրեւ հարիւր ամօք

յառաջ՝ երեւլի էր յոյժ Բասրա, և վաճառասեղի  
մեծի առ և տրոյ. և վաթուն ամօք յառաջ՝ էին  
ի նմա իրեւ զհարիւր և քառն հինգ տունս յԱզ-  
գէս. որք զիսառ առաջնոյն յիշել կամելով, սո-  
վոր էին ասել ցեկո օտարս. բազ ապ խարաբի Բաս-  
րայ. այսինքն՝ զկնի աւելըմոն Բասրայ՝ եկեալ ես :  
Այլ ով աղեաիցս, զինչ ասել արգեօք ունեին,  
եթէ արդ լացեալ զաշս իւրեանց, աեսանէին որ  
զինի այդքան սակաւ ամաց չկան անդ և ոչ տառն  
տունք : Օն, ի բաց կաց տիրութիւն. և թող մեզ  
զէթ միութ օրինակաւ. պատմել զիսառ ընդունայն  
աշխարհիս :

Իրեւ հարիւր ամօք յառաջ՝ էին ի Բասրա բազ-  
մութիւն երեւլի երեւլի անձանց մերազնեայց .  
յորս Աղա Յարութիւն՝ որդի Էմինազի որ այրե-  
ցաւն կենզանւոյն ի Աաղըր Շահէ ի Զուղայ ,  
էր երեւլին : Աղա Պիտրոս ոմն նոյնակս երեւլի .  
որ յառաջադրեաց կանզնել զայժման Եկեղեցին ,  
չաղողութեան հանգիպեալ զրաւէ զուղին առ  
Աղա Յարութիւնի . և ինքն մեռանի թերես առ-  
ցաւոց որտին : Աղա Յարութիւն յղէ զիսաշիկ  
անուն զոմն ի Կատոանդնու պոլիս . բերել զհրաման  
վասն կառուցմանն : Դ սմին ժամանակի հզօր Տէ-  
րութիւնն Օսմանիան թուլացեալ գոլով սակաւ-  
իկ մի յառաջնայ անտի զօրութենէն , Բէրիմ Խան  
արքայ Պարսից՝ որ զաթօռ թազաւ որութեանն  
հասասեալ էր ի Շիրազ, կամելով յինքն զրաւել

զառ. և. տու. ը. Արեւելեայց, ՚ի մակ եղ տիրել Բասրայ. և բաղրաղայս Հայթհայթեալ՝ առաքէ զԱպէդ Խանը յամի 1775 պաշարել գքաղաքն ։ Առւլէյման Աղա՛ որ կառավար էր քաղաքն ։ արիսպէս զգէմ ունի ամենայն զօրութեանն Սաղեդայ. սակայն զկնի երեքտասան ամսոց ընդունայն ակնկալութեան օդնականութեան յօմանեան ՚Իրանէ, զօրավարս քաջ՝ որ արժանին էր ամենայն վատաց, պարտաւորի ՚ի մեծի անձկութենեն անձնատուր լինել յամի 1776 :

՚Ի զանապրութեան հաշտութեանն պարտաւորի Առւլէյման՝ վասն փրկանաց քաղաքն ։ սակ արկանել ՚ի վերայ քաղաքացիացն ։ Յայսմ պահու վասն զի՝ յարեան զայ ազգասիրական մեծահոգիութիւն Աղա Յարութիւնի. որ՝ առ ՚ի վրկել զեղքարս իւր ՚ի հարստահարութեանց և ՚ի կեղեքանաց, յառաջ մասուցեալ յանձն առնու ինքնին հասուցանել զբաժին սակի Հայոց և Հառաքել ՚ի նոցանէ առ յապայս ։ Առա օրինակի հետեւ յէցրբայեցւոց և ՚ի Մահմետականաց մի մի էրեւելիք ։ Այս փարթամութիւն քաղաքացւոց կասկած ՚ի սիրտ արկանէ Սաղեդայ. որ՝ զերիս որդիս երից ազգասէր արանց յիշելոց, կամի ունել ՚ի պատանդի վասն խաղաղութեան աշխարհին առ յապայս ։ Այսորիկ աղազաւորդի Աղա Յարութիւնի Աղա Ատեմիան՝ տարեալ պահի ՚ի Շիրազ ։ յարքունականն պարտափ :

Յանառակ և ՚ի ցոփ արքունիս առո՞ կորեաւ Աղա Ատեմիան, և կորոյս զտուն մեծ անուն հօր իւրոյ ։ որ՝

Հետ զհեաւէ առեալ զլուր անառակաւթեանց որդւոյն, սիսիկը զանձնյուսով առ յապայ ուղղութեան։ Ա. Յ.՝ ի լուր զինեմութեանն, հասաւ յոյն ամենաքժան հօրու և առ գ առեալ ի վերայ որդւոյն որպէս թէ մեռեալ, եա պաշտօն առնել վասն փրկութեան հոգւոյն։

Զինի լրման ժամանակի պատանզութեան՝ զարձաւ Ազա Ասեմիան, և հաստատեաց զկարծիս վաւարդուիկ հօրն, որ՝ ի հաղի խոյեալ ի վերայ թրշուառութեան տան իւրոյ, չերկարի ի կեանս։ Ասկայն Ասեմիան՝ մասն եղեալ զոլով զեղսութեան և անառակաւթեան՝ որք իրբե զթթթուր շատ շոյտ ծախեն զմանեկութեանն գալարիութիւն, կան իւէ քան զհայր իւր յաշխարելի օրհատեն։

Ենտ վախճանի սոցա՝ զարձաւ Խաչիկ ի Պօլսայ, ածելով գհրաման արքունի վասն շինութեան մատրան միոյ, յորում թոյլ տոնի կախել զերկու և կանթեզս վասն ընթերցման Աստրը Գրոց։ Եւ Յովհաննէս Բեթղեհէմ՝ կոսկակտաւը Ազա Յարութիւնի, շինէ զընզարձակ Նկեղեցին որ արդ կանզուն կայ, զոյիւ քնորին ըստ կոսկազրոյն։

Բանգար Արքաս Կառունդիստ Աբբասոյ՝ անուանեալ ի պատիւ Ծահ Արքասայ Մեծի, որ յառաջն կոչեւ քամբելուն, միայն անուանի և որպէս զառաջին իջեան վատրանզիցն ծուզայ։

Բառ շեն՝ Տէրութիւն Պարսից ջանացաւ ի տեղի բառ, ոյ առնել վաճառատեղի Արե ելեան վաճա-

ուականութեան։ Այլ ոչ Բռու շեռ. և ոչ այլ բազում  
քաղաքք կարեն ի համեմատութիւն ինչ զալ Բառ-  
բայ՝ ըստ պրիցն։ և. թէ լինէր վերջինս ընդ իշխանու-  
թեամբ Եւ բուպացւոյ Եզզի ու բուք, փոյթ ընդ փոյթ  
ի մէզ զայր ընդ Հայակապ քաղաքաց անզամ։ Գան  
զարդին ի Բռու շեռ իրբե եօթն տունք յԱզգէս։  
որք և ունին զազզային Եկեղեցի դեղեցիկ։

Բեր այժմ անցցուք ի Հնդասան։ ի Հնդասան։ որոյ  
համբաւեալ ծառն ո կերեր հրապութեաց ի միւս  
կողմանէ զռազումն ի Ձու զայեցւոյ լքանել ըզ-  
Հայրենիս իւրեանց։ և վատարանդի զնալ յաշխարհ  
ահծանօթ։ Առւ. բաթ՝ որ նշանակէ Պատկեր, երեւ-  
րի էր յոյժ վասն առ և տրոյն, ուր երբեմն զոյր  
բազմութիւն յազգէս։ ուակայն զմի միայն յիշասա-  
կարան Աղա Յովհաննանի՝ որպեսոյ Քալանթար Յա-  
կորի Գերաքեանց Ձու զայեցւոյ, կարացաք գտանել  
ի վերջ զրեանց։ որպէս ի վերջ Շաբակնոցին տը-  
պելոյ ի Առւ ըրն Եղիսաբէին յամի 1789։ և Աղօթ-  
մառուց ցին տպելոյ ի Երըն Նախի ջեան 1790։ Ու-  
րովք երեկ զի Ճշմարիտ Աղզասէրս՝ յայնքան Շե-  
ռաւ որութենէ տարածեալ ուղիղ զատմամբ զմխա  
առ Հայրենիս իւր և առ Ազգ։ փոյթ ի մէջ տանու-  
ի բուսանն կարողութեամբ վասն յառաջադիմու-  
թեան միայն, և վերանորոգութեան փառաց երկ-  
բորդին։ ոչ միայն առատանուէր արդեամբք իւրովք  
տպագրել տալով զՇաբակնոցն՝ այլ և բարեսենչ  
բաղձանօք խնդրելով զայլ և հարկաւ որագոյն զը-

թեսնս տպագրել առև ՚ի Առ-ըր Աթոռու ո՞չն ՚ . բնող  
նմինե ՚ կառու-ցանել առլով իւ-րովք զոյիւ-ք զեր-  
կու-ք բարիկարդ Դպրոցս և արտաքին մակացու-  
թեանց Ու-սու մարանո՞ ՚ի Նորն ՚Նախի ջեան ՚ մին  
յանուն Առ-ըր Խօսու-ածածնի և միւ ան Արբոյն Գրե-  
գորի Լու տու-որչի ՚ Այսու կարճառու յիշատու-  
կազրութեամբք ՚ի յայտ զան մեծամեծ զորնք , ազ-  
գատիրական եռանեղ և մեծազործ հողի ազնու-ամբու-  
առնս . որով կարեմք եզրակացու ցանել զի եթէ  
՚ի հեռաւ որու այսքան , ու րիմն և ՚ի մօսաւ որս զէթ  
նայնքան տարածեալ իցէ զիւ-ը աջ քաջալիքի ՚ . այլ  
ափան , որ չկարեմք զանել զաւելի ծ անօթու-  
թիւն . և թէ ոչ վան այսոցիկ սակաւ ստորդ յի-  
շա-ակարանաց մասնեից , թերեւ և անուն իսկ մե-  
ծազործ Բարերարիս անյիշատակ մայր ՚ի տպաւ-  
որչանի պարտապան եմք մեք զբականութեան , և  
ափան , որքան սակաւ Տանաչեմք զ յարգ նորուն-  
երանի աւու-ը որ տենչալի ուր առ երինայինս օրհ-  
նութիւն , աիիւռ աւարածեացի յամենայն մասունս  
Ազգիս :

Գամանեմք և յԱղպարարի Մաղրասայ 1795 Շամա-  
տմույ , զի բարեյիշատակ աղդամէրս մաղճանեալ է  
անդ ՚ի Առ-ըրաթ , յիններորդում ՚Նիլհանն որ է մե-  
տասան Մարչ ամսոյ - ՚ի կենդանութեան իւ-րու մեր-  
շանաւ որեւ լով զստացու ածս իւ-ը 3 · 50 · 000 ռու փոց  
։ վասն վանօրեից և այրոց լստ բարի կամաց իւ-րոց ՚  
Ելանի թէ կման այտք զնշանակութիւն ըստ իւ ոչ-

Հայ - արդենոք ապահօգութ զործ ինչ, որ ըստ իս յոյժ  
հաւանական եղելի :

Տեսաք զձեռուազիր նամակ մեր երեւելի և մեծանուն  
Ազգասիրիու առ Արքապան Յակով Առաջնորդ Ձու-  
դայ, թուեալ 1788 Մարտի 28 - յորում՝ զկնի մեղ-  
մօրինակ զանգաւանաց, հաստատէ զկարծիս մեր որ  
ի մերջ անցեաւ Գլխայ. թէ թիւ մեղաց մերոց յա-  
ւէտ է պատճառ մերոց նուազման. « մենք անք մի-  
մեանց վաստեզող, » առէ ի զբիս, « որպէս այ կարելի  
մեր էսպէս որտուիլ մենք Աստուածանեւ բարի զաւ-  
նելն. » մեռս անզամ ևս առէ, « քանի պահանձանամք  
չարիքն իմիւլացանումանք. » և այսոցիկ առութեանց  
հաւաստի և բաւական պատճառս տայ, զոր խնայ-  
իմք նշանակել առա: Միւս իմն անզեկու թիւն՝ ար-  
ժանի ծանօթութեան, և այս. զի յիշէ Արքապա-  
նին, թէ ի չորեքտասան քահանայից առաքերոց վասն  
ուղարկենա, երեքն վիճակիւալ էին վասն Առւրա-  
թայ. յորոց մին վաղձանի, և մնացեալ երկու քն  
պակաս համարելով վասն ծռողաբար շատաւեւան,  
ուղար առանայս ի մետածն ուանեն վասն ուղարյն. և  
այս ժաղավրդոց կեսն՝ առէ, իւր ընտանիքն էին:

Եթէ առ իւրաքանչիւր քահանայ՝ զհարիւր  
ոզիս հաշուեցուք, կարեմք մակարերել՝ եթէ յի-  
սուն ու հինգ սմաս յատաջ, էին ի Առւրաթ իւր-  
քե չորք կամ հինգ հարիւր ոզիք յնզգէս մերժ.  
յորոց և հինգ ոզիք մնացեալ են անդ: — Զի՞նչ  
եղնեն ու բհան: — Ասրառեցուցիչ հարցումն իրաւ է.

յորոյ վերայ խորհել ոչ բաւ-ականանայ միտք . զի՞ մեղաւոր ինչ իցեմք արդեօք քան զկռ.ապարիշտը և զՄահմետական , որք աճելով աճին և բազմանան , այն ինչ ի միջացի սակաւ աւուրց կիսոյ դարու միայն՝ մին տու հարիւրն մնացցեն ի մէնջ : Աղորմած Տէր + գու , որոյ ողորմութիւն անչափ է , սարսափելի օրինակ ևս տուեալ վասն ապագայից իրաստ :

Օ՞ն անդք , գարձցուք յայլ կողմն . սակայն՝ յոր կողմ և շրջեցուք , ոչ կարեմք շրջել զպատկերն . որոյ վասն անախօրժ է մեզ հարկանել զնոյն լարթաղծական .

Ու բեմն՝ հարեանցի անցեալ յիշեցուք զիշեցուք ուրում- բայ՝ ուր զոյ փոքրիկ Եկեղեցի մի և իրեւ հինգ տունք յազգէս : Մուշլեանդար՝ մի եկեղեցի խոնար- հած և երկու տունք : Չիշբայ՝ մի եկեղեցի և երեք տունք : Աւոլարադ՝ մի եկեղեցի կիսոււեր և մի տուն : Դաքայ՝ մի եկեղեցի և տասն ըհինգ տունք : Գուտ ու- լիեր՝ մի եկեղեցի և ընդ Ազրա երեսուն ու Հինգ տունք : ՚Ի կողմանս Մալայու , Պիհնանգ՝ մի եկե- ղեցի և երկու տունք : Ամենզափուռ՝ մի եկեղեցի և ութ տունք : Բժթավինայ՝ մի եկեղեցի և ընդ Ասմա- րանգ և Առ-բայայայ տունք երեսուն : ՚Ի կողմանս Բարմայից , Առումնան՝ հինգ տունք : Բախն՝ մի տուն . Արքայանիստն Ամիրապուրա՝ երեք տունք . և ՚Ի Արան- գուն՝ քասն տունք և մի եկեղեցի յանուն Արրուհ- ւոյ Առուտածածնայ . կառուցեալ յամի 1769 ար-

դեամբք զերահռչակ Աւելիթ Գրիգորի :

Զայտ սակաւ աստղ ծանօթութիւն՝ լորու մ՛ ազ-  
գային մեծ Աստղ ածառաշտութիւն երե ի ՚ի կառու ց-  
ման Եկեղեցեաց, թողու մք այլոց կշռապ ատութեան-  
այսքան միայն ասասցուք, զի ոգին այն՝ որ ոչ շտ-  
ատանայր Հազար եկեղեցեաք ՚ի միում Անւոյ մինչ յա-  
ւել ՚ի նոյն և զմի, երե ի տակաւ ին յետ այսքան  
դարուց անկորուատ մնացեալ և առ մեօք : Մի ան-  
տեղի երենցի ասութիւնու անծանօթ ընթերցողին,  
թող զիտիցէ թէ փառաւ որ եկեղեցին Պինանգայ՝  
որ յանուն Սրբոյ Լուսաւորչին, կառուցաւ յա-  
ւուրու մեր ՚ի բարեյիշատակ Պարսն Խաչատրէ Գա-  
լատանեան Ծիրազեցւոյ իւրոյք իսկ արգեամբք,  
զողցես վասն իւրոյ զերզատանի միայն զի ժողո-  
վուրդք աեղւոյն չէին ընդ ամենայն աւելի քան  
զերիս տանու Խնչ և իցէ՝ զարձցուք անգրէն ՚ի Բար-  
մատան, առ ՚ի սակաւուք ծանօթութիւն տալ  
վերոյիշատակեալ զերե ելի առնէն Գրիգորէ, և  
զաղգային հնութեանց ինչ առնել զյիշատակու-  
թիւն ըստ կարեորին :



### Գ. Լ. Ռ Ի Խ Ժ. Թ.

Բ. Հ. Տ. Պ. Պ. Ն. Կ. Վ. Հ. Ե. Ա. :

՚ի մէջ զանազան ազդաց բնակչաց Բարեմայ աշ-  
խարհին էր երբեմն զի Ազգի Տրոյնայ էր մեծաղօրն .

որոյ թագաւոր նաևը յընդարձակ քաղաքին Փետաց, յորոյ ՚ի բերդամիջի զարդիս արօրագիր լինին երկրագործք ։ Արդ՝ ՚ի բարեբառութեան այսր ագորդի, բազումք ՚ի մերայնոց անցին յայս կոյս Գանգիայ, և անդի ընակութեան կալան ՚ի Արնին քաղաք՝ որ կայ յարեւելից առ հարաւակողմն Ռանգունոյ ։ Սընին՝ որպէս արդ Ռանգուն, էր նաւահանգիստուր՝ ըաց ՚ի մերայնոց, յաճախէին Անգղիացիք և Գաղղիացիք և ո վասն առ և արոյ ։ ուր շինեցին զերջինս և զեկեղեցի մի, որոյ երից կողմանց պարփակքն միայն արդ կանգուն կան ։ Ռենեին և մերագինք զփայտակերտ եկեղեցի, և ժողովուրզն բնուամենայն էին իբրեւ վաթուտն տունք ։ ՚Ն յառնեւ գիւցազին Ծլամմ Փռայի՝ կիսասուածոյն Բարձայից, ընդդէմ Տըլայնի, յաւեր դառնայ Սընին յամի Տեսան 1756 ։ որպէս և մոյրաքաղաքն Փեղու ՚ի հիամեհալ ամի ։ և ՚ի անդի Սընինայ՝ կառուցանել բաղմահանձարս աշխարհակալ զնորն Ռանգունոյն ։ որ նշանակէ վաղձան պատերազմի ։ ուր ժողովին մերագինք ցրուեալք յառաջնոյ անտի ։

Աւելորդ Համարիմք յիշել՝ զի եկեղեցի մեր որպէս և առնք որ ՚ի Սընին, Հրոյ Տարակ եղին ամենայն, որպէս և քաղաքն զլիսովին յաւեր և յապականութիւն ։ առկայն հչ կարեմք զանց առնել զաղէտալի կատարածիւ Տէր Մարզարայ՝ որպէս և զժամկոչին մեր ։ Զի՞ որպէս լուաք, ՚ի պաշարման անդ քաղաքին ՚ի կոչել զժողովուրդն ձայնիւ

զանգակի զալ ՚ի մէջ զիշերի ՚ի տօնախմբութիւն Շննդեան Տեսան , Համարի Տլայն քաղաքապետն զձայն զանգակին իրքը զնշան յարձակման տուեալ առ Բրմայս . և առանց հարց ու փորձի Հրամայէ իսկայն հասանել զգլութեան երկացունց կարծեալ զաւարքաց : Յաւերակո անդ Արնինայ տեսանի ցարոց զերեզմանատուն ազգին , ՚ի միջի վայրենոցիալ մայրեաց և մացաւաց . աւկայն կէս ասպանաքար և եթ տեսաւ ՚ի պատուական տպիւանկ մարմարինէ , ունելով միայն զանուն ննջեցնոյն . ու առի ոչինչ ծանօթութիւն եարեար եղե քաղել :

Յայսմ ժամանակի նոր զօրացեալ էին Անդիացիք յԱրեւելիան կողմունն , և ունեին զժաճառանեղի մի ՚ի զլութեան ՚Աւզուկ ջայ , առ երի Բասին քաղաքի . ուր զկնի սակաւուց զտղագողի փոխառըքեալ զթնդանօթու ամրացուցանեն ըստ կարե որին : Զկնի զօրանալոյ Ըլավմի Փռայի՝ Հրաման ընկալան Անդիացիք ունել զնոյն արտունութիւն որպէս առ ժամանակօք Տլայնի . դաշտմէ ոզնելոյ Բրմայից ՚ի ժամու հարկաւ որութեան : Սակայն զկնի սակաւուց ՚ի մտարանննել առաջնոյ ազին , Հաւառագրուժ գտեալ Անդիացոց ձեռն տան Տլայնի և զրգ են զիրաւացի ցառումն Յաղթականին : Խորագէան Գրիգոր որ կայր ՚ի սպասու Ըլավմի Փռայի , զիսպոդ առիթ զուեալ ցուցանելոյ զհաւատարմաւթիւն իւր . Հրաման ինպրեսու ՚ի Դրանէ անցանէ բազմութեամբ բհանաբարձ նաւակաց ընդ Բասին :

ի զլուխն Նէզրէջայ , վաճառականութեան աղաւզա -  
զա . ուր պատուով ընկալեալ Անգղիացի մա -  
հառականաց , պարզէ առաջի նոցա զ ցուցակ մա -  
հառաց իւրոց՝ մոմոյ , փղոսկրի և այլն ։ Խնդու -  
թեամբ կայնուն Անգղիացիք զիայծն . և դկնի սա -  
կարկութեան հրաման տայ Գրիգոր՝ և հարիւրա -  
ւոր անձինք շալակեալ զմեծամեծ ժանիս փղաց  
բերեն ի մահառառեղին նոցա . ուր հանեալ զթա -  
զուցեալն սուր իւրեանց ի ժանեացն , տիրապետեն  
ամրոցին և Հիմնայատակ առնեն . որով և Գրուեն  
Նէզրէջայ կայ մնայ առ Բրմայս ցայտոր ժամա -  
նակի . Զայնու ժամանակաւ դեռ ի աղայութեան  
էր կարսողութիւն Ընկերութեան Արևելիան Հնդ -  
կաց , այն ինչ Բրմայից զօրացեալ յոյժ . որոյ  
մասն ոչ կտրացին Անգղիացիք առնուլ զվրէժ վա -  
սուն . մանաւանդ զե չունելին և զարդարացի իրա -  
ւունս :

Ա եծ արի Գրիգոր փառօք և պատուով մասն հա -  
ւասարիմ ծառայութեանն , ոչ միայն տիտղոսիւք  
Վէզրի և պաշտօնատարութեամբք որ ցայն ժա -  
մանակ չէր տաւեալ ումք օտարականի , այլ և  
կալուածովք բռիանդակ քաղաքին Սընինայ մինչ  
ի վաղձան կինեացն . Զկնի որոյ ձեռն արկեալ  
ի կառուցաւմն էկեղեցւոյն Ռանգունայ ի պոյից ան -  
տի իւրոց , և կեցեալ փառօք ցվաղձան կինեացն ,  
թողեալ է դհետ իւր զմի միայն սերունդ ի զտեր  
կողանէ՝ զԴրէգոր Սարգիս Մանուկ , թռոն Աղա-

զարի Յանիսիան՝ երեւլի վաճառականի, ՚ի մօր կողմանէ :

Յանիկալի էր մնդ զհռչակաւոր քաղաքէն Մադրասոյ տալ ընդերկար ծանօթութիւն, այնու զի կոչեցաւ երբեմն ։ Դաստիար Աջ Ֆայը ։ որ թէ արդարեւ այդպէս, երեւ ի բար օրինակի այլոց քաղաքաց յոյժ վաղանցուկ եղեալ Յանիմք իրաւին վանն չկարելոյ աւելի աւեղեկութիւնս տալ զուտմաց երեւեաց Ազգիս, ոոք Հոխացնալք հարստութեամբ համբաւաւոր եղին անդք ։ Զարդիս ոչ զոն անդ աւելի քան զննելուասան տունս ընդ ամենայն, որք և ունին զեկեզեցի մի յանուն Առւրը Վառուածածնայ կառացեալ յամի 1772։ Տեղի Եկեղեցւոյս էր նախնի հանգուստարան Ազգիս, ուր ունէին զփոքրիկ մասուռամի ։ և ՚ի գաշտին որ կոչչի Եսպլնէդ, ունէին զփառաւոր Եկեղեցի կառաւցեալ Յամի 1712։ զոր առ ակրութեամբ Ընդղիացոց պարտաւորեցան լքաննալ, ՚ի պատճառս ոչ ներելոյ նոցա բարձրաշէն շինուածոց մասլ առ երի ըերդին։ Այն օրինակ աբարին Անզղիացիք և ընդ Լատինացին։

՚ի պատճառու սակաւութեան ժողովրդեան ոչ կարէին մերազինք կանզնել զայլ վառաւոր Եկեղեցի ըստ յանիկութեան իւրեանց ։ որոյ վասն հարկիցան առ ժամանակ մի շատանալ մասրամբ հանգուարանին ։ զոր ՚ի վերջոյ օժանդակութեամբ Ցերութեանն ընդլույնեալ աբարին յայժման ժամա-

տուն : Այս առաջին նու ազ է՝ յօրում պատահիմք Անդիեցւոց Տէրութեան օժանդակել Ազգիս ՚ի կառուցած ազօթատնույ :

Եօթն մղոնօք ՚ի քաղաքէն՝ կայ ՚ի ձեռու Լատինացւոց փոքրիկ Եկեղեցի մի ՚ի Մամլան զեղջ . ՚ի մերայ փոքրիկ բրոյն Մանթանելոյ . նմանապէս և միւս մին՝ ութ մղոն հեռաւորութեամբ ՚ի մերայ Սուրբ Թումիւտան կոչեցեալ լերին, ուր զոն շիրիմք Երեելեաց Ազգիս, վաղճանելոց յիօթ և տասն և տասնը ութ դարու : Այս տապանաքարք՝ որպէս և պատկերք որմոցն, յայտնի մկային զեկեղեցիս լինել Ազգիս այլ թէ զիմարդ անցին ՚ի ձեռու նոցա անզիսելի է մեզ :

Կայ և կամուրջ մի արկեալ ՚ի մերայ Ազիար զետոյն՝ մերձ առ զեօդն Մամլույոյ և Սոյսապէտոյ, ՚ի Պետրոսէ Ռոկանայ Յամի 1725 . որ և կառուցեալ է զանգուդս Մանթ լերին 133 աստիճանօք :

Ազգային զբաղետութիւն՝ լնդ Համբէն Հնդկասահն, ՚ի քաղաքի տասն սկսաւ դաւաչինն պայծառանալ : Բարեյի շատոսկ այրն՝ ոբոյ ջանիւք սկսաւ առ ազար զարտ գործն տպազրութեան յառաջ վարել, արդանի և մեծի զովասանութեան . եթէ վասն զործոցն և թէ վասն ազգասէր ջանիցն Արդ Տէր Յարութիւնը մասն Ծիրազեցի՞ի քահանայութեան պատահեալ տարարազգութեան, կորուունէ զերկուս որդիս ՚ի միջոցի միոյ շարաթու . և առցաւոց որտին առանձնացեալ ՚ի լեառն Բարա-

քուայ , կեսայ ընդ Գարվիշաց իրրե եօթն ամսաց մի-  
ջացաւ : Լեռանա այս հեռի է ի Շիրազայ իրր եր-  
կուց ժամուց ճանապարհուտ . յստորոտս որոյ է  
զերեզմանատուն ազգիս : Աստ ի վերայ լերինս միտ  
դնէ աշխատասեր քահանայս Պարսկականին բար-  
րառոյ , յարում՝ ըստ ունակութեան Ազգիս , հանդի-  
սանայ գերազանց Զենի ժամանակաց՝ տեղի տուեալ  
բուռն թախանձանաց ընտանեաց , իթանի միւս ան-  
գամ ի քաղաքն . և անտի ելքալ զնայ ի Մադրաս,  
քահանայս ազործութեան պաշտօնաւ : Պարսկանոն  
սովորութիւնքն պատմեալ զքահանայէս , երեին  
ընկալեալ գու ի Գարվիշաց աստի : Ասի զսմանէ  
ոչ ներել եկաց կարօտաւորաց շրջել առ զուրս  
վասն հաւաքելոյ դուռը , այլ յորդորել զնոսա  
յաշխատութիւն . և ի միւս մնուազի կերտել տը-  
ռուեալ զսափիոր , առաքել ի տունս մեծատանց ,  
որով և հաւաքել զառատ տուրս վասն կարօտաւո-  
րին : Ամենաբարի օրինակ ընդհանուր զործածու-  
թեան :

Ի վերջութեան երորդ դարու՝ սկսանէ զտպագ-  
րութիւն Ազգարար ամսական օրագրին , որպէս և  
այլոց մատնից . սակայն որպէս միշտ տարաբազուա-  
պէս գեղ լինի ի միջն մերում , ի պակասութինէ  
յարմարաւոր անձանց՝ վաղձան առնուլ գործոյն  
ընդ սկզբնաւորողին , սոյնուէս և ապագրութիւն  
Մադրասայ գողցնո վաղձան առնու . ընդ բարեյի-  
շատակ առնա ազգասիրի :

՚Ն շնորհս զերազանց զիտութեանն Պարսից բար-  
բառոյ՝ արժանանայ աղջասէր այլս շնորհաց Վա-  
լանայ Մահմադալի խանի Կարարին Արկաթայ և  
Մագրասոյ, Հրաման ընկալեալ ի նմանէ տպագրել  
և դՊարսերէն և զԼիքարերէն մասնանս. զորոյ Հրա-  
մանագրին զպատճէն տեսաք զեղեցիկ Պարսիկ և  
Արաբացի զրով զրոշմեալ ի մէջ 253 և 254 էջաց  
յիշեալ Աղդաբարէ :

Ժամանեցաք արդ ի մէրջոյ ի մայրաքաղաքն ա-  
մենայն Հնդկաստանեայց ի Քաղաքն Պալատանց, ՚  
որոյ ստորագրութիւն՝ պէտու ունելով մեծահատոր  
մատենի, թողումք այլում Հարսարազցն զրչի-  
մեք ի խուզարկութիւն ազգայինն փութացուք  
ծանօթութեանց :

Ծիջանելն ի նաւէ՝ առաջինն որ սրաւահէ նա-  
ւորդի և Հայոց Թրլից, կամ՝ բառայլազդեաց, Ար-  
մինիրն Գատթ, շինեալ՝ որպէս ասի, ի Սուքիատուց  
ու մանէ. որոյ և փողոց իմն ցարդ կրէ զանուն, ՚  
Տասն մայրեննաշտի ընթացիւք ժամանեմք յԵկե-  
զեցին Կապարեթայ յորջորջեալ. զոր Աղա Նա-  
զարէթ կերանել ասյ իւրովիք զոյիւք յամի Ցեառն  
1734: Ալսով մնուանակոչութիւն իմն՝ 1 յաճախա-  
կի ի զործ ածեալ, ի յուշ ածէ ինձ զշաղոքոր-  
դութիւն Աթոռոյն Հոռովմայ. որ՝ ի ժամանակս  
զօրութեան Նախօլինի, հայթհայթէ մուծանել

ի տօնացոյց պաշտաման գմոռացեալն Սուրբ Կապու-  
թան : Այս աչ շողոքորկութեան ինչ աղաղաւ-  
եթէ ոչ սխալմամբ՝ Աղա Կազարէթս և այս երբեմն  
սրբի և Սուրբ Կազարէթ յոր ջյոր ջի յանգիտաց :  
Երկու փոքրիկ տաճարք յաջմէ և յահեկէ սրբոյ  
սեղանոյն մին յանուն Սրբոց Առաքելոցն Պետրո-  
սի և Պողոսի, և միւն Սրբոյ Հօրն մերոյ Լուսա-  
ւորչի, կառուցեալ են ի Հին Երեանցի Յարու-  
թիւնի սրգի Աղա Պետրոսէ յամի 1763 : Տարտա-  
րապետական վառաւոր գմբէթի գանգակատան՝ եղեալ է  
Հայազդին Վեռնոր Զուղայեցի : Պատուական ժա-  
մացոյցն մեծ հաստատաւ ի նոյն , որպէս և ընա-  
կարանն քահանայից , են անման յիշատակարանք  
Խաչիոյ Առաքելեան՝ մեծանուն վաճառականին  
Զուղայեցոյ . յորոյ երեկի արարս՝ քան զամե-  
նայն արժանի օրինակի գատամք մեք զայս , զի ջա-  
նայր բառնաւ զմուրացկանութիւն ի միջոյ ազգին,  
և քաջալերել զամենեսին յառ և տուր . ինքնին  
օրինակ տալով , և յորպարելով զամենեսին զնել զա-  
և իցէ իր՝ թէ և առ օրին անպէտս , ի կարօտա-  
ւորաց՝ քան տաւ նոցա զաւձեռն պատրաստ գը-  
րամն իրը յոդորմութիւն : Զի փող տալով՝ ասէր .  
քաջալերեցն զնա ի պարապորդութիւն . այլ  
զնելով զիր իմն՝ յորդորեցն յաշխատութիւն և  
ի վարժութեան վահանականութեան : Զինչ առա-  
ւել աղգասիրական և եղայրական , և արժա-  
նի սիրտ ամենեցուն քանգակման :

Նախ քան զսոյն՝ զոյր ՚ի քազաքիս ժամատուն  
մի և հիւրանոց Ազգիս - այլ այժմնան հիւրանոցն՝  
կառուցեալ է ՚ի բարեպաշտ Յարաթիւնէ Պետ-  
րոսնան իւրադիք զոյիւք, ըստ յիշառակարանի բա-  
րատորին յամի Տեսան 1820 :

Ուզես ՚ի Մաղրան՝ նոյնպէս և ՚ի Կալկաթա-  
ն վերջ ութ և տան երրորդ զարու սկսանի սպազ-  
րութիւն Հայկական զրաց . թերեւս և շարժեալ  
ըարի նախանձու առաջնոյն : Եւ օք յաւ.ու.ր յա-  
ռաջնոցեալ սկսաւ պայծառանալ ՚ի սկիզբն ինն  
և տանին, ազգասէր ջանիւք Տէր Յովսիփայ  
Ստեփաննոսեան, Պարոն Զնթլումի Աւետիսեան, և  
Խմառախնդիւնն և Օճանասփիւռեան Ընկերու-  
թեանոց : Ազգասէրն Պարոն Զնթլում ընծայեաց  
զիւրն սպարան Մարդարարական Ճեմարանի մերոյ-  
ուստի և ոչ սակաւ պառուղք զուարձալիք և օգոսա-  
ւէտք ընծայեցան Ազգիս առ ժամանակս ժամա-  
նակս, բաղման ջան քրտամբք Պարոն Յովհաննիսի Ամ-  
դալեան. բազմարդիւն վարժապետի նոյն Ճեմարանի :

Յանցելում ամի հաստատեցաւ աստ և Ընկերու-  
թիւն Աբարատեան՝ վասն տարածելոյ զգբազիտու-  
թիւն ՚ի մէջ համօրեն Ազգիս . որոյ զործք թագ  
մկայեցին վասն ինքեան :

Ծէւ և Կօմանդանտ Հռոմանուդար Մարգար ոմն՝  
թերեւս մի ՚ի զօրավարաց Նարարին Բանգալայ :  
Երեխ առ ժամանակօք պահեալ զտուն զպրոցա-  
կան ուսման վասն մանկանց ազգիս, սակայն չկա-

բեմք իրաւամբ առել՝ եթէ զոյք որոք կանոնաւոր ուսումնարան ի քաղաքիո, մինչ ի ժամանակու բարեյիշատակ Յարութիւնի Գալուցեան Եւղոկիացւոյ, որ՝ ազգասէր յօժարամսութեամբն կարողացաւ յընթացս քսան և հինգ ամաց կառավարել զտուանձին ուսումնարան վասն Ազգիս մանկանց։ Յամի 1825 ազգային հրաւիրանօք միացաւ ուսումնարանս ոյս ընդ ազգային Մարդասիրական Ճեմարանի գործէ արդ ժամ է մեզ խօսել սակաւուք։

Ազգային և Ազգաօպւու ուսումնարանու հաստատեցաւ յիրկրորդումն Ապրիլի 1821 ջանիւք Ազգասէր անձանց, մանուանդ բարեյիշատակ Մնացականին Վարդանեան, որ՝ զկնի բազմամեայ աշխատանց, կարողացաւ ի կատար հասուցանել զբազմաժամանակեայ ցանկութիւնն իւր։ Սակայն բարեյիշատակն Աստուածառուր Մուրադխանն եւ ըեկնախ քան զսա ունել զնոյն ցանկութիւնն լուսաւորութեան և յառաջազիմութեան Ազգիս այլ՝ ոչ ժամանելով ուսումնել զկատարումն ըղձից իւրոց, թողու կտակաւ զգումար ութ հազար ռուփոց առ այս վախճան։

Եւանդ ազգային յառաջազիմութեան երեխյայսմ միջոցի սիիւռ տարածեալ զու յամենայն մերազինս, որք յամենայն կողմանց Հնդկատանեայց, Ջավու, Մալայու և Բրմատանայ մոտցնել վիհանձնարար զաջ ազգասիրական կարկառել առատադրէս։ Ողորմածասրութիւնն և առատագեռունու-

թիւն երեւլի էն արդարեւ ի զովելի ծիրս Աղջիս , յոր  
 կարեն իրաւապես պարծել և մերազինք այսոցիկ  
 կողմանց , զորոց ոչ ներէ չափ մատենիս ճառել  
 ուրոյն . այլ՝ ոչ կարեմք առանց յիշառակութեան  
 թողուլ զերկուս ականաւոր ազինս , արժանիս  
 յաւերժից յիշառակոց . յորոց մին վորով , և  
 միւսն հանձարով իւրուլ մեծապէս նպաստամատոց  
 եղին յառաջաւութեան Ճեմարանիս : Առաջինն  
 է Գեորգ Մանուկ երեւլի յաճառականն Բթավիու  
 ի ջավու , որ ոչ միայն առաստանան նպաստիք  
 օգնուկան եկաց կառուցման , այլ և՝ երեսուն հազար  
 ռուփիս կատակաւ աւանգելով , հոգացաւ ևս զհաս-  
 տառութենէ Ճեմարանիս : Կոյնակն և Մաղրասայ  
 դպրասան Հաստատութեան համար , աւանգեալ է  
 ազգատէր հոգիս զերեսուն հաջարս ռուփոց : — Եւ  
 երկրորդն է Յավհաննէս Յարութիւն խահակ Աղա-  
 նուրեան Բառցի , որ կարգեցաւ նախկին Հայ վար-  
 ժապես Ճեմարանիս Սա ոչ միայն ջանացաւ յիդուլ  
 ի միաս մանկանց զամենայի զիսութիւնս՝ որում ինքն  
 էր զիտակ , այլ՝ որ մեծն է , յառանձին վարձուց  
 իւրոց վարձեալ զայլազգի վարժապետ՝ ուսանելը  
 ի նմանէ զազգի ազգի մակացութիւնս , առ ի հա-  
 ղորդել աշակերտաց իւրոց . որք ևս՝ զյարգ արժա-  
 նաւորութեանն ծանուցեալ , ի ժամանակին մեկնե-  
 լոյն նկարելեւուն զկենզանազիբն ծախիւքիւրեանց :

Յուիւ մերազնէից Կալկոթայ են ընդ ամենային իւր-  
 ցիւ Հարիւր առ նք :

## ԳԼՈՒԽԻ

Բառաւ:

Անցեալ ցարդ հարեանցի ի տես գանազանք քաղաքաց, և ծանօթացեալ ըստ կարեորին պատմաբանական ծանօթութեանց ազգայնոց, հաճիցի Ընթերցողն միւս անզամ զարձուցանել դաշտ իւր ի կողմն նաւին՝ որ բարձեալ տանելը զնաբամոյիս։ Շատ լիցի իմանեալ՝ թէ Հանց սա ընդ քաղաքու քաղաքու ի ճանապարհորդութեան իւրում, մինչ ժամանեալ եհատ ի — առ խնամածուն՝ կամ Մեծաւորն, որպէս կոչեցաւ յայլ ուրեք։

Արդ՝ Մեծաւորս այս էր իրաւապէս մեծաւոր, ոչ միայն աշխարհային մեծութեամբ՝ որ բառական համարի առաջի ումանց ստանալոյ զպատիւ Մեծութեան, այլ՝ և մեծահոգիութեամբն, մեծազործութեամբն և մեծաւ հանճարով։ Փոյթ մեծունելը ազգիս մանկանց զարգացման, յորոց զեարօտաւորս խնամ տանելը իւրովք ծախիւք տալ իդաստիարակութիւն, յորոց և մին էր Վահե։ զոր զինի զաստիարակութեան պահեալ և սնուցեալ առ իւր մեծաւ խնամով, առո՞ն ուաեղ արար զնաւ Այսու եղանակաւ՝ բաց յիսկական որդւոց, եղեալ էր արժոնազով այրս Մեծարու և հայր բազմաց շատրաց։ ի վառս իւր և յօզուտ Ազգին։ Խնամ

մեծ տարաւ սա և Արամայիսոյ՝ ոչինչ ընդ հաւ  
յիւրմէ իսկ որպէսոյ, և փոյթ կալաւ ի մատազու-  
թեան անդ նորուն՝ տալ զնու վարժել ի զիսու-  
թիւն ազգային զարութեան + և զինի զարգացմանն՝  
կամելով մատուցանել նմա և զատարին զիսութեան  
ոզնութիւն, առաքեաց զնու ի — . որպէս յԱռաջ-  
նում Գլխոյ անդ յայտնեցաւ, առ Պարսն Պահապէ:

Որ միանգամ անցք անցցին ընդ նա առ Պարսն  
Պահապէննաւ՝ որպէս և զինի չուսոյ նարա, յաւ սամ  
մնացեալ իցէ ի յիշողութեան Ընթերցազին + մայ  
միսյն զարդին պատմին՝ որ յետ այնորիկ պատահե-  
ցաւ . յելանելոյն Արամայիսոյ ի զարատանէն :

“ Զօրանաս, որգեակ . ” տասց Տէր Յուսիկ յԱ-  
րամայիս՝ յերեկոյի ելանելոյն ի զարատանէն . “ լու-  
պահեցեր զերասու իմ ի փարձութեանդ աւուր - զնա-  
և քաջ լեր - զե՛ եթէ ի մատաղ տիս քոյ կարացեր  
զգէմ ունել չարահնարութեանց անքրիստոնէա-  
զայիլ աղանդաւորացդ այդոցիկ, զինչ ոչ ակն  
ունելի է ի քէն զինի լրման հասակիդ : Երանի  
քեզ՝ որ փրկեցար . և երանի այնոցիկ ևս՝ որ քեզ  
պէս յզուր շաւորութեան իւրեանց եղիցին միշտ : ”

Յետ այսց քաջալերական բանից, սկսաւ Տէր  
Յուսիկ հարեանցի իմն եղանակաւ տալ զծանօ-  
թութիւնն մեքենայազործ ութեանց աղանդաւորաց՝  
մանաւ անդ թիզվիթաց . որ՝ թէ և ոչ նոր իմն  
վասն իմ, երեկը զրաւել զուշադրութիւնն ուն-  
կնդրաց + մանաւ անդ սիկնո՞ն Պարսոյրայ, որ՝ ի

զարմանս գրաւեալ, հիսոցեալ էր եթէ զիարդ կաւը եղէ փրկել ի լարեալ որոզայթից նոցա :

“ Ո՞չ իւր ինչ է պարծանքն այնքան, ” ասաց Տէր Յուսիկ, “ որքան Ընտանեաց և խնամակալուաց նորս, Տիկին, և՝ եթէ ամենքին փոյթ յանձին ունիցին տպաւորել ի մատադ սիրո մանկանց զքաղցր սէր Հայրենեաց, ոչինչ պահպանութեան պէտք եղեցին յետ այնու : ”

Այս օրինակ եանց զիշերն առաջին, և ոչ զիշերն ջունեցաւ սիրելի բարեկամն իմ Բարեկէն զալ ի վաղիւ ինձ ի տիսութենուն . այլ՝ ոչ ուրախացաւ յորժամ եանս զի ես ի նոյն յանձունի կարծիս իմ կեայի յառաջին : Բայց և այնպէս՝ զաշնապրեցաք մի ես խօսել ի վերայ բարբառոյ, այլ թողութեամբ ի կամս անձնիւ լոց քաղաքավարել ըստ իւրումն յօժարութեան :

“ Որովհետեւ քոյ բան ու գործոյ մէջ մտանելոյ ժամանակին է արդ, ուրախ եղեց իմանալ զյառաաջադրութենէ և կամ զակնիտլութենէ քումմէն Յօժարակոմ զոցիս զիս ի քումմէ կարօտութեան, նպաստամատոյց լինել բարեկամական խորհրդավէք և ձեռնոտութեամբ իմով . ուստի՝ հաւասարի լիր, ոչ փոքր ինչ կարեն քաղել անձին օգուտ :

Ենորհակալ եղէ յայժ ի բարեկամէս՝ մասն ինքնանուեր ձեռնոտութեանն, խասանալով ոչ վերջունել ի կարօտութեան անսալ խորհրդոց նորա . այլ՝ զ սպասեալ մնայի արդ հրամանաց Ակ-

ծաւորիս, անմարթ էր ինձ խոկ և խոկ բռւռն հարկանել զիմիք գործոյ:

Այլ՝ անցին աւուրջք բազումք, որ ըստ երեսւթին, թուէին ինձ ամք բազումք, և ոչ ընկալաք ոչ զգիր և ոչ ինչ լուր, ոչ ՚ի Մհծաւորէս և ոչ ՚ի Պարոն Ամհազեն, ոչ ես և ոչ Պարոն Պարոյր: Եւ նոյնութիւն աւուրց և բանիցն ու գործոց այնքան ձանձրացուցին դիս, զի եթէ ոչ վասն քաղցր ընկերակցութեան զեղամայ և Արայի՛ մահաւանդ զեղանեայն Արահմիսեայ, չզիսեմ յոր խոր վհատութեան ոչ խորասուզէի: Սակայն և այնպէս զտանէի ժամս պարապոյ միս դնել զրաւոր պարապմանց իմոց, յորս զտեալ զի դարանութիւն իմն յոյժ զուարձացուցիչ՝ այնու զի անցք պատմութեանն մասնաւորապէս զեմայ արգեան վիճակի ընթէին զնմանութիւն, հեղիզայն յԱնզդիականէն ՚ի մերս + մատակարարել ցանկալով մերայնոց և զնոյն զուարձութիւն՝ զոր ես զզայի:

Այս ցանկութիւն զուարձայուցանելոյ ՚ի միոյ, և իղձն զրաւելոյ զփառս զովասանութեան ՚ի միւսոյ կողմանէ, զառեցին բորբոքեցին զերեակայութիւն իմ անգր քան զշափն ձկանել ՚ի խուզարկութիւն նորանոր և զժուարալուր բառերից: Եւ ըստ ասութեան Երեւելի Ազնուականին՝ զորոյ ձեռագիր բանաստեղծութեան զմիտուն քաղեցաք յՆերկորդ Գլեոյ ևս. թէ:

Գ. բարատ բառ գիրքն մասիր ,  
Ծանիր և անլուր բառէր գտիր ,  
Եւ ոզչ էլ կիր առ անխոփիր ,  
Ասա լեզուն զարգարումաս ,

մաի և ես իրաւապէս ՚ի մեջ բառարանի . և գոյի  
զառուս այնքան ծանիր և անլուրս , որ ոչ միայն  
զընթերցողին՝ այլ նոյն խոկ և զգրողին ցատեցու-  
ցանէ դրլուխ առ ՚ի զառանել զնշանակութիւնն :

Ինչ և իցէ՝ զինի բազմաց անօգուտ արժան-  
մանց , կարողացայ յամբակ գործոյն ժամանել . այլ՝  
աւազ խարուսիկ յուսոյ զի ոչ միայն վաստակս և  
ծախուքս ընկունայն եղին՝ քանզի զնող չզառանելով  
հարկեցայ ձրի բաժանել տալ , այլ՝ և ոչ զանէ  
քաջալերական իմն բանի արժանացայ ժառանգման :  
Կա մանաւանդ՝ կրիտիսք անակնկալք կանխեցին՝  
տուանց կոչման , տալ զի Նիս կարծեաց իւրիանց .  
՚ի վերայ գործոյ՝ զորոյ և ոչ զթերթ անզամ հա-  
տեալ էին վասն ընթերցման : “Զայդ զործ և զզո-  
քին նմանն ընթերցեալ եմ և յայլ ազգի լեզուս ,”  
ասէր մին . “վասն որոյ զի՞նչ պէտք Հայերէնին :”  
— “Լանմ շատ կոշա բառիւք լցեալ է զործն ,”  
ասէր միւսն . և այլ ոմն նանայր զառանել զսխա-  
լութիւն իմն բառի , կամ զոնէ , տառի , զի ցուց-  
ցէ այնու զգիտութիւն իւր :

Այսպիսի անակնկալ և պարսաւապէտ բանք , ե-  
այն ևս յայնպիսի անձանց՝ որոց ոմանք և զհինց

տող անզամ պրել չկարէին , բաւ-ական էր նման  
քրոյ խամբացուցանիլ զեռանդ ու իցէ բանասիրի  
գլխոք էին փորձեալ համբերութեան Յովիքայ տա-  
նել այսպիսի անկոչ ստգատանց , և ոչ եռանդուն  
բնաւորութեան իմում + որ առանց աւելի կշռա-  
զատութեան , հաստատեցի ի մոտի ոչ այլ ևս աշ-  
խատ լինել զբաւորական երկասիրութեամբ : Եւ՝  
որ ափսասալին է , զոհեցի անխռոհմութեան և զայլ  
աշխատանո բազմաց աւուրց տարժանութիւնս ,  
մասնելով զամենայն ի հուը :

Որ չափ մեծ խօսանի յայսմ ի մեջ մեր և  
Եւ բոլոցւց ազանց , յորոց միջին հազարաւոր եր-  
կասիրութիւնք ազգի ազգիք զան յերեան յամե-  
նայնում աւուրց , սփռել տարածել զբյու իմաս-  
տութեան ի միջի երկրագուաց նօրուն + և որոց  
զրիչք՝ ոչ միայն զշնորհակալութիւն և զգովա-  
րանութիւն ազգին՝ այլ և զմարձ աշխատանաց  
իւրեանց վայելին փառօք + մինչզեռ ևս՝ առանց  
վարձու ինչ ակնկալութեան , չարժանացայ և ոչ  
միոյ զուարանական և քաջալիքական բարբառոյ :  
Այլ այս տմբնայն անցելոց են բանքու և ոչ ներ-  
կայից + զի հաւատամ թէ զբականութիւն սկսեալ  
է ստանալ զարժանին զյարգ ի մերում աւուրց ,  
և ի միջի մերում :

## ԳԼՈՒԽԻՑ

ԱՆԴՐԱՆԻԿԱՆ-ԱՐԵՎԱԿ :

Խեց զական թու ընդգրկմ սրտողին բանից :

Եւ մի հաւասար շողոքորդ ասից :

Վայրին մի միայն անզգու շութեան :

Դլորել կարէ ի վիճ դառնութեան :

Այնքան ուստիկ տիրապետեաց սե ամսոց սրտիս ,  
զի լցու երեակայութիւն իմ ինքնահնար ծննդովք  
զառնութեան : Ոչ այլ քաղցրանային ինձ իմ ան-  
մեղ պարապմունք , և ոչ իսկ քաղցր ընկերակցու-  
թիւն Գեղամայ կամ Արայի և ո և զեղանեոյն Ար-  
տեմիսեոյ , կարենին ինչ ամոքել և բառնալ ի յու-  
շոյ զանախորժելին զյիշատակ :

Հանդոյն կատու ախորտկին ֆիւ Բւշասայ՝ որ  
ի ժամ քաղցուն յայտ ախորժելի երեւցաւ նմա , և  
զկնի իմանալոյ ի պանզոկապետէն եթէ մասվ կատ-  
ուի ևր պատրաստեալ ախորժոհամն այն խորտիկ  
Օլլո Պօորիգա , այնքան խառնակիցաւ սիրտն՝ մին-  
չե որ միանզամ պատահէր նմա ի Ճանապարհին ,  
կատու երեւլ յերեակայութեան նորա . սապէս և  
իմս երեակայութիւն ամբոխն լով այսու պատահա-  
բաւ , որ միանզամ հանզիպէր ինձ՝ կարծէի զըստ-  
դասնողս գործոյ իմոյ տեսանել ի նմա . նա զիօսս  
և զանմեղ ծիծաղս ամենեցուն յարմարէի իմու մն  
մի միայն կատածանաց :

Ու զոանելով զանդորրութիւն իւ տան , չոքայ  
ի խնդիր քարկենի . զոանել ի նմանէ զբարեկա-  
մականն խորհութիւն՝ զոր այնքան յօժարակամ խոս-  
տացաւ ինձ տալ ի կարօտութեան : Այլ պնիք-  
Հակն իմում կարօտութեան զոր ի նմանէ . զի՞  
ընդդէմ իմ յօժարութեան , սկսաւ . Քարկեն զբամ-  
բառանա ընդդէմ ըազմաց , և բորբոքեաց զպայրոյթ  
որտիս առաւել քան զառաջինն . զոր դժուարու-  
թեամբ ըազմաւ սոնձելով , “ Ու կամիմ աւելի  
լսել . ” ասացի . “ զի՞ եթէ սա կամ նա ասացեալ  
ին զբան արհամարհանաց , զհետ իմ ին ասացեալ .  
և աշ առ երեսու զի լուայց . ընդէ՛ք ուրեմն զօւ՝  
պատմելով զեզյն առ երեսու իմ , յաւելուն ի ցաւու : ”

“ Քարեկամական պարտիք միոյն — ” — “ Քարե-  
կամական պարտիք այն լինելը , Քարկեն , եթէ Չա-  
նայիր լուեցուցանել գայզպիսի ընդմոյբարչանու-  
թիւնս , Հոռացուցանելով ի լոգութենէ . իմմէ ըստ  
կարեորին . զոնէ վասն մատցու անդորրութեան :  
Այլ ինչ և իցէ որպէս ասացիս արդ իսկ , ոչ կա-  
միմ աւելի լսել ի վերայ ըանիս . ցոյց ինձ մի-  
ոյն եթէ կարող եղէց որոք պարապմամբ անցու-  
ցանել զձանձրութիւն աւուրց :

Յետ ձիգ յուղմանց և անհամեմատութեան Հա-  
կոմիտութեանց երկոցունցո , Հաստատցի ի մօք  
զնալ զհետ ազնիւ արհետի նախահարց մերոց . և  
սկսայ Հանապազորդել ի վաճառանցու : Հաճելի  
յոյժ եղեւ Պարոն Պարոյրոյ իմ ոյս վեր ջաւորու-

թիւն, և սկսաւ քաջալերել ՚ի նոյն. զնելով ինք-  
նին, և յորպորելով նոյնպէս և զոյլո առնու լ յի-  
նէն զվաճառս իմ: Քաղցրութիւն շահու շու-  
տով մոռանալ ետուն ինձ զցաւ զբաւոր աշխա-  
տանացս, և անդորրութիւնն առաջին տիրապետեաց  
կը կին մտաց իմոց: Անգուլ ջանիւք կարացի առ-  
սակաւ սակաւ յաւելու ՚ի մթեր վաճառացս, որոյ  
մեծ ազոյն զնողն եղեւ Արտեմիս: յիմոյս կողմանէ յօ-  
ժարէի՝ նախ քան զամնեսին, առաջի առնել և  
ցուցանել նմա զամնեսցն զոր բերէի ՚ի վաճառա-  
նոցէ: և ինքն ևս յիւրմէ կողմանէ՝ պատրաստ  
էր քաջալերս տալ մատադառուրց աշխատանաց  
իմոց: Սակայն՝ գժուարին լինէր մեզ զալ ՚ի հա-  
մեմատութիւն ՚ի զնահառութեան: զի՞ ոչ որպէս սո-  
վորութիւն է ՚ի մշջ զնողի և զաճառողի, միոյն  
ջանալով պակասեցուցանել և միւսոյն յաւելու լ  
յարժէս վաճառին, այլ անզրազարձն այսորիկ  
ըոլորովին:

Բազում աւուքք ախորժելիք անցին այսպիսի  
քաղցր զբաղմամբ, որք՝ ամաչեմ խոստովանիլ,  
մոռանալ ետուն ինձ զԱշահագն և զսիրեցեալ ըն-  
տանիս նորա: Յաւուր միտմ՝ այն ինչ պատմէի  
Բարեկէնի գյառաջադիմութիւն և զակնելալութիւն  
իմ, զարմացայ նշմարել զայլայլութիւն զիմաց  
նորա, զոր շոյտ պատրուակիլով, ջանացաւ ուրա-  
խութիւն ցուցանել ՚ի վերայ յաջօղութեանս: այլ  
այնպիսի կերպարանօք և հատկլեալ բարբառով, որ

տեղի տային երկրայութեան :

“Աւրախ եմ յոյժ՝ Արամայիս, ի վերայ յաջուցութեան քոյ և որովհեան ցանկամ առաւել յառաջադիմութեանդ . խորհուրդ մի բարի տաճքեղ՝ ուստի մեծամեծու կարիս ակնունել : Բարդ իման է փորձոյ , բարեկամ . յոր թէ բարեպազտ գոտանիցին , ուրեմննիստ և ” որպէս իմաստունն ասէ , կեր ուրբ և ուրախ լիր : Արդեան աշխատութիւն քոյ վաստակարեկ՝ ոչ կարացէ ի բազում ամս հասուցանել զքեզ յայն աստիճան մեծութեան , յոր այս սահմատավուանգ փորձ ամբարձցէ . զի՞ որ միանգամ հարկաւորն է , այս և . աալ զմի՞ և առնուլ զհարիւր կամ հազար :

Այնքան յօժարութիւն խրասու իմաստոյն ըստ մօսաց Բարեկենի , հեանելոյ , որքան ուր մեծութեան կամ որ նոյն է վառասիրութիւն յորդորեաց զիս հետազոտնել զառաջարկութիւննորա Ու՞ ոչ այլ իման էր . քան զնենել ինձ զբազու ի վեհակարկութեան փողոյ . որ ըստ Անգղիացոց կոչէ Lottery : Աստահ ի բազզ՝ ըստ օրինակի Անարու . կամերայ ցուցանել զանձն , հաւանեցայ ընդ առաջարկութիւնն . և նուիրեալ զբազմօրեայ քըրտածց իմաց արդասիս , մեացի աւուրն բարդափորձութեան :

Որովհեան ետու ” զբեթէ , զամենայն զոր ունէի ի զին բազդի , զան որոյ ոչ կարացէ ի միւսում աւուր մեծ շուք զնել վանաքի վաճառականու-

թեան իմոյ . լնդ որ առաջեցան Պարոցքանք ա-  
մենեք քեան :

“ Օգոյշ լիր՝ Արամայիս , ի բարեկամէդ քու մի՛-  
յայդանէ , ” ասաց Գեղամ . “ և մի կարծիցն  
թէ աջողութեանդ ինչ ցանկութեամբ յորդորեաց  
զքեզ յոյզ շռայլութիւն : Ոչ այնքան փող՝ որ-  
քան ծանօթութիւնն աշխարհի և բանի ու զործոյ  
է Հարկառոր քումդ այժմեան մատաղ տիոց . և հա-  
ւաստի ևս եմ , զի ոչ խորշեցիս քրտամբք երե-  
սոցդ ուտել պհաց քոյ :

Սակայն՝ ելք իրացն ներհան զնացին կտոկած անաց  
Գեղամայ , և աջողեցաւ ինձ բադդ ի միջակար-  
կութեան : “ Ցիսե՞ր , բարեկամ , զբարի խորհուրդն  
իմ . ” ասաց Բարեկեն՝ որ եկեալ էր խնդակից լի-  
նել ինձ ի վերայ բարերադդութեանս . “ միամիտ  
լիր , խորհուրդ իմ միշտ բարի եղիցի վասն քոյ .  
զի ցանկամ” զկնի սակառուց , անսանել զքեզ ան-  
կախ յումեքէ և տեր քումդ բանի ու զործոյ :

Արդիւնք գործոյն զերախտապարութիւնն ինն  
առ Բարեկեն՝ բարձին ի վերայ ուսոցս , յորմէ ոչ  
ազգարարութիւնն Գեղամայ , ոչ բարի խորհուրդք  
Պարոն Պարուրայ և ոչ ակնարկութիւնք զեղան-  
ոյն Արտեմիսեայ կարացին թեթեացուցանել : Զի՞  
ոչ կարէի ժիստել ինչ ի բարեկամէ , որոյ բարի  
խորհրդով ժամանեալ էի այդպիսի անակնեալ  
բաղդի . և՝ ոչ իշխէի շանսալ խորհրդոց այնորիկ ,  
որոյ բարեցանկութեան զփորձն առեալ էի հաւա-

տեսւ : Այսու աեղեկութեամբ յուսամ ներոզամբ լիցի ինձ ընթերցողն , իրրե պատմեցից զառաջարութենէս ելանելոյ ի տանէ Պարսն Պարութայ , և ընտկելոյ յառանձին տան :

Որովհեաւ զարդին իմ մի միայն խորհրդականն եւ դեալ էր զուգցես Բարիկէն , վասն որոյ և իւր տունն լեալ էր մերս խորհրդարան : ուր նաև մայելէի զզուարձալի ընկերակցութիւն Պարսն և Տիկին Զարմայրայ . որ՝ արդեօք փախոխութեամբ իմն ախորժակի , թէ իւրեանց քաղաքավարութեան , յոյժ Հաճոյական թուէին ինձ :

“ Յնչ լինի քեզ , Պարսն Արամայիս , ” ասաց Զարմայր . “ զոր միանդամ ասացի քեզ յառուր միւնմ . թէ՝ շատ ուրախ էի վասն ցանկանալոյդ ընկերութիւն պահել ընզ Բարիկէնի : և տեսե՞ր՝ ըստ ակնեկալութեանս , որպէս շուտ յառաջացար : ” Նոյնպէս և Տիկինն ցանկայր երախտաւոր հանդիսանալ , վասն իմումն յաջողութեան : Ինչն իցէ յառուր միում զինի բազում խօսակցութեան , խորհուրդ եա ինձ Բարիկէն ընակել առանձին : “ Զի՞ւնիս արդ զկարողութիւն , և Հարկէ քեզ ունել զանդի իմն՝ ուր կարիցես ընզունել զբարեկամն քոյ և զայցելուս . որոց և քեզ ժամանեսցէ փոխարինել զայցելութիւն . և այսու եղանակու ծանօթացիս աշխարհի և մեծացիս և ևս : ”

Անխոհեմ որպէս և էրն խորհուրդս այս , սակայն և այնպէս սրտի մոտք հաւանեցայ կատարել : Եթէ

սակաւիկ մի զմառւ ածեալ էի , որ թէե ար-  
դարե ունեի արդ զկարողութիւն , բայց այդ բա-  
ւական պատճառ չէր և ոչ իսկ պէսս ինչ ունեի ,  
վասնելոյ զայն : Ծախել զփող՝ ի պահանջել հար-  
կի , է ինըքութիւն . որպէս և յանհարկ տեղ  
վասնելն է անխելքութիւն . վերջնոյն նման էր յոյժ  
իմա արար : Սակայն՝ արքեալ էի ես արդ , ոչ ի գին-  
ւոյ՝ այլ ի մեծութենէ :

Աշխարհատեսն Պարոն Պարոյր՝ իսկոյն ընդ բա-  
նալ բերանոյս , իմացաւ եթէ անշահ լինէր ընդ-  
դիմութիւն իւր . վասն որոյ կարճ կարեալ զիսսս  
իմ , “ Առաջազրութիւն քոյ՝ Արամայիս , բոլո-  
րովին ներհակ է , ” ասաց , “ կամաց իմոց . որպէս  
և զիտեմ բարեկամաց և Մեծաւորի քոյ եղիցի .  
վասն որոյ խորհրդատրեցից զքեզ ի բաց կալ ան-  
տի . ապա թէ ոչ միայ լիր ինձ , զի անպարտ եմ  
ես ի հետեանացն . քոյ բարին զու զիտես : ”

“ Զինչ պակասի քեզ ի մեր տան , ” ասաց Տի-  
կինն լցեալ աջոք . “ ունին ինչ գանգառելոյ . չըն-  
չին զումարն արդեօք երեկեան՝ այդպէս շոյտ մոռա-  
նալ ետուն քեզ զբարեկամս քոյ : ”

Յանուն բարեկամի՝ սկսայ աստ և անդ ականել ,  
և զոր ցանկայիս ոչ կարացի տեսանել : Աւուրը  
յառաջ և ոչ կատէի արդեօք ի խնդիր ելանելոյ  
ցանկացելոյս , մինչ ի սենեակ իւր իսկ անխափի .  
այլ՝ առաջազրութիւնս սերկեան , խորդութիւնն  
իմ ածեալ ի վերայ՝ չներէր և ոչ միոյ բայլափոխին

առնուլ ՚ի կողմն այն կոյս :

“ Այսօր զու մեզ ողջիս արտմացուցեալ էս ,  
Երամոյիբն ,” ասաց Տիկինն կրկին , “ և մանա-  
ւանդ ” — “ Արտեմիս ուշտի և եղեալ .” ասաց  
Երայ իսկոյն . “ ապա թէ ոչ պատրաստ լիներ քեզ  
Հանդիպելոյ . ինչ և իցէ՝ ուր և եղեցիս , ցանկամ  
քեզ յաջողութիւն ՚ի սրուէ : ”

“ Ո՞չ լուար ծայնի իմում , բարեկամ . ” ասաց  
Գեղամ . “ ահա տեսանեմ զյառաջարան խորհրդոց  
քումդ կարծեցեալ բարեկամի . երթ , այլ զբայչ  
լեր ՚ի վեր ջաբանութենէն : ”

### Գ. Լ. Ա. Խ. Խ. Ի. Բ.

Ընդունակութիւն :

Ո՞ի ըստ միոջէ պատմութիւն անցից՝ որ անցին  
ընդ իս ՚ի սակաւ-օրեայ ինքնազլու իւ կառավարու-  
թեանն կամ լու . ևս ասել անկառավարութեանն  
ձանձրոյթ ածցէ Ընթերցողի . որոյ վասն հարեան-  
ցի անցիալ պատմցից , թէ առաջին փոյթ իմ եղե-  
գարձել զփոքրիկ տուն մի վասն ընակութեան . որ  
անհաճոյ երեեցաւ բարեկամիս , և խորհրդատրեաց  
զմիւ սմի մնացոյն՝ վասն առ աւել օգաւ որութեանն  
Յետ այսորիկ կամցայ ունել զսպասաւոր մի ՚ի վար-  
ձու , որում նոյնպէս ընդդիմացաւ պատճառելով  
զսովութիւն երկիրն՝ որ է ունել զյառկացեալ

սպասաւորաւա. իւրաքանչիւր զործ . զտոն զի՝ աղ-  
գութիւն սպասաւորացո որպէս և բոլոր երկրակա-  
նաց . կախեալ է դժաղշալի մնութօք . յորոց մին-  
եթէ հայցէ ՚ի հաց , կորուսանէ զազգութիւն . և  
միւսն նոյնպէս կորուսանէ զնոյն , թէ ճաշակիցէ  
շնորհալն քոյ կամ նորա :

Եւյսպէս ուրեմն հետեւ լով սովորութեան , փո-  
խանակ միոյ պարտաւորեցայ ունել զբազում սպա-  
սաւորս . որք ըստ չափու բազմութեանն , այն-  
չափ և առաւել մնասարեր լինէին : Եւ ոչ վարձ  
սոցա էր այնքան չնշին՝ որքան Բարեկէն ապահո-  
մեալն էր ինձ ՚ի սկզբանն . զի՝ արտաքոյ վարձուց ,  
ունէին և զսովորութիւն խորելոյ յամենայնէ՝ որ  
միանգամ ՚ի ձեռու իւրեանց զնեալ լինէին . և որ  
ըստ սովորութեանն , Համարեալ էր չոչ շահն իւ-  
րեանց . այն ինչ ճշմարտապէս ոչ այլ ինչ էր՝ քան  
զկողոպտում ստացուածոց տեսան : Հանդիպեալ  
ուրում սպասաւորի միոջ՝ որ նստեալ առ ճանա-  
պարհաւ քերէր զօրօն կամ զանցչիս և լիզոյր ան-  
տի , իմացաւ զպանառն թէ չկարելով այլ իմն  
եղանակաւ խորել ՚ի զործառնութենէն , կալիալ  
էր զայն եղանակ առ զանցառու զսովորութեամբն  
չգտանել : Եւյսպէս և ես չպոտի զմին՝ սովորապանց  
՚ի ծառայութեան իմում :

Զկնի կարգադրութեան սպասաւորաց , պարա-  
պեցաք ՚ի հանգեցմանս տան . Հոգալով զպիուց և  
հարկաւ որս մասն հանգստութեան . այլ և յայսմ

ներհակ գոտու ինձ խարկէն , և եցոյց թէ պարտէը  
ինձ զնել և զայլս . որք՝ եթէ ոչ առ այլ իմն ,  
պէտ՝ վասն զարդարանաց էին հարկառորդ : Ան-  
սացի ուրիմն բարի խրատառուիս , և պատառորե-  
ցայ այսու աղագաւ յաւելու դարձեալ ՚ի թիւ-  
սպասառորացս , զի սրբեալ պահեսցեն զայնոսիկ :

Այսպիսի վայելու զբաղմունք՝ ոչ ներեցին ինձ  
զբազում աւուրս , հանդիպել ումեք ՚ի Պարոյրեանց ,  
մինչեւ Գեղամ ինքնին ել ինձ յաւցելութիւն :  
Տհաճութիւն իմն կամ զթախծութիւն կարէի պարզ  
նշմարել ՚ի գէմն նորս , սակայն ոչ համարձակէի  
հարցանել զպատճառն : Վասն զի՞ կորուսեալ էի  
զբարեմտութիւնն շնորհակալու սրտիւ ընդունելոյ  
զբարի խրատ բարեկամաց , և գառն թուէր ինձ  
յանդիմանութիւն . նաև նշոյլ իսկ այնմիկ :

“ Այսպիսի բաղդի միշտ ոչ հանդիպել լինի ,  
Արամայիս .” ասաց Գեղամ . “ զգուշութեամբ պա-  
հան զոր ունիս . և ՚ի աեղիս անհարկս մի վատներ  
շռոյլաբար : ”

“ Ուրիմն և դու՝ Գեղամ , մի ՚ի տեղիս ունային  
վատներ զիօրատ քոյ , ”

“ Ա՛ , ուրիմլիք . ես ոչ երբէք կարծէի՝ եթէ բա-  
րեկամական իմս տղու զառն թու իցի քումզ ախոր-  
ժակի . սակայն յուսամ՝ որպէս և բոլորով սրտիւ  
ըզձամ , զի մի երբէք կարօտացիս այնմիկ : ”

Զկնի մեկնելոյն՝ հաւատացոյց զիս բարեկամս ,  
թէ ահաճութիւն Գեղամայ ոչ այլ ինչ էր քան

զնաբեանձ ընդ փառո իմ . և առ ՚ի քամահանս այս  
նորիկ , խորհութղ ետ ինձ կոչունս առնել և խը-  
րախութիւնս կատարել : Եւ՝ առանց սպասելոյ  
իմում հաւանութեան , պատրաստեցաւ ինքնին  
՚ի գործ դնել զառաջապրութիւն իւր :

Յոյժ մեծակոչ եղեւ խրախաննն , և՝ ըստ քմաց բա-  
րեկամիս , յոյժ շքեղաշութ . զի՞ ոչ զոյր պակա-  
ռութիւն իմիք : Համադամ ու անլիք և ըմպելիք .  
շքեղ լուսաւորութիւն և երաժշտութիւն հան-  
գերձեալ եին ըստ բաւականին խոհականութեամբ  
իւրով . և զուարթութիւն կոչնականաց՝ յայտնի ու-  
սպացուցաներ զհաճութիւնն զոր զդային : Այսպի-  
սի զուարձութեամբ ու ըեմն անցաւ զիշերն ՚ի զը-  
լուխ . այլ՝ իրաւն ասել , ոչինչ բերկրութիւն  
զգացի եւ : Զի՞ ելով կոչնական , պարտաւորէի  
առ ՚ի շահել զուէր ամենեցուն , միտ զնել անընդ-  
հատ ցանկութեան կոչնականացս . որոյ ՚ի տրիտուր  
մայիշելցի զսաւտիկ զլիսացաւ առ վաղիւ . որ և Հած  
գիհաստ հիւանդութիւն ՚ի վերայ իմ : Խրանք թէ  
այս միայն լիներ վարձ իմոց աշխատանաց . այլ  
այդքան բարեբաղդ չգառայ : Զի՞ եկն Բարիկն պատ-  
մել ինձ զոր միանգամ լուեալն էր առ զուրս ,  
՚ի մասին խրախաննի իմոյ :

Եթէ չգոյր այլ իմն հնար յաւելլոյ ՚ի զլիսա-  
ցաւ . շաղակրասութիւն Բարեկամիս միայն բա-  
ւական էր ՚ի նոյն . զոր առ ՚ի կարճ կտրել յայտ-  
նեցի նմա զանհանգատութիւնն իմ : Սակայն՝ զոն-

իութութիւն նորա տեսանելով առ նոյն , պար-  
տու որեցայ ՚ի մեր ջոյ յայտնել զանախորժութիւն  
իմ ՚ի լսել և ևս : Սակայն՝ որքան փոքր որ լսե-  
ցի . զեռ ևս բաւական էր ՚ի պղտորել զմիսա իմ  
ընդդեմ ոմանց , զորս հանաչելի իսկ ոչ : Վաստակ  
յանձն առնու լ , ծախել զմող անհնայ , ջանալ  
շահել զսէր , և ՚ի մեր ջոյ ծաղած անակ լինել պա-  
րապորդաց :

Ինչ և իցէ՝ ելի յերեկոյին ՚ի խնդիր Գեղամայ ,  
և զանգատ կալայ զնմանէ վասն չներկայանալոյն  
՚ի հանդիսի իմում : Արայ պատճառեաց զըստի .  
որում ոչ հաւանելով , “ ինչ . ողջ դ ևս ուստի  
էիք լեալ . ” ասացի : “ Ո՞չ , Արամայիս . ” զարձոյց  
Գեղամ . “ Տշմարիս պատճառ . չդարոյ մերոյ էր .  
չտալ քեզ տեղի տանըյ առ յապայս թէ և մեք  
պատճառ . եղաք քում մի միասու . և՝ կամ լաւ ևս  
ասել , չկամեցաք ներկայութեամբ մերով քաջա-  
լերել զքեզ ՚ի շատ իզ որ շահ բերել չունի քեզւ  
Գեղամ . զի ոչ կարօտիս խրատու , որպէս յանցե-  
լուն առացեր . վասն որոյ մի համարիցիս զիս ասել  
ինչ , քան զյայտնութիւն աղատ մասց իմոց :

Դառն և յամենայն ժամ խրատ՝ այլ առաւել  
զառնազոյն յորժամ մասուցեալ լինի ՚ի տարա-  
ժամ պահու . Արգէս Հիւանդի՝ ՚ի սկզբան առաւել  
դառնանայ ու մազ առողջացուցիչ զեղոյ , մինչ ՚ի զայ-  
րանալ և խոշունգել խօթութեան՝ քաղցրանսւ-  
այնուհետե նորին զառնութեան . սոյնակէս և ափ-

տացելոյն բարու ք՝ դառնանայ յոյժ Խըստ ՚ի սկզ-  
բնաւ որութեան ախտին , մինչև յանցանել զայ-  
ռութին՝ խելքն ՚ի զլու խ եկեալ , ինքնին ելանել  
՚ի խնդիր նորուն :

Այս օրինակ Հիւանդութիւն իմ՝ որ յանակն-  
կալ վիճակարկութենէ անոնի , զեռ ՚ի սկզբնաւո-  
րութեան ելով , իրաւի յոյժ անախորժ առներ զեր-  
րատ՝ թէ և ՚ի ճշմարիտ բարեկամ՝ մատուցեալ :  
Բաց յայսմանէ՝ բարի խորհուրդն ևս իմ բարի բա-  
րեկամիս , միշտ առ ներհակն մատակարարեալ՝ ա-  
նախորժազոյն ևս առնեին զնոյն : Խոյս նառ ու-  
րեմն յամենայնէ՝ որ միանդամ անախորժ թուէր  
ինձ , և սրտի մտօք հետեւցայ բարիենին աղդա-  
բարութեանց . որ՝ միշտ նորանոր հանգերձեալ զը-  
ռաւարձութիւնս ՚ի մէջ նորածանօթ բարեկամաց ,  
ոչ ներէր ինձ և ոչ զժամ մի միտ զնել զործառ-  
նութեանց իմաց :

Բայց՝ հիւէ կարացեալ ընդզէմ ընութեան մար-  
մնչել , որ ևս կարողանայի : Զի՞ ամենայն ինչ որ  
չնորհեցաւ մեզ ՚ի բնութեան , վասն անդորրու-  
թեան ին և սիրովանաց . զոր պիտի ՚ի կիր արկա-  
նել ըստ կարգադրութեան Նախասահմանողին ըը-  
նութեան . ուստի՝ յանցանել մեր ըստ չափ , խառ-  
նակիմք զընութիւն և ածեմք աւեր ՚ի վերայ : Ուր-  
պէս և ևս՝ զգիշերս ՚ի ցերեկ փոխարկելով , և զպէսոս  
կենաց ՚ի զեղիսութիւն , շատ շոյտ զփորձ առ ի  
իմումն կարողութեան : Անհարկ եղիցի ինձ յաւե-

լու. թէ հիւ անզութիւն սաստիկ և երկարառե։  
եղեւ հասուցուցն անմիտ ընթացիցս։

Գ. 1. Ա Խ Խ Խ Գ. .

Աղուան։

Զիդ և շատ ձիդ արգեօք տեսել ուներ պատ-  
ութանազանցութեանս իմոյ պատուհամ՝ որում ե-  
արժանին իսկ էի, և զուցէ աղէտալի իսկ առնոյր  
զիատարած, եթէ չէր խնամ տարեալ Պարոյրեանց  
ի ժամու կարօտութեանս։ Զինի աւուրց անզգայ-  
ութեան՝ յորս անհնար է ինձ ի յուշ ածել ինչ։  
տեսի զգեղամ առ երի բարձուո բազմեալ յա-  
թռոււո՞ւ։ Կերտուցի ի յուշ ածել զանցեալս, այլ  
ի զուր։ ցանկացայ հարցանել, սակայն և այն-  
պէս արգել գեղամ։ յայտնելով զպատուեր բժշկին  
առ այն։

“ Առ մազիւ՝ յուսամ, ժամանակ շատ զացուք  
խօսելոյ ։ այլ այսօր պարս է քիզ լուսութեամբ ան-  
ցուցանել, և մի զբաղեցուցանել զմիսո քոյ ։ վասն  
որոյ կաց հանգարտ մինչ ցայն ժամ։ ”

Պանացայ ըստ ազգուութեանն ոանձ արկել ըը-  
նութեանս, սակայն ընդ պիրազառաւալ ու շոյ յի-  
շատակիս առ սակաւ սակաւ, սկսան և միտք իմ  
սատանզել։ Յիշեցի զբարիէն և զնորընծայ բա-  
րեկամա՝ որ պար առեալ զինեւ զօք ամենայն զուար-

Ճանային . յիշեցի զվերջին դիշերն զոր լու սացու .  
ցաք . զթու լու թիւննի լոյս տունջեան , և զ թերժե  
որ յետ այնորիկ անկաւ ՚ի վերայ իմ . այլ դինի այնը  
վեհ մեծ անկաներ ՚ի մեջ յիշողութեանս :

“ Ո՞ւր է Բարիկն , ” զոշեցի . յետ ընդ վայր  
ջանահնար լինելով ՚ի յուշ ածել զանկեալն ՚ի մը-  
տաց . “ ուր է նա : ” Առ այս բան գէմք Գեղա-  
մայ այլազունեցան , և մատամբ առ ընբանովն նը-  
շանացի առնելով ինձ ՚ի լոել . “ Ասացի քեզ սպա-  
սել մինչ առ վաղիւ , ” ասաց դինի սակաւիկ լը-  
ռութեան . “ և յուսամ որ անսայցես . զի մի զարձ-  
ցի հիւանդութիւն քոյ միւս անզամ : ”

Զիզ ժամանակ անցաւ խորին լոռութեամբ յեր-  
կոցունց կողմանց . և ընկողմաննեցաւ Գեղամ ՚ի վե-  
րայ աթոռոյն , կափուցանելով զաշս իւր . թերեւ ո  
և յորդորել զիս ՚ի նոյն : Ծանացայ հեամել օրի-  
նակին , սակայն քուն փախուցեալ էր յաշացս .  
ուստի յայսկոյս և յայնկոյս շըջըջելով , նշմա-  
րեցի զստուեր իմն ՚ի սրահին : Հետաքրքրութիւն  
մղեաց զիս ՚ի հետազօտութիւն . որոյ վասն մերթ  
յայս և մերթ յայն կողմն անկանելով՝ առ ՚ի վոր-  
ձել եթէ ննջեր պահապանն իմ , ելի հանողարտո-  
րէն ՚ի մահճէս և յուշիկ մերձնալով անշշունչ —  
Ո՞ւ . — կարգադ բնչ իցեմ մոռանեալ զտեսիլն զոր  
ուսի . — Արտեմիթս — ՚ի սրահի իմում — ՚ի ծճնկա  
իջեալ — և աղօթմատոյց ՚ի ձեռին : Կարծեցի առ-  
աջօք ինչ տեսանել . տրորեցի զաշս և սկանե-

ցե կրկին , սակայն նոյնն էր՝ նոյն ինքն գեղանին : “Ո՞վ ապա շնորհութեանս , ” զոշեցի . և անկայ թալիացիալ :

Թմնդիւն անկմանս բաւ ական էր ի շրուտցանել զմին , և զարթուցանել զմիւան . որք և հաւդ ձեւ պով կուլեալ տարան զիս առ մահին , ուր անեկեալ ծածկեցի զերես : Զինի տակաւուց ողի առեալ , “Գեղամմ , գեղամմ , — ” զոշեցի . — “Եթէ այս օրինակ խն լուգաւ եսցիս , Արամայիս — ” — “Ոչ գեղամմ , ոչ . չեմ ես արդ խելազարեալ . անցու խելազարութեւն իմ առաջին : Յերազի էի գեղամմ , իրաւն յերազի : Պատրեցայ — ” — “Յուշ Արամայիս , զոր յիշեցիս քեզ զպատուիրան բժշկին , թէ կամիս առողջանալ : ”

Սակայն շարժեալ ելով անզը քան գշտի , ոչ կարսցի խոկ և խոկ հանգարանել . այլ տուեալ անցս դգացողութեան , հեղի հեղեղս արտասուաց : Զինի գաղարման՝ գոյի զգեղամմ միայնակ ընկողմնեալ բառ տուանոյն : որում և ես շատ շոյտ հետեւեցի . թեւթեւացեալ զոլով զլեոյս : Զարթեայ առ վաղիւ կազդութեալ ոգւով , և տեսի զՊարսն Պարոյր առերի իմ բազմեալ : Որ՝ զինի բազմաց քաջալիրական և յարդորական բանից , “Այս առաջին զամշէ , ” ասաց . “ո՛ր տքնեալ եմք ես և իմայինք առ սընարիւ քով . Արամայիս . այլ — ինչ և իցէ՝ մի խոսվեցի սիրա քոյ , թէ զյանդիմանութեան ինչ ունիցիմ զբան առ քեզ : Վամեալ ես բաւ ականին

զմբուր պատուհասի պատուիրանագանցութեանդ , և քաւ լիցի ինձ յաւելու ՚ի նոյն : Պարտ է քեզ ինքնին ընտրութիւն առնել արգ ՚ի մէջ բարւոյ և չարի , և շահ անձին քաղել ՚ի նեղութենեղ . շնօրհակալու սրաիւ ընկունելով զայն , իրրե զերդատ մատուցեալ ՚ի բարերարէն . որ ՝ յանդիմանէ զորդի զոր ընդունի :

“ Խրամն զոր ունիս քաղել ՚ի պատահարէդ այս է , Արամայիս . մի երբէք պարապ մնալ , զի պարապութիւնն է մայր ամենայն չարեաց և թշշուառութեանց . զորոյ զփորձն առեր քաջ՝ երր որ քոյ օրինաւոր զործն թողեր և պարապորգութեան զհետ վնացեր ։ Քրտամբք երեսաց քոց կերեցես զհաց քոյ ։ ասաց Ամենազութ Ստեղծողն ցմարդն առաջին . զոր՝ ուղեղ դատողութեամբ և արդեան փորձառութեամբ կարես վկայել , թէ վասն բարութեան մարդոյն օրինազրեաց : — Միւն այս է զի անխախտ պահեացես զկարդ ընտ թեան սահմանեալ ՚ի Մարգարիթէն . որ՝ ողորմածութեամբ իւրով կարգեալ է զցերեկ վասն աշխատանաց , և զգիշեր՝ հանգստեան . զոր ՚ի խախտելց՝ վիշտես քումբ ընութեան . նոյնպէս և պարզեւեալ է զառատ բարութիւնս վասն պահպանութեան կենաց . որովք պարախս գոհանալով բառականանալ , և մի տենչալ Համեղութեանց . զի՝ թէ առ անզամ մի կորուսցիս զբաւ ականութիւնդ , տենչն զհետ համեղութեանց երթալով երթայ . և զօրանայ . որով և կա

բուսանես զախորժակդ : Բայց յայտմանէ՝ համեմութիւնքդ այդոցիկ առ օսկաւ սակաւ թունաւորելով , հիւանդութիւնս բազմատեսակս ածեն ՚ի վերայ և կարձեն զիւանս :

Զինի սակաւուց եթող զիս Պարսն Պարոյր եղաց . բայց իւր ասութիւնքն ոչ զնացին ՚ի մօսացու Աշխարհատես և փորձառած մարդ որպէս էրն՝ քան զայս յարմարագոյն ժամանակ ոչ կարէր զտանել վասն ապաւորելոյ զբարի իրասս իւր ՚ի մարի իմում : Վասն զի բարձեալ էր հիւանդութեան զպարտակն անմոռութեան ՚ի մօսաց իմոց . և վերածեալ ՚ի յիս զբարեմոռութիւնն իմ առաջին : Ո՞վ անխմանալի բարութեանն , որ զհիւանդութիւն անզամ վասն բարութեան մարգոյն պատշաճեցւցանէ :

Ակայ ևս ինձեն խորհեալ ՚ի վերայ անցեալ ընթացից իմոց , և զարհութեցոյ . նկատերս զվիհն մեծ բացեալ առաջի իմ . յոր զահամբէժ արշաւէի արգեօք , եթէ Հիւանդութեան չէր զկայտրութեալ : Ոչ միայն շնորհակալ եղէ յամենամեծ իշխն որոյ անքուն աչք տքնին հանապազ և յիմ ովէս անարժան էակի վերայ , այլ և բոլորով սըրտիւ մաղթեցի : Փրկեալ զիս ՚ի փորձութենէ : և ու յապայս :

՚ի խոկաւ իմում , տեսի զի Պարսն Պարոյր զանց էր արարեալ բոլորովին առնել զյիշատակութիւն ինչ զբարկէնէ : այլ Պարսն Ապհազն արդէն զգուշացու ցեալ էր զիս կանիւաւ , հեռի մնալ ՚ի վա-

ընկերաց · զօրով զանց առնելով՝ հասեալ էին ինձ  
արգեան նեղութիւնքս : Ինչ և իցէ՝ ժամանում  
Գեղամայ թեթեացոյց զմիտո իմ ՚ի վարանմանե :

“ Զի՞նչ հոգք ամբոխն զքեզ, Արամայիս ·  
ամփոփ կալ զմիտո քոյ, բարեկամ, — ա, ներու-  
դութիւն, սպալեցայ — ” — “ Ոչ, Գեղամ, ոչ ·  
զու նոյն ես որ էիր, ես սպալեցայ · բայց միայն ՚ի հա-  
նալողութեան իմում, այլ ոչ յընորութեան ·  
և՝ թէ ուր քոյ առաջին անյողդողդ իցէ առիս, ա-  
հա ձեռն իմ : ” — “ Բաւական է, սիրելի · ըստ  
պարտականութեան իմում զգուշացուցի զքեզ մինչ  
՚ի վերջն . որում եթէ ունկն մատուցեալ էր քոյ  
թերես և փրկէիր ՚ի տառապանացդ · ոսկայն՝ ըստ  
իմ կարծեաց, փորձութիւն՝ թէ և փոքր ինչ նե-  
զութեամբ, հարկաւոր է վասն օգտի մարգկան ·  
Որպէս ոսկի՝ որ որքան մաքուր և իցէ, փորձու-  
թեամբն ՚ի բովս առաւել մաքրի յստակութեամբ ·  
այնաքս և մարդ՝ որքան մաքուր և իցէ, փոր-  
ձութեամբ նեղութեան առաւել մաքրի պայծա-  
ռութեամբ : ”

“ Այլ՝ ուր է բարկէն, ” հարցի ցԳեղամ ·  
“ զիարդ ցարդ չե երեեցեալ, ” — “ Թերես և  
կարծէր թէ չես ապրելոց · Արամայիս ” առաց Գե-  
ղամ ծիծաղելով · “ ոսկայն՝ ոչինչ երկուանամթէ  
ընդ առնուլ զլուր առողջութեանդ, ընդ հուպ  
եկեցէ խնդակից լինել ըստ օրինի սեռն բարե-  
կամի : ”

Որպէս ասոց Գեղամ՝ նոյնագև և եղեւ . զի Հու ոչ  
ընդ մեկնիլ նորա . երեւցու Բարկէն . և կամ մ-  
ցաւ քաղաքավարել ըստ առաջնոյն . Բայց խեցին  
յայտնեցի նմա պարզաբար զորոշմանէ մասց իմաց .  
և ինքրեցի զի և ինքն քաղաքավարեցի ընդ իս  
բատ առաջնոյն . մինչ էիս ՚ի տան Պարոյրեանց :  
“ Որ միանզամ անցք անցին ՚ի մեջ մեր՝ զկնի տարա-  
րագր բարերազգութեանս , որ ՚ի զի հակարկութենէ  
անափի . համարիմ ես զամենայն իրեւ զւեղեալ . և ակն  
ունիմ տեսանել զնոյն և ՚ի քէն . Ու քան մասքանու-  
թիւն որ կայր ՚ի միջի մերում՝ նախ քան զյիշեալ  
զիպուած , ցանկամ զի սոսկ նոյնքան մնացէ և  
ոչինչ աւելի ՚ ”

Գուն զործեաց Բարկէն շրջել զմիւս իմ . այլ .  
անզրզուելի զտանելով , ել յերեսաց իմաց սպա-  
նալիօք :

### Գ. Լ. Ա. Խ. Խ. Դ.

Յայտնաբիւն :

Եետ Բարկէնի զնալոյն՝ յուզմունք անհնարինք  
պաշարեցին զիս միւս անզամ : Խորհեի և խորհեի  
և զԲարկէնին արաբողութեան շարժառիթ ճանա-  
չել ոչ կարէի : Քաջ ՚ի վերայ հասեալ արգէն  
եթէ զիսում նորա ՚ի յորդորելն զիս ՚ի զի հակար-  
կութիւն կամ բաղդաֆորձութիւն , ոչ այլ ինչ

Եր քան թէ հու ազեցու ցանել դչնչին պրամագր-  
րու իւ իմ՝ ու սով՝ յանակնեալ գիպու ածին զգի-  
մակ լաւ ամարդու թեան զզեցեալ, զուն դործեալ  
Եր տակաւ ին ի զուռիս հանել զչարեկամու թեան  
իւ ր դիտու մն, բարեկամու թեանն սու րը անու ամբ:

**Զպատճառ** այսը ամենայնի անհարին լինելով  
ինձ իմանալ, ոստու ի յայս տակս ի միոյ կարծեաց  
ի միւսն - երբեմն համարելով՝ թէ խանդ ընդ յա-  
ջողութիւնս աշխարհային մեծու թեան զբակալ  
իցէ զնա յայն - և երբեմն՝ թէ սիրելի լինելոյս ա-  
ղազաւ - տակայն՝ և ոչ այդոքիկ եկն բաւ ականին  
առիթ այգափիսի ձեռներիցու թեան - զի՝ ամենե-  
ցուն թողեալ և արծուկապէս հասանել երկոցունցն  
ես, ջանիւ աշխատանաց՝ սու աշնոյն, և քաղցրու-  
թեամբ վարուց՝ երկրորդին:

**Օփու մն մասց աւելանալով**, ի միաս անկատ  
Պարսն Ամհազն - և սկսոյ զգողանի հարկանել  
վասն համարոյն՝ զոր ունեկի տալ նմա զգործոց  
իմոց : Բայց և այնպէս՝ յետ բազմաց մասսանչու-  
թեանց, քաղցր միսիթ արու թիւն իմն եկն ի վերայ  
իմ, ի յիշատակ եր ջանիկ սու ու րցն՝ ընդ երզաւ նո-  
րա անցուցելոց - և սկսոյ տա ոչօք սեսիլս երս-  
զել դան ապազայից :

Յայսմ զու արձուլի երե ակայու թենեկ զարթեայ  
ժամանմամբ Գեղամայ, որ ախորժելի դիմօք մո-  
տուցեալ, “ Աչքդ լոյս ” սաաց, “ Արամայիս - ա-  
հա ցանկացեալն քոյ ի բազմաց ժամանակաց . ”

և մասոցց ինձ զթուղթը մի՝ զոր իսկոյն ծանեայ Պարան Վահագնին զուլ։ “ Մեք ես ընկալաք ի նմանէ զյատուկ զիր, յորում՝ զինի զանազան բանէրից, յաւելու ծանուցանել զվերապանալոյն իւրոյ առ մեզ - ուստի՝ ըստ զբութեան իւրում, ակն ունելի է անսանել զնա յայտ քանի աւուրսման որոյ կրկին աչքդ լոյս։ Ցանկալով լինել աւետաբեր այսպիսի ուրախարար լրոյ, եկի ես ինձն բերել զգիրդ - վասն որոյ՝ թողում զքեզ վերաբին, առ ի առաջ քեզ Հանգարտորէն միերծ անել զիոյն - որ ինքնին պատմեացէ զամենայն։ ”

Կարճ թէե էրն Պարսն Վահագնին նամակ, սակայն և այնպէս ունէր զանբառութիւնս զբուցաց պարունակեալ։ վասն զի՞ սովորութիւն ունելով կշռելոյ զամենայն զբառս, իւրաքանչիւր բառք իւր զոգցես զբան իմն նշանակէին։ Զինի պատմելոյ զհանապարհորդութենէն և զժամանմանէն ի՞ — . յիշէր ապա զանցս քաղաքին, որ անկեալ զոլով ի ձեռս թշնամեաց, իցեալ էին զանցս Հաղարդակցութիւնն ըոլորտին - թոյլ սալով մտանելոյ միոյն, այլ ոչ ելանելոյ։

“ Ոչինչ զարմանք ուրիմն, ” յաւելոյր ասել։ “ վասն չընկալնոյ զպասասիսանի զբոյս ի՞ Մեծաւորէզ յայնքան ձիգ ժամանակ - կամ՝ յապաղելոյ զիմն ցարդ : Իսկ՝ արդ բարձեալ երաժ կասկածանաց, տուու և անցից արծակութիւն - վասն որոյ փութացոյ ծանուցանել զի՞ մօսոյ ունիմ մի-

բաղառնալ յայդը . իմայնովք հանդերձ . զի իմ  
ախորժակ չունի ինչ հակումն առ բանակս զորաց,  
ըստ Մեծաւորի քում . որ՝ որպէս թէ ըստ Անի-  
բագայ ծնեալ իցէ ի նմին , առ ոչինչ զրէ զան-  
ձին զվառնգ . ինազադութեան երկրին միայն միո  
եղեալ :

“ Ո՞ղջ լեր ի Տէր , որպէս և մեք ամենեքեան  
ո՞ղջ եմք . և միշտ յիշեմք դքեզ :

Քոյդ որպէս միշտ .

#### Ա Հ Հ Յ Դ Ն

Առյա սակաւ ատաղ զրութիւնն ոչ յազեցաց զմիւն  
իմ մի անզամ ընթերցմամբ , վասն որոյ կրկնեցի և  
երեքկեցի , սակայն ատակաւին անյագ մնացի . զի  
անպահոյն թէն երեւը , ուներ յինքեան պա-  
րունակեալ զամենայն որում անձկայիս տեղեկանալ .  
մանաւ անդ վերջի բառն չիւնիս . ով մինիթարու-  
թեանս :

Ու բախութիւնն իմ անեաց և մինչ ի զիշերի .  
և ի քուն անզամ երազէի զգրութիւնն : Ուստի  
յարեայ ընդ առաւ օսն մեծապէս կազզութեալ , և  
զոգջիր ապաքինեալ . և ակին ունեի նորանոր լրոց  
ու բախաբարաց : Այլ մի զառն աշխարհիս . մը  
այն ու բախութիւնն որ անխառն եկեցէ ի վերայ  
մարդոյ : Զի՞ ի մէջ ու բախութեանս և բերկրալի  
ակնեալութեանս , եկին մարդիկն ամենոյն յորոց  
յապատիկ գնեալ էի զբազում իրս և իռանեցան զի-  
նե . ուրք ըստ խոսափանութեան իւրեանց . Հնա-

բիւք Բարեկենի միոյն՝ տուեալ էին զայս զրու  
յիմ վերայ։ Զի՞ առ ՚ի քեն վրիմուց անցերայ  
առուր, համբաւ հարեալ զմերձ ՚ի մահ հիւ անդու-  
թենէս, կուտեալ էր զամենայն զպարտատեարս  
՚ի վերայ իմ։

Որովհեամե շունեի զմար զէմ զնելոյ պահանջից  
պարտատեարց՝ քանզի ոպառեալ էր զբամի իմանե-  
նայն, անկայ վերատին ՚ի վարանս, և կորաւաւալ  
զզուարթութիւն իմ առաւ օսեան, անկայ ՚ի մա-  
հինս միւս անզամ՛։ Կոր յիշեցի զիրատ Պարսկ  
Պահագնի ժամն ընորութեան ընկերաց, նոր փոշի-  
մանեցայ ժամն չպնակոյ զնես այնորիկ, և ՚ի զառ-  
նութեան սրտիս զոշեցի։ “Ո՞վ Ա.ահազն, Ա.ա-  
հազն։”

“Ա՛, Արամոյիս և ուստի լուար զզալատենէ  
իմմէ, ” զարձոյց Ա.ահազն՝ զուարչուլի զիմօք ե-  
լանելով ՚ի միր։ “Արդ իսկ եջի ես ՚ի նուռ, և  
Հարցանելով եկի զքեզ զտանել։ և զարմանամ ե-  
թէ ով պատմեաց քիզ։”<sup>22</sup>

Դալուստ բարի հրեշտակի՝ թերես և ոչ առա-  
ւել մխիթարութիւն բերէր ընդ ինքնան ՚ի ժա-  
մուն, քան զՊարսկ Ա.ահազնին։ Ոչ կարացի իս-  
կոյն հաւատալ տեսութեանս, կարծեցի խելա-  
ցնորութիւն եկեալ ՚ի վերայ։ և սկսայ ըոլորել  
զմբու։ Ա.Ա. նոյն էր, նոյն ինքն Ա.ահազն։ որ  
զուցէ յիմ պես յապշութիւն զբաւեալ, զիսյա-  
ռահալ էր առ զլիով սանորիոցն։ Ասաւկութիւն

զգացմանցու՝ թափե և տուն ստիցու՝ թռեաց, անկայ  
զբաննորա, և եղէ անյու ։

Գ. 1. Ա. Խ. Խ. Տ. Ե. ·  
ԵԼ·:

Խնամովք Պարոն Վահագնի ոչ ընդ երկար ահ-  
ւեաց ու շազնացու թիւնն : Եւ՝ իրբե յիս եկի, ահ-  
սի զնաւիխորին մասձու թեան ձեմն տուեալ զգը-  
նալ ի սրահի : Ասկաւ բառքն քաղեալ ի լերա-  
նոյ կրպակաւորացն, և հանգամանք ամեն տուեալ  
էին նմա՝ ի սակաւ միջոցի անդ անզգայութ թիւնն,  
զբաւ ական ծանօթու թիւն զանցելոց կենաց իմաց ·  
որպէս և որոշելոյ և վերջաւորելոյ վաճն ապաւնայն :

" Արգէն լուեալ էի՝ Արամայիս, զառանձին  
բնակութիւնէդ, " ասոց Պարոն Վահագն բազմե-  
լուլ առ երի իմ, " որ և մասնաւորապէս փութա-  
ցոյց զմերազառնալս + սակայն — ինչե իցէ — զո-  
միայն խնամ տար առողջութեանդ . " շարունա-  
կեաց հատկեալ եղանակաւ, ջանալով թաքու-  
ցանել զթախծութիւնն իւր և երեսիւ զուարթա-  
զին, " զու ջանաւ կազզուրել զքեդ, և թագ իմ  
հոգ լիցի ամենայն : Երթամ արդ պատրաստել զան-  
դի, և ապա եկեալ տարայց զքեդ ի տուն :

Ու յիտ բազմաց զարձաւ Պարոն Վահագն,  
և առաքեաց զիս պատզարակաւ, ի տուն . ուր  
ըստ ակնեկալութեանն, հանգիպեցայ ամենեցուն :

որում ցանկայի հանդիպել : Անդ առ զրան՝ սպասեալ մնայր ինձ զօրովազութ Տէկինն , առ ՚ի ձեռքն տալ ՚ի վերելո սանդիսոց - ՚ի միւսոյ կողմանն շուրջ պատեցին զինեւ զերմականին , և անձկային ընկալնու լ զկարօտեալն համբոյր . և՝ ահա ի ջանէր Սաթինիկ օգնել մօր իւրում ՚ի վերելո իմ : Մինիթարութիւն այսպիսի չէր իմ ճաշակեալ ՚ի բազմաց հետէ . ուստի՝ որպէս թէ նոր ոգի տոհալ , սկսոյ ինձէն եւանել ՚ի վեր :

“ Ես չեմ մոռացեալ քոյ տուած զասերն , Արամայիս , ” ասաց Սաթինիկ քաղցրերես զիմօք . “ քանզի՝ ՚ի հեռաւորութիան անզամ պարապէի միշտ ՚ի վարժել զայնս : ”

Այս միամիտ ասութիւն զազգուութիւն մեծ էր վհատեալ սրտիս , և անզորըութիւն պղտարեալ մօտացու : Զի՞ այնու տպահովացայ , թէ ընդ զասերին և զզասատուն ունէր ՚ի մտի : Երանիթէ և ես կարողանայի այսպիսի միամիտ մօտօք անմեղ համարո տալ :

Ինչեւ իցէ՛ զարծաւ Պարոն Վահազն զուարթազին զիմօք , և ասաց որ աւարտեալ էր զամենայն ըստ ցանկութեան իւրում . և՝ “ ուրախ եմ , որ զարդիս ոչինչ ունիս աւելի՞ քան զոր ունէիրդյառաջ քան զելանելն իմ աստի : Վասն որոյ այժմ պիտի նոր սկսանիցն զաշխարհ , և յոյս մեծ ունիմ՝ որ ՚ի վերջին պատահարէ խրառեալ՝ բարիոք կատարեացն : ”

Արգէս տառապանքն ի՞ չորից կողմանց թափեալ  
էին յիմ վերայ , սոյնապէս և արդ միիթարութիւնն  
սկսու ՚ի չորից կուսէ պատել զիս՝ մայրագութ  
խնամովք Տիկին ջն , զու արթազին զու արձախօսու .  
թեամբ Սաթինկան , և զու արձալի պատմութեամբ  
Պարսն Վահաղնի :

Այլ՝ ՚ոչ ընդերկար տեհաց և այս երջանկու-  
թիւն . զի՞ յետ սակաւ աւուրց , առեալ զիս մե-  
կուսի Պարսն Վահաղնի ասաց . “ Հարկաւոր է  
քեզ Արամային , մերազառնալ արդ առ Մեծա-  
ւոր քոյ . քանդի՞ զիսեմ պէտս ունիցի օգնակա-  
նութեան քում : Արդէն կայ նաւ ՚ի պատրաստի ,  
և՝ ոչինչ մնայ բաց ՚ի քումմէ հաւանութենէ :

Զի՞նչ մնայ ինձ յաւելուլ , քան թէ՝ տուեալ  
դհրաժարականն իմ ողջոյն բարեկամաց համայնից .  
ելի միւս անդամ ՚ի նաւ . զամնալ ուստի եկեալն էի :

Պայծառ էր որն , և աջաղակ հոդմն . ուստի ե  
զբարելսաս նաւագնացութիւն զու շակէաք վասն  
մեր : Ասկայն՝ չէր այդպէս տնօրինեալ վասն մեր  
՚ի զերազոյն իւն , որոյ ակնարկութեան մնան հոդմք  
և մըրիկք . որք և յարեան ՚ի միւսում աւուր և  
խոսվեցին զծովի : Բարձրացան ալիք և զոշեցին  
հոդմք . և ծածկեցաւ ամենայն սեաթոյր ամպովք  
մթութեան : Ո՞վ օր արհաւրաց . որոյ յիշասակ  
անդամ սարսակցուցան զուսկիրս :

Արտինեան՝ ՚ոչ կարէաք ՚նշմարել ինչ , որով ե-  
ռեզիւ զընթացս նաւ ին , վասն որոյ եթոյ նաւա-

պիտի ճակատազրբեն զամենայն . հրաման միայն ուստի ամենեցուն մնալ արթուն և ՚ի պատրաստի : Խակ մըրբիկն երթալով երթայր և զայրանայր . մինչ և խօրտակել զդեկ և զհայմա նառուն : Անդ էր տեսանել դժմահ նկարեալ ՚ի գեմո ամենեցուն . և ոչ իսկ նառապեան քաջափորձ՝ աղաս մնաց յել կիւղն : Որ զարձեալ առ իւ ,

“ Կորեաւ . յոյս . Արա նոյնո , ” ասաց . “ այլ լիք հնար փրկութեան . ով թէ հանաշէի զՅով նանն ՚ի միջի մերում : ”

Ասկայն ոչ շատ ժամանակ էր մեզ որոնելոյ վասն Յովնանու , զի՞ թնդիւն և ցնցումն ամանին զումեաց զառ զուրս հասեալն զկօրուստ : “ Մակոյկն ՚ի չուր , ” զոչեաց նառապեան . սակայն նախ քան զժամանելն ՚ի խոնարհ , զարկոււ մակոյկն ՚ի կողս նառուն և ՚ի կոտորս ջախջախեցու : Յուսահամեալ նառապանց զահամեժ ՚ի ծովին զնացին , առ ՚ի լուդ անցանել ՚ի մերձակայն ժայռ , զորոյ զկատար՝ փրկուրք խօրտակեալ ալեաց երեեցուցանէին փոքրու իմն բարձրացեալ քան զջուր :

Հնուեկով օրինակին նոցա մաիւն ես ՚ի փոքր հանգիսն , և ՚ի միում վայրիննի իջե ՚ի խորս անդնդոց . սակայն աջ Ամենակարողին՝ որոյ առանց հըրամանի և ոչ մազ մի ՚ի զլիսայ անկանի , կորզեաց զիս անտի և ձգեաց ՚ի ցամաք : Անդ ՚ի զյուխժայսին էր տեսանել և զոմանս ՚ի նառարեկեալ ընկերաց իմոց , այլ զես շատոնք մարս եզեալ

կոռուէին ընդ ամենի ալեաց - և ոմանք՝ առաջ,  
ծովակուր իջեալ էին ի խորս :

Ըստ արեալ, կթուցեալ և հսդմակած մնայաք  
առ առ օտառն լուսոյ, որ ընդ աղօտ ծագեալ, ե-  
ցոյց մեզ զկողին մի մեծ, յորոյ սարաւանդակին  
անկեալ էաք ի վերայ : Առաջին փոյթ մեր ու-  
րեմն եղեւ ժողովին զբեկորս նաւուն, որք անկեալ  
էին ի մեր կողմն : յորոյ միջին բարերազգապէս զը-  
տաք և զմին ի մեծ կայմից հանկերձ առասանօք :  
որով և կարսդ եղաք կազմել զւաստ և իջանել  
ի ցամտք : Սակաւիկ մի հեռի ի ծովէն սկսաք պե-  
ղել զերկիր, և՝ ով սքանչելեաց, իրրեւ քսան քայ-  
լիւք ի ծովեղերէն յերկու կանդնաչափ ի խորս-  
թենէ բղիւեաց ջուր անուշահամ ի յաւազոյն :

Յետանցուցանելոյ զսրապակ ջրոյ անցաք ի խըն-  
դիր ու տելեաց, սակայն ոչ յոյժ հեռի ի անդւու-  
ջէն տեսաք զոսկերս մարդոյ առ խարուկատ ան-  
ցուցելով : “ Անզաման է այս՝ մարդակերաց կըդ-  
զին, ” գոչեաց նաւապիսն, “ վասն որոյ զգոյշ պի-  
տի լինել անձին : ” Արդէն տեսիլն ահաւոր զգու-  
շացուցեալ էր զմեղ յառաջապոյն, և զի՞ թէ  
զէպ լինէր, անհնար էր մեզ անզէն զգէմ ունել  
յարձակման վայրազացս, վասն որոյ որոշեցաք զինի  
ժողովինոյ սակաւիկ մի մըզաց զառնալ փութա-  
նակի ի լսատախայտ մեր, և՝ ապաւինելով ի կա-  
խախնամողն, թողուլ զայն կառավարութեան ա-  
լեաց : Լաւ է անկանիլ ի ձեռոս Մարզասիրէն

Ասուուծոյ , քանի մորդկան անողորմից : Յու. շեղին  
ինձ աղանդաւ-որքն այնոքիկ , որոց համատարած  
սէր՝ ըստ միայութեան իւրեանց , ձզի առ առե-  
նայն ազանց հոգւոց փրկութիւն . և ցանկացայ զի-  
տել՝ եթէ զբարդ հաճէին ջարջ կամ Անսելմոս ,  
առաքելութիւն առ ազգ վայրնեացո այսոցիկ :

Ինչեւիցէ՝ զուզնաքեայ պաշար մեր շատ շոյտ  
չքանալով , անկաք միւս անգամ ՚ի վարանո և ՚ի վը-  
տանզ սովուլուկ կորստանն : Յայսմ միջոցի կենաց  
և մահու , փրկութիւն հոգւոյս անկաւ ՚ի միտու-  
ղի՝ թէ ոչ մարմինս , զնեւ հոգիս փրկեացի : Վասն որոյ  
մոտի ՚ի խորս մօածութեան , քննեցի զանցեալն ,  
զզջացայ վասն մեղացո , և թեթեաբեանեցի զխոց-  
մատան : Եւ ոչ այսչափ միայն՝ այլ և յորդորեցի  
զընկերակիցո իմ միարանել ընդ իս ՚ի մաղթանս ,  
և նուիրել զանձինս կամաց Ստեղծչին :

Դեռ կիսաս էին աղօթք . և ահա նշմարեցաք  
զատազաստ . ահա և նաւ աջողակ հոգմութուու-  
ցեալ առ մեզ : Խնդութիւն ընդ անակնեալո փըր-  
կութիւն ելից զսիրտ մեր անպատում ու ըախու-  
թեամբ . և երկիր պապտք անքուն Ականն՝ որ հըս-  
կէն ՚ի վերոյ ամենեցուն :



‘Օ անօթառիկն ։

Զի՞նի տպագրութեան լուաք ՚ի Յարզոյ բարեկաս-  
մե ու մեմնէ՝ հթէ յիշատակեալն մեր՝ յերես 120  
մատենիս, Հայոց Պրլից, կամ՝ ըստ Այլազգեաց,  
Արմինիըն Գալթ շինեալ է ՚ի Ներսիսէ Յովհաննի-  
ան Հայադրի վաճառականէն. և ոչ ՚ի Սուքիասայ,  
որոգէս զրեալ եմք. մասն որոյ՝ շնորհակալութեամբ  
ընկալեալ զուղղութիւնն, պարտ համարեցաք ընդ  
նմին ուղղել և զնոյն այսու ծանօթառթեամբ. ։





